ANAHIT, REVUE ARMÉNIENNE, LITTÉRAIRE ET ARTISTIQUE



ԱՆԱՀԻՏ

ՀԱՆԴԷՍ

ԱԶԳ. ԳՐԱԿԱՆ, ԳԵՂԱՐՈՒԵՍՏԱԿԱՆ

ԺԱ. ՏԱՐԻ 1909. ՅՈՒՆԻՍ – ՅՈՒԼԻՍ, ԹԻՒ 3, 4

ՓԱՐԻԶ

DIRECTEUR : A. TCHOBANIAN.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

«Միրէյօ»ի յիսնամեակը . . . . . Ա. ՀՕՊԱՆԵԱՆ 49
Բաժակը . . . . . ՖՐԵՏԵՐԻՔ ՄԻՍԹՐԱԼ 51
Ապաշխարութեան սաղմոս . . . . . » 51
Կարոս . . . . . » 52
Գեղօն առ լատին ցեղը . . . . . » 53
Մակալի . . . . . » 54
Կործանուածը (դրամա չորս արարուածով) . . . . ՇԻՐՎԱՆԶԱԴԷ 56
Երազ . . . . . (ԼԷՕՒԱՐՏԻ) Թարգմ. Հ. ԱՐՍԷՆ ՂԱԶԻԿԵԱՆ 68
Աղբիւրը լոյսին . . . . . ԴԱՆԻԷԼ ՎԱՐՈՒԺԱՆ 69
Իմ ցիշողութիւններս . . . . . (շարունակութիւն) ՏԻԿԻՆ ՀՐԱՉԵԱՑ 71
Գիւղակները . . . . . ԱՀԱՐՈՆ ՏԱՏՈՒՐԵԱՆ 91
Արմենակ Շահ-Մուրատեան 94
Նոր հրատարակութիւններ . . . . . Ա. Հ. 95

ԿՈՐԾԱՆՈՒԱԾԸ

Մեր այս թուով կը սկսինք հրատարակել մեծանուն գրագէտ եւ մեր պատուական աշխատակից ՇԻՐՎԱՆԶԱԴԷԻ անտիպ մէկ թատերգութիւնը, Կործանուածը։ Ժամանակակից հայ ազգային կեանքի ամենէն հրատապ հարցերը հոն կը պատկերանան, իսկական արուեստագէտի մը անկողմնակալ, անաչառ ու բարձրահայեաց տեսողութեամբը պարզուած։

Այս հզօր ու խորապէս յուզիչ գործը՝ Աբդիւռէ ու Պատուէ համբի վարպետին ամենէն գեղեցիկ արտադրութիւններէն մէկն է ապահովապէս։

ՇԷՔՍՓԻՐԻ

ԱՆՏՈՆԻՈՍ ԵՒ ԿԼԷՈՊԱՏՐԱ

Ի մօտոյ պիտի սկսինք հրատարակել Շէքսփիրի ամենէն հոյակապ խաղերէն մէկուն՝ «Անտոնիա եւ Կլէոպատրայ»ի հայերէն թարգմանութիւնը, կատարուած ձեռամբ մեր ներհուն աշխատակից Գ. Փառնակի։

ԲԱՑՈՒԱԾ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

ԱՆԱՀԻՏԻ

ՏԱՍՆՄԷԿԵՐՈՐԴ ՏԱՐԵՇՐՋԱՆԻՆ

Բաժանորդագրութիւնը պէտք է ԿԱՆԽԻԿ վճարել։

ԱՆԱՀԻՏ

ՀԱՆԴԷՍ

ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ, ԳԵՂԱՐՈՒԵՍՏԱԿԱՆ

ԺԱ. ՏԱՐԻ 1909 ՅՈՒՆԻՍ—ՅՈՒԼԻՍ ԹԻՒ 3-4.

„ՄԻՐԷՕ"Ի ՅԻՍՆԱՄԵԱԿԸ

Քանի մը շաբաթ առաջ, գրական աշխարհը տօնեց անօրինակ փառաւորութեամբ, փրովանսական մեծ քաղաքին՝ Արլի մէջ, Փրովանսի մեծ բանաստեղծ Ֆրետերիք Միսթրալի անմահ հրաշակերտին՝ «Միրէյօ»ի յիսնամեակը։

Փրովանսը ատենով անկախ թագաւորութիւն մը եղած է եւ ունեցած է իր ուրոյն բարբառն ու գրականութիւնը։ Իր բարբառը, «օք»ի լեզուն, նոյնիսկ աւելի կանուխ զարգացած, յղկուած է քան «օյլ»ի լեզուն, այսինքն արդի ֆրանսերէնին նախնական ձեւը։ Իր բանաստեղծութիւնը, թրուպատուրներու փափուկ քնարին վրայ մարզուած ու նրբացած, արուեստասէր շողշողուն Արքունիքի մը եւ դղեակներու մէջ մշակուած, աւելի առաջ քան ֆրանսական գրականութիւնը՝ ճաճանչած է մեծ փայլով եւ ազդած է նոյնիսկ հիւսիսային Ֆրանսայի եւ Իտալիոյ բանաստեղծութեան վրայ. Փեթրարքա աշակերտ մը եղած է Փրովանսի թրուպատուրներուն։ Բայց հիւսիսային Ֆրանսային վիճակուած էր քաղաքական յաղթանակը տանիլ Հարաւին վրայ։ Փրովանս կորսնցուցած է իր թագաւորութիւնը. եւ հետզհետէ իր ուրոյն գրականութիւնն ալ ժժգունած, տկարացած, եւ տեղի տուած է «օյլ»ի լեզուով գրականութեան։ Միսթրալի հոյակապ դերը եղաւ վերակենդանացնել «օք»ի լեզուն ու գրականութիւնը։ Այն հզօր ու վճիտ հանճարովը որով օժտուած էր, Միսթրալ կարող էր՝ Տոտէի, Արէնի եւ ուրիշ Հարաւցի գրագէտներու պէս՝ ֆրանսերէն գրականութեան յարիլ եւ անոր մէջ բռնել առաջին տեղերէն մին. գորովագին սիրով մը կապուելով իր փոքրիկ հայրենիքին հին յիշատակներուն, աւանդութիւններուն, երբեմն փառաւոր ու գեղեցիկ եղած լեզուին ու բանաստեղծութեանը, եւ նոյն ատեն՝ իրը նուրբ գեղեցկագէտ՝ ըմբռնելով թէ ի՛նչ ինքնատիպ ու մասնայատուկ գեղեցկութեան հանք մը կար շահագործելու՝ այդ լքուած բայց հարուստ հողին մէջ, Միսթրալ որոշեց իր ուժերը նուիրել փրովանսական գրականութեան վերածնունդին, եւ յաջողեցաւ։ «Միրէյօն», իր առաջին գործը, գլուխ-գործոց մը, փրովանսական բանաստեղծութեան մը ինքնուրոյն գոյութիւն մը վերստին ունենալու իրաւունքը արդարացուց լիովին։ Այդ քերթուածէն յետոյ, որ տիեզերական հռչակ մը ստացաւ, Միսթրալ հրատարակեց Քալենտալ դիւցազներգութիւնը, Ներբօ քերթողական քրոնիկը, Ռոնի fերթուածը՝ հայրենասիրական վիպերգը, Յովհաննա թագուհին՝ ողբերգութիւնը, Ոսկի կղզիներ՝ քնարերգական բանաստեղծութեանց հաւաքածուն, Ֆելիպրիժի գանձը, փրովանսական

լեզուի, պատմութեան, աշխարհագրութեան, բուսաբանութեան, տեղագրութեան, ֆաւանդութեանց հանրագիտական բառարան, եւ իր Ցիշատակները։ Այդ բազմաձեւ գործին մէջ, Միրէյոն կը մնայ միշտ ամենէն կատարեալ եւ ամենէն ընքոյշ ու հրապուրիչ արտադրութիւնը։ Անոր երեւումը ողջունուեցաւ Լամարթինէն խանդավառ յօդուածով մը, ուր Ֆրանսական բոմանթիզմին մեծ քնարերգուն սապէս կը խօսէր.

«...Բարի լուր մը պիտի տամ ձեզի այսօր. մեծ գիւցազներգակ բանաստեղծ մը ծնած է, ճշմարիտ հոմերական բանաստեղծ մը՝ մեր օրերուն մէջ յայտնուած, բանաստեղծ մը որ՝ ինչպէս Դեկալիոնի մարդիկը՝ Բրօի մէկ գայլախաղէն է ծնած. նախնական բանաստեղծ մը մեր անկումի դարուն մէջ. յոյն բանաստեղծ մը Ավինեոնի մէջ, բանաստեղծ մը որ գաւառաբարբառէ մը լեզու մը կը ստեղծէ ինչպէս Փեթրարքա ստեղծեց իտալերէնը. որ գոեհիկ կարճայէ մը կը հանէ երեւակայութիւնն ու ականջը զմայլեցնող պատկերալից եւ ներդաշնակ բարբառ մը, բանաստեղծ մը 25 տարեկան, որ՝ մէկ ցայտքով՝ իր երակէն կը բղխեցընէ՝ մաքուր ու ներդաշնակ ալիքներով, գեղջկական դիւցազներգութիւն մը, ուր Հոմերի Ոդիսականին նկարագրական տեսարանները եւ Դանթէսի ու Թլօքի անմեղօրէն սիրատարփ տեսարանները, քրիստոնէութեան սրբութիւններուն ու տխրութիւններուն խառնուած, երգուած են Լոնգոսի շնորհովը եւ Բիոսի կոյրին վեհափառ պարզութեամբը։»

Ժոսլէնի հեղինակին այս գնահատումը այնքան ճիշտ էր որքան խանդավառ։ Միրէյոն կ'արթնցնէր հոմերական քնարին շատոնց ի վեր մարած ոսկի հնչիւնը։ Եւ դասական արուեստի նմանողութիւն մը չէր ան. այն անհանդուրժելի «փասթիշ»ներէն չէր. որոնց մէջ յունական գեղեցկագիտութեան արտաքին գծերը կը կապկուէին իմաստակօրէն՝ առանց հոգին վերապրեցնելու. խառնուածքի, ցեղի, կլիմայի, դաստիարակութեան հանգիտութիւններով, եւ հանճարի ստեղծագործ կրակովը՝ Միթրալ իրականապէս կը վերակենդանացնէր հոմերական վճիտ, վեհ ու մարդկային բանաստեղծութիւնը։

Ոչինչ աւելի պարզ է քան Միրէոյի նիւթը. սիրոյ հասարակ պատմութիւն մըն է, որ կը սկսի քնքուշ հովուերգութեամբ մը, կ'անցնի դիւցազնական ու տռամական փուլերէ եւ կը վերջանայ եղերերգութեամբ։ Այդ պատմութիւնը առիթ եղած է բանաստեղծին՝ սեւեռելու խումբ մը տիպարներ ամուր ու վերջնական գծերով, նկարելու իր երկրին բնական այլազան տեսարանները, պատկերացնելու իր ժողովրդին բարքերը, սովորութիւնները, հաւատալիքները։ Ամէն ինչ այդ քերթուածին մէջ կը բղխի կեանքի աղբիւրէն, իրականութեան առողջ զգացումէն։ Բայց վէպ մը չէ գործը, կեանքը նոյնութեամբ օրինակելու չի ձգտիր՝ ինչպէս իրապաշտ վէպերը։ Քերթուած մըն է, կ'երգէ կեանքը. ու երեւակայութիւնը հոն կը խառնուի իրականութեան, բայց երեւակայութիւն մը որ իրական է՝ եթէ կարելի է այսպէս ըսել՝ որովհետեւ ժողովրդին հոգին զայն յօրինած է ու կենդանի դարձուցած (*)։

Ֆրանսական կառավարութիւնն ու ժողովուրդը միշտ ամենախորին յարգանքով՝ պաշարած են Միսթրալն ու իր գործը, քաջ ըմբռնելով որ այդ գրական ու ցեղային շարժման մէջ քաղաքական պառակտման վտանգ չկար, այլ գեղեցկագիտական հարստութեան մը յաւելումը՝ ֆրանսական ընդհանուր հայրենիքին համար։ Տօներուն որ Արլի մէջ կատարուեցան, փառաբանելու համար Միրէյոն ու Միսթրալը եւ Փրովանսի բանաստեղծութիւնը, ֆրանսական կառավարութիւնը, ամբողջ ֆրանսական մտաւորականութեան ներկայացուցիչները, օտար գրականութեանց ներկայացուցիչներու հետ, խանդով ու պատկառանքով մասնակցեցան։

Այս առթիւ կը հրատարակենք Միսթրալի քնարերգական էջերէն մէկ քանիին հայերէն թարգմանութիւնը։

Ա. Զ.

(*) Տեսնել՝ Ա. Զօպանեան, ուսումնասիրութիւն Ֆրէտերիմ Միսթրալի մասին, «Լումայ», 1905 օգոստոս-սեպտեմբեր, 1908 յունուար-ապրիլ։

ԲԱԺԱԿԸ*

Ահա՛ բաժակն, ո՞վ Փրովանսցիք.
Որ մեզ կուգայ մեր քաթալան եղբայրներէն.
Կարգով խըմենք միասին
Մաքուր գինին մեր հողին։

Բաժա՛կ սըրբազան
Ու յորդաղեղուն,
Հոսէ՛ լիալիր
Ու մատռլուակէ՛
Մեզ ուժեղներուն
Կորովն ու աւիւն։

Թերեւոյս վերջն ենք մենք հին
Ժողովրդի մ՚ազատ ու խրոխտ.
Եւ Ֆելիպրներն եթէ իյնան,
Գ՚իյնայ և ա՛զգը մերին։

Բաժա՛կ սրբազան, ևն.

Գամ թերեւս ալ՝ վերածընող
Ցեղի մ՚ծիլերն ենք առաջին,
Թերեւոյս մեր հայրենիքին
Մենք սիւներն ու պետերն ենք։

Բաժա՛կ սրբազան, ևն.

Հոսէ՛ մեզի երիտասարդ
Հասակին յոյսն ու երազներն
Եւ անցեալին յիշատակներն,
Հոսէ՛ հաւատքն ապագային։

Բաժա՛կ սրբազան, ևն.

Գիտակցութիւնն հոսէ՛ մեզի
Գեղեցիկին ու ճշմարտին,
Ու վայելքնե՛րը բարձրագոյն
Որ գերեզմա՛նը կը հեգնեն։

Բաժա՛կ սրբազան, ևն.

Քերթողական խանդն հոսէ՛ մեզ,
Որ մենք երգենք ինչ որ կ՚ապրի.
Զի ամբոստակն է անիկա
Որ մարդն Աստուած կը դարձընէ։

Բաժա՛կ սրբազան, ևն.

Փառքին համար հայրենիքին,
Դո՛ւք վերջապէս, մեզ մեղսակից,
Քաթալաննե՛ր, ո՞վ եղբայրներ,
Մէկտեղ ամենքս հաղորդըւինք։

Բաժա՛կ սրբազան, ևն.

(Ոսկի կղզիները)

*) Ֆելիպրիզմին — այսինքն Փրովանսցի տոմատէրաստուղներու (ֆելիպրներու) ընկերակցութեան շարժումը տարածուեցաւ Փրովանսէն անդին, մինչեւ Քաթալոնիա քաթալան ժողովուրդը, Փրովանսցւոց ցեղակից, լեզուակից, արդէն ինքն ալ իր ցեղային — ու նոյնիսկ քաղաքական — ինքնութիւնը պահելու ձգտումներ ունէր. փրովանսական վերածնութեան շարժումը ցնծութեամբ ողջունուեցաւ Քաթալոնիոյ մէջ եւ մտրակեց Քաթալանցներու հայրենասիրական գործունէութիւնը։

1861ին, քաթալանցի հայրենասէր մը, Վիքթոր Պալակեր, սպանիական կառավարութեան հրամանով աքսորուած, Նարպոնէն կ՚արձակէր քաղաքական կոչ մը, խնդրելով Փրովանսցւոց աջակցութիւնը՝ վերականգնիլ ցանկացող Քաթալոնիային համար. Փրովանսցիք փառաւոր ընդունելութիւն մ՚ըրին Պալակերին. հանդէսներ տուեցան Ֆոնսէկիւնեի, Վոլիւզի եւ Ավինեոնի մէջ, որոնց մասնակցեցան Պարսլոնցի չորս գրագէտներ։ 1867ին, Քաթալանցներ «Ֆելիպր»ներուն ուղարկեցին գեղաքանդակ արծաթ բաժակ մը։ Միաբրալ այդ առթիւ յօրինեց իր զմայլելի երգը՝ «Բաժակը»։

1) Այս բանաստեղծութիւնը գրուած է 1870ի ժրանիֆոֆրուսիական պատերազմի միջոցին։ Ինչքան ալ յարած՝ իր ցեղին, իր փրովանսական ֆիզիկական հայրենիքին, Միսթրալ միշտ սիրած է ժրանսական մեծ հայրենիքը, եւ անոր ջախջախումը խոր ցաւ պատճառած է իր սրտին. այդ ցաւն է որ երգած է այս բերթուածին մէջ։

. . . . . .

Տէ՛ր, յանուն ա՛յնքան քաջերու
Որ մեկնեցան
Ընայլայլ
Եւ արի, հրու և խոհուն,
Եւ որ կըռուի
Մէջ ինկան։

Տէ՛ր, յանուն ա՛յնքան մայրերու
Որ զաւկներուն համար իրենց՝
Քեզ կ՚աղօթեն.

Եւ որ ո՛չ գալ տարի , աւա՜ղ ,
Ո՛չ միւս տարին
Ա՛լ չը տեսնեն պիտի զանոնք ·

Տէ՛ր , յանուն այնքան կիներու
Որ երախայ մ'ունին փոքրիկ՝
Գիրկերնին ,
Եւ որ , խեղճերն , արցունքներով
Կը թրջեն հո՛ղը և սաւա՜նը իրենց
Անկողնոյն ·

Տէ՛ր , յանուն այն թշուառներուն ,
Ուժեղներուն ,
Մեռածներուն ,
Որոնք կորան Հայրենիքին համար 'ւ իրենց
Հաւատքին
Ու պարտքին ,

Տէ՛ր , այսքան մեծ աղէտներէ
Յետոյ և այսքան ցաւէ
'Ի արցունքէ ,
Այսքան քանդուած քաղաքներէ
Եւ թափուած այսքան քաջ ու սուրբ
Արիւնէ ,
Տէ՛ր , յետոյ այսքան փորձանքէ ,
Ու ջարդերէ ,
Հրդեհներէ ,
Մեր Ֆրանսային վըրայ այսքան սուգէ յետոյ
Ու մեր ճակտին վըրայ այսքան անարգանքէ ,

Տէ՛ր , գինեթափ ըրէ՛ այլևս արդարութիւնդ ,
Աչք մը նետէ՛
Մեր վըրայ ,
Ու վերջապէս ճիչը լսէ՛
Ընկճուածներուն ,
Խոցուածներուն ·
Տէ՛ր , չարիքին հեղինակները մենք չենք ,
Խաղաղութեան մեզի ճաճանչ մը ղըրկէ հոս ·
Տէ՛ր, մեր դատին դուն օգնութե՛ան հասիր , ու մենք վերըստին

Պիտի ապրինք
Ու սիրենք ։

(Ոսկի կոզիները)

ԿԱՐՕՏ

Ա.

Հեռո՛ւն գընաց իմ սիրականս անուշիկ ,
Եւ ես կուլամ,
Ցուսահատ ։

Անոր որ ինձ ըսէ թէ ո՞ւր է սիրականս անուշիկ,
Ինչքան կըրնամ՝ կուտամ խընջոյք
Ու նըւէր ։

Եթէ նոյնիսկ իմ սիրականս անուշիկ
Սիտերոնէն ու Սիսթրոնէն ալ աւելի
Հեռուն է ,

Եթէ նոյնիսկ իմ սիրականս անուշիկ
Միրամասէն , Սէն–Շամասէն ալ աւելի
Հեռուն է ,

Պատրաստ եմ շուտ ճամբայ ելլել, ո՜վ սիրականս անուշիկ ,

Իմին ձիուս վրայ հեծած ,
Քառարշաւ ։

Բ.

Չեզի ըսեմ թէ ի՞նչպէս է իմ սիրականս անուշիկ,
Որ դուք ճանչնաք երբոր էնոր
Հանդիպիք ։

Երբ տեղ մ'երթայ իմ սիրականս անուշիկ ,
Ճամբան ամբողջ էն յասմիկի բուրմունքով
Կը խընկէ ։

Երբոր բանի մը վրայ խնդայ իմ սիրականս անուշիկ ,

Զեփիւռը ջինջ երկընքին մէջ
Կը սուլէ ։

Երբ խօսք մ'ըսէ իմ սիրականս անուշիկ ,
Կաղամախներն ու թաւարծի շոճերը լուռ
Կը մընան ։

Երբ երգ մ'երգէ իմ սիրականս անուշիկ՝ ,
Կը բըռնըւի նոյնիսկ սոխակը մետաքսէ
Ցանցին մէջ ։

Գ.

Եթէ 'ւլայի Ամենակալն, ո՜վ սիրականս անուշիկ,
Հազա՛ր տարի քուկին քովի՛կըդ պիտի մնալ
Ուզէի ·

Եւ դեռ հազար տարի ալ , ո՜վ իմ սիրականս անուշիկ ,

Ես ուզէի պիտի սեղմել քու ձեռքդ , իրար
Սիրելով ։

Ցորմեհետէ դուն հեռացար , ո՜վ սիրականս անուշիկ ,

Յաճախ կ'ըսեմ արևուն՝ "Շո՛ւտ
Մար մըտիր„ :

Ա՛լ ինձ համար գիշերն երկայն է, սիրակա՛նս
անուշիկ,
Ա՛լ արշալոյսն ինծի համար չունի ծագում՝
Վեհաշուք :

Քու տարիքեդ աղջիկներուն, ո՞վ սիրականս
անուշիկ,
Ա՛լ շուրջպարե՛րը խօլագուարթ ինծի հրճուանք
Չեն ի տար :

Դ.

Քաղցր էր սիրել, ո՞վ սիրականս անուշիկ,
Վայրի վարդի թուփերուն մօտ ու շոճերուն
Շուքին տակ :

Բիբերուդ բոցն, ո՞վ սիրականս անուշիկ.
Կը բորբոքէ ուղեղը Նոյնիսկ Նավէլէն (1)
Աւելի :

Քու մէկ հատիկ քաղցրը պաչիկդ, ո՞վ սիրա-
կանս անուշիկ,
Աւելի մեծ արժէք ունի քան աղբիւրնե՛րը ոսկիի
'Ի արծաթի :

Ե.

Դիտէ՛ Վանթուրն, ո՞վ սիրականս անուշիկ.
Դիտէ՛ իր մեծ սարը ճերմակ.
Ձիւնապատ.

Ամրան սիւքին, ո՞վ սիրականս անուշիկ,
Ճերմակ ցըցունքն այդ պիտի 'լլայ
Կապուտակ :

Ա՛յդպէս ալ խոր իմ մորմոքէս, ո՞վ սիրականս
անուշիկ,
Տըխուր է սիրտս՝
Հալումաշ :

Եւ այդպէս ալ վերադարձովդ, ո՞վ սիրականս
անուշիկ,
Պայծառանայ պիտի սըրտի՛կըս իր բոլոր
Ցաւերէն.

(Ոսկի կոլգիները)

---

1) Փրովանսական գինիի մը անուն :

ԳԵՂՕՆ ԱՌ ԼԱՏԻՆ ՅԵՂԸ *)

Ոտքի ելիր, լատին ցե՛ղ,
Շուրջառին տակ արևուն.
Խաղողը թուխ՝ հընձանին մէ՛ջը կ'եռայ,
'Ի ահա ժայթքի պիտի գինին Աստուծոյ,

Ցըրուած մազե՛րըդ Թաբորի
Նըւիրական շունչերուն,
Դուն այն ցեղն ես լուսաւոր
Որ հըրճուանքով, խանդով կ'ապրի.
Դուն այն ցեղն ես առաքեալ՝
Որ դանդակնե՛րը կը ճօճէ.
Դուն փողն ես որ կը հռչակէ,
Դուն ձեռքն որ սե՛րմը կ'արձակէ :

Ոտքի ելիր, ևն.

Քու մայր-լեզուդ, այդ գետը մեծ
Որ եօթ ճիւղով կը հոսի
Եւ սէր ու լոյս կը սըփռէ,
Ձերդ արձագանգ մ'արքայութեան,
Լեզուդ ոսկի, ոսման աղջիկ
Արքայ-Ազգին, այն երգն է զոր
Պիտի կըրկնեն միշտ շըրթունքնե՛րը մարդկային,
Ցորքան բանին ուժը մընայ կենդանի :

Ոտքի ելիր, ևն.

Արդարութեան համար հոսած է ամէն կողմ
Քուկին արիւնդ ազնըւազարմ.
Հեռուն գացած են նաւորդներդ
Գըտնել աշխարհ մ'անծանօթ,
Մրտածումիդ տըրոփումովն
Հարիւր անգամ թագաւորներդ ես փըշրած..
Ա՜խ, ո՞վ՝ եթէ պառակտումնե՛ըդ չըլլային,
Կըրնար քեզի գերիշխել :

Ոտքի ելիր, ևն.

---

*) 1878ին. Մոնփէլիէի մէջ տեղի ունեցաւ՝ լատին ցեղին ի պատիւ մեծ մրցանանդէս մը՝ նախաձեռնութեամբ տը Բենքանա Խաթալան բանաստեղծին. Միսթրալի դեռատի ամուսինը Ֆելիպրիժին թագուհի հռչակուեցաւ այդ հանդէսին մէջ, եւ Վասիլ Ալեքսանտրի, Ռումէնեներու ազգային բանաստեղծը, որ ջերմ բարեկամ մը եղած էր միշտ Ֆելիպրիժին, « պսակաւոր » անուանուեցաւ. Միսթրալ որ կը նախագահէր, արտասանեց հոն իր հոյակապ **Գեղօնն առ լատին ցեղը** :

Վառելով ջա՛հըդ աստղերուն
Կայծերէն,
Մարմարին վրայ ու կտաւին
Դրոշմած ես դուն գեղեցկութի՛ւնը գերագոյն.
Դուն հայրենիքն ես դիցական Արուեստին,
Ամէն շընորհ քեզ՝ կ'ըզլխի,
Դուն աղբիւրն ես ցընծութեան,
Կըտրիճութի՛ւնն յաւերժական:

Ոտքի ելիր, ևն.

Քու կիներուդ պատկերներո՛վը մաքուր
Պանթէոններն են լեցուած.
Ցաղթանակներդ կամ արցունքներդ
Ամէն սիրտ թունդ են հանած.
Երբ դուն ծաղկիս՝ երկիրս ամբողջ կը ծաղկի.
Ամէն մարդ քու խենթութիւնովդ կը խենթենայ.
Եւ երբ քու փա՛ռքդ խաւարի,
Աշխարհ ամբողջ սուգ կը հագնի:

Ոտքի ելիր, ևն.

Քու ծովդ յըստակ, քու ծովըդ ջինջ,
Ուր ձեփ-ձերմակ կը փայլին ա՛նքան նաւեր,
Ոտքերուդ տակ կը խոպոպէ իր ասպարէ՛զը կակուղ,
Ցոլացնելով իր մէջ կապոյտն երկընքին.
Աստուած ինքն իսկ իր շողշողմա՛նը ծոցէն,
Հոսեց այս ծո՛վը միշտ ժըպտուն,
Որ իրարու պէտք է կապէ ֆ ժողովուրդնե՛ըդ թըխադէմ:

Ոտքի ելիր, ևն.

Ափունքներուդ վրայ արևոտ՝ կը բուսնի
Շիթենին, ծա՛ռ խաղաղութեան,
Եւ քու դաշտե՛ըդ կը պանծան
Որթատունկո՛վը փարթամ:
Ո՛վ լատին ցեղ, յիշելով
Քուկին անցեա՛լըդ մըշտաշող,
Ելի՛ր կանգնէ՝ դէպ ի յոյսն
Ու խաչին տակ եղբայրացի՛ր:

(Ոսկի կոզիները)

ՄԱԿԱԼԻ*)

Ո՛վ Մակալի, ո՞վ պաշտելիս,
Գլուխդ հանէ՝ դուրս պատուհանէդ,
Մըտիկ ըրէ՝ սա այգերգը՝
Ջուխակներով ու դափերով:

Վերը լեցուն է աստղերով.
Հոմն է դադրած.
Բայց տրժգունին պիտի աստղերն
Երբ քեզ տեսնեն:

—Այնքան քիչ հոգս է այգերգըդ
Որքան մըրմունջը ծառերուն.
Բայց ես երթամ խարտեաշ ծովուն
Մէջ օձաձուկ պիտի ըլլամ:

—Ո՛վ Մակալի, եթէ դուն ձուկն
Ըլլաս ջուրին,
Ես ալ կ'երթամ ձըկնորս կ'ըլլամ,
Քեզ կը բռնեմ

—Օ՜, եթէ դուն ձըկնորս ըլլաս
Եւ ուռկանե՛ըրդ դաս նետես,
Ես թեւաւոր թըռչուն կ'ըլլամ
Ու դաշտերուն վրայ կը թըռչիմ:

—Ո՛վ Մակալի, եթէ օդին
Թըռչունն ըլլաս,
Ես ալ կ'երթամ որսորդ կ'ըլլամ
Ու քեզ կ'որսամ:

—Եթէ դուն դաս վարմըդ լարես
Կաքաւներուն, թըռչնիկներուն,
Ես ծաղկած խոտ կ'ըլլամ ու լայն
Մարգերուն մէջ կը պահուըտիմ:

—Ո՛վ Մակալի, մարգրիտ-ծաղիկ
Եթէ ըլլաս,
Ես ալ վըճիտ ջուրը կ'ըլլամ,
Քեզ կ'ոռոգեմ:

—Եթէ դուն ջուրն ըլլաս վըճիտ,
Ես կ'երթամ մեծ ամպը կ'ըլլամ,

*) **Մակալիի երգը** «Միրէյո»ի ամենէն զմայլելի հատուածներէն մէկն է, գրուած ժողովրդական բանաստեղծութեան ոճով:

Ու այսպէս շո՛ւտ, շո՛ւտ կը մեկնիմ
Հեռո՛ւն, մինչև Ամերիկա։

—Ո՛վ Մակալի, եթէ հեռուն
Մեկնիլ ուզես,
Ես ծովու հով կ՚ըլլամ ու քեզ
Կ՚առնեմ կ՚տանիմ։

—Եթէ դուն հովն ըլլաս ծովու,
Ես ուրիշ կո՛ղմ մը կը փախչիմ,
Արեւուն վառ հուրքը կ՚ըլլամ
Որ սառոյցներ կը հալեցնէ։

—Ո՛վ Մակալի, արեւու շողք
Եթէ ըլլաս,
Ես ալ կանանչ մողէս կ՚ըլլամ,
Քեզ կը խրմեմ։

—Եթէ ըլլաս սաղմանդրը
Որ թաւուտին մէջ կը թաքչի,
Կ՚ըլլամ լուսի՛նը լերացած՝
Կախարդներուն ճամբայ ցուցնող։

—Ո՛վ Մակալի, եթէ պայծառ
Լուսին ըլլաս,
Ես ալ աղուոր մըշուշ կ՚ըլլամ,
Քեզ կը պատեմ։

—Բայց զիս մըշուշն եթէ պատէ,
Նորէն քու ձե՛ռքդ չեմ մընար.
Կ՚ըլլամ աղուոր վարդ կուսական,
Ու մացառին մէջ կը բացուիմ։

—Ո՛վ Մակալի, եթէ դուն վարդ
Ըլլաս աղուոր,
Ես թիթեռնիկ կ՚երթամ կ՚ըլլամ,
Քեզ կը պագնեմ։

—Ուրքան վազես, զիս հալածես՝
Երբէք ինծի չես հասնիրդ դուն.
Մեծ կաղնիի մը կեղեւով
Կը հագուիմ մութ անտառին մէջ։

—Ո՛վ Մակալի, եթէ դուն մեծ
Կաղնի ըլլաս,
Ես բաղեղի փունջ մը կ՚ըլլամ,
Քեզ կը գըրկեմ։

—Եթէ դուն զիս ուզես գըրկել,
Լոկ ծեր կաղնին գիրկըդ կը մնայ.
Ես մարապետ կ՚ըլլամ ճերմակ՝
Սէն-Պլէզի մեծ վանատան մէջ։

—Ո՛վ Մակալի, դուն մայրապետ
Եթէ ըլլաս,
Ես ալ կ՚ըլլամ խոստովանհայր,
Քեզ կ՚իմանամ։

—Եթէ վանքին մէջ ոտք կոխես,
Մարապետնե՛րը կը գըտնես
Որ չորս բոլորըս կը յածին,
Զիս պատանքի մէջ կը տեսնես։

—Ո՛վ Մակալի, եթէ դուն խեղճ
Մեռելն ըլլաս,
Ես այն ատեն հողը կ՚ըլլամ,
Քեզ կ՚ունենամ։

—Հիմա սկըսայ ես հաւատալ
Որ կատակով չես խօսիր դուն.
Աղո՛ր կըտրիճ, քեզ յիշատակ՝
Ա՛ռ սա մատնիս ապակիէ։

—Ո՛վ Մակալի, կեա՛նք կուտաս ինձ...
Բայց նայէ՛, քեզ
Երբոր տեսան, աստղերն ի՞նչպէս
Տրժգունեցան։

ՖՐԵՏԵՐԻՔ ՄԻՍԹՐԱԼ

Թարգմ. Ա. Զ.

ԿՈՐԾԱՆՈՒԱԾՔ

ԴՐԱՄԱ ՁՈՐՍ ԱՐԱՐՈՒԱԾՈՎ

ՀԵՂ. ՇԹՐՎԱՆՁԱԴԷԻ

ԳՈՐԾՈՂ ԱՆՁԻՆՔ

ՍԵՆԵՔԵՐԻՄ ՍԱՀԱՌՈՒՆԻ, 54 տարեկան։
ԿԱՏԱՐԻՆԷ, նրա կինը, 46 »
ԱՐՏԱՇԷՍ, նրանց որդին, 26 »
ԱՆԱՀԻՏ, նրանց դուստրը, 24 »
ԱԼԷՔՍԱՆԴՐ ԱԼՎԱՆԴԵԱՆ, 59 »
ՖԼՕՐԱ, նրա աղջիկը։ 21 »
ՏԻԳՐԱՆ, Արտաշիսի մտերիմ ընկերը, 27 տարեկան,
ՀՐԱՆՏ, Արտաշիսի ընկերը, 24 տարեկան։
ՆՈՅԻՄԶԱՐ, որի իսկական անունն է Անտոնինա Սկվարցովա, 23 տ.
ԱՐԱԶ ԱՐԱԶԵԱՆ, Արտաշիսի նախկին ընկերը։ 28 տարեկան։
ՆԱԶԱՆԻ, Սահառունիների վաղեմի խոհարարուհին, 48 »
ԴԱՆԻԷԼ, Ալվանդեանների ծառան։
ՍՕՖԻԱ, » աղախինը։
Մի ոստիկանական պաշտօնեայ։

Գործողութիւնը կատարւում է Կովկասի մեծ քաղաքներից մէկում 190.. թուին։
I, III եւ IV Արարուածները կատարւում են Սահառունիների, II-դը Ալվանդեանների տանը։

Ներկայացման եւ թարգմանութեան իրաւունքը վերապահուած է հեղինակին։

ԱՐԱՐՈՒԱԾ ԱՌԱՋԻՆ

Տեսարանը ներկայացնում է Սահառունիների բնակարանը։ Մի բաւական մեծ սենեակ, որ թէ հիւրասենեակ է եւ թէ սեղանատուն։ Աջ պատի մէջ երկու դռներ, որոնցից աւանսենի կողմինը տանում է Անահիտի սենեակը, իսկ խորինը Սենեքերիմի եւ Կատարինէի ննջարանը։ Ծորքի պատի մէջ դէպի ձախ դռներ, որ տանում են նախասենեակ եւ խոհանոց, դէպի աջ՝ ձաշի սեղան, բոլոր պահարան ամանեղէնի համար։ Ձախ պատի մէջ, ուղիղ Անահիտի սենեակի դռների հանդէպ, դռներ, որ տանում են Արտաշիսի սենեակը։ Մի փոքր հեռու, դէպի խորը՝ գրասեղան, բոլոր աթոռներ։ Աջ պատի երկու դռների միջեւ սովորական ծխամուր։ Այս ու այնտեղ հասարակ աթոռներ։ Դռները վարագոյրներ չունին։ Պատերին կախած են հայ հին եւ նոր նշանաւոր մարդկանց պատկերներ եւ «Ոգի Հայաստանի» կոչուած նկարը, ձեռագործ։

ՏԵՍԻԼ I

Սենեքերիմ, Կատարինէ եւ Նազանի։

Սենեքերիմ. (Ալեխառը, կարճ խուզած միրուքով ու մազերով մարդ է, պարզ դէմքով եւ շատ հասարակ ձեւերով։ Բիչ նեարդային է, շարժուն, դիւրագրգիռ, դիւրահաւան, շուտ ուրախացող, շուտ տխրող։ Շատ է ծխում։ Հագած է ծալած օձիքով շապիկ, սեւ փողկապ, շալն. հնաձեւ պիջակ, երկայն ժիլէ, յայն պանթալօն։ Կարդալ-գրելիս դնում է պենսնէ, որ միշտ կախած է վզովը։ Վարագոյրը բարձրանալիս նստած է գրասեղանի մօտ, գրում է,

ոտիպ ոտիպ բաց թողնելով գլխից վեր ծխախոտի ծուխը)։

Կատարինե. (Նիհար, գեղեցիկ, բայց ոչ մեղմ դեմքով կին է, հարուստ եւ ֆիչ ալեխառը մազերով։ Հագնում է սովորաբար սեւ հագուստ, հասարակ, բայց ոչ անճաշակ։ Վարագոյրը բարձրանալիս ձաշի սեղանի քով զուանում է թեյի բաժակներն ու մաքրում)։ Նազանի՛, Նազանի՛։

Նազանի. (Գալիս է խորքի դռներից աւելը ձեռին, թեւերը ծալած։) Հրամանքս, խանում ջան։

Կատարինե. Սամավարը տար, նորից եռացրու ու բեր։ Արտաշէսը զարթնել է ու հագնուում է։

Նազանի. Էս սրհաթիս։ (Աւելը յենում է պատին, սամավարը տանում է խորքի դռներով։)

Կատարինե. (Աւելորդ բաժակները տեղաւորում է պահարանում, սեղանի վրայ թողնելով մի մաքուր բաժակ, հաց, պանիր, կարագ եւ մեղր։ Յետոյ կանգ է առնում եւ յանդիմանական հայեացքով նայում Սենեքերիմին։)

Սենեքերիմ. (Շարունակ գրելով) Զգում եմ հայեացքդ, զգում եմ։ Այն վրիս վրայ ազդում է ինչպէս անձրեւի սառը կաթիլներ, ո՛վ յաւիտենական վերահսկիչ իմ կեանքի։

Կատարինե. Պէտք է բազար գնալ։

Սենեքերիմ. (Գրիչը դնում է սեղանի վրայ)։ Ընը, վերջացրի, անզուգական կողակիցդ իմ, այժմ կարող եմ ծառայել քո տնտեսական հրամաններին։ (Վեր է կենում։)

Կատարինե. Երանի դիտենամ, էլի ում դէմ ես գրոտում տաքացած։

Սենեքերիմ. Ինչպէս միշտ, իմ ազգի թշնամիների դէմ։ Առաջ մեզ մեղադրում էին, թէ վաշխառուներ եւ հարստահարիչներ ենք հրէաների պէս։ Այժմ նոր ագռաւներ են եկել եւ նոր տեսակի ղրղռոցներ սկսել։ Այժմ ասում են թէ հայ հասարակութիւնն ընդունակ չէ բարձր իդէալներով ոգեւորուելու։ Ահա այս անգամ այս տեսակ հայատեացների հէրն եմ ուզում անիծել։

Կատարինե։ Թո՛ղ, Աստուած սիրես, թո՛ղ այդ կռիւները, բաւական է։

Սենեքերիմ. Ուշ է, Կատարինէ, ուշ է, Այսպէս սկսել եմ կեանքս, այսպէս էլ պիտի վերջացնեմ։ (Մոտենում է եւ մի ձեռով գրկում Կատարինեին։) Բայց հիմա Կատարինէ, քէֆն ինն է։ Մի պաշտպան եւ օգնական է եկել, որ թշնամիների մի ամբողջ բանակի դէմ պիտի կռուի ինձ համար։

Կատարինե. (Մեղմիկ ազատւում է Սենեքերիմի գրկից, հեգնաբար) Ո՞վ է այդ պաշտպանը։

Սենեքերիմ. (Ձեռը հանդիսաւոր մեկնելով դէպի ձախի դռները) Այ, նա՛, իմ միակ ժառանգը, որ երէկ վերադարձաւ հայրենիք գիտութեան պաշարով եւ թարմ ուժերով։ Համոզուած եմ, որ նա իմ տուած կրթութիւնը չի մոռացել, որ նրա սիրտը վառ է բուռը սիրով դէպի իւր ազգը։

Կատարինե. Աստուած սիրես, մի՛ անիծիր իմ որդուն։

Սենեքերիմ. Իա՛, ի՞նչպէս թէ անիծել։ Ազգը սիրել ու ազգին ծառայել կընշանակէ անիծուա՞ծ լինել։

Կատարինե. Ազգը սիրել կարելի է։ դա ամենքիս պարտքն է։ բայց ազգին ծառայելը յիմարութիւն է։

Սենեքերիմ։ Ի՞նչ ես դատարկ դատարկ դուրս տալիս, կին...

Կատարինե. Ես երկնային պատիժ կըհամարեմ ինձ համար, եթէ Արտաշէսը գնայ քո ճանապարհով։

Սենեքերիմ. (Հեգնօրէն) Այսքի՛նքն...

Կատարինե. Այսքինքն, եթէ, իւր բաղդը թողած, ընկնի հասարակական գործերի ետեւից։ Ի՞նչ ես վաստակել դու, ի՞նչ, որ նա էլ վաստակի։ Սրան հարուածիր գրչով, նրա պակասը երեսովը տուր խօսքով, այստեղ կռուիր հարուստների հետ, թէ ազգին ինչու մեծ մեծ փողեր չեն տալիս, այնտեղ հայհոյիր հոգեւորականներին, թէ ծոյլ են, ագէտ են եւ այլն։ Ի՞նչ գիտեմ, քսան ու եօթ տարի է ապրում ենք ինչպէս կեանքի խորթ զաւակներ, կէս կուշտ, կէս քաղցած, միշտ դողալով վաղուայ համար, միշտ հոգալով մի փոր հացի մասին։ Ահ, եթէ իմանայի, որ իմ կեանքն այս է լինելու, կը փթէի իմ հօր տանը եւ քեզ հետ չէի ամուսնանալ։

Սենեքերիմ. (Լռել է, զանազան նեարդային անհամբեր շարժումներ անելով) Շարունակի՛ր։ Շարունակի՛ր ինչո՞ւ դադարեցիր։ Ես խօսմ միշտ համբերութեամբ լսում եմ քո ազատաբի երգը։

Գիտեմ դու ինչ էիր սպասում ինձնից. երբ ամուսնացար հետս։ Դու փափագում էիր, որ փաստաբանի թղթապանակը կռնատակիս դրած, դռնէ դուռն ընկնէի, սրան չոյէի. նրան չողոքորթէի՝ կլիենտներ ձեռք բերելու։ Դու աւելի երջանիկ կըհամարէիր քեզ, եթէ ես, մի անգամ արդարին պաշտպանելով, հինգ անգամ գողերին ու սրիկաներին պաշտպանէի, ստէի, խարէի, խարդախէի։ Այո՛, այն ժամանակ դու աւելի կուշտ կապրէիր եւ աւելի կըյարգէիր ինձ։ Բայց ես չ՚արի այդ։ Ես ընտրեցի ուսուցչի համեստ արհեստը, որ իմ խելքի եւ ընդունակութիւնների չափով ծառայեմ իմ խեղճ ժողովրդին։ Ես իմ գրիչն ազատեցի դատաստանական խարդաւանքների ճահճից եւ նուիրեցի ազգին։ Լաւ արի թէ վատ, թող ուրիշներն ասեն, բայց ես այսօր էլ չեմ զղջում, չեմ զղջում, չեմ զղջում։

Կատարինէ. Իսկ Արտաշէսը չի անիլ քո արածը։ Ոչ. նա չի հետեւիլ քո օրինակին. ես վստահ եմ։

Սեմեմերիմ. Օհ՜, ես գիտեմ, շատ լաւ գիտեմ։ Եր դու, չես թողնիլ։ Դու ամեն կերպ պիտի աշխատես խլել նրան ինձնից. դարձնել մի սովորական, ողորմելի քաղաքացի կուշտ փորով, ճարպոտ ուղեղով եւ դատարկ զգացումներով։ Բայց ես յուսով եմ, որ Արտաշէսը քո ասածը չէ, որ նա իմն է եւ ոչ քոնը։

Կատարինէ. Էհ, եթէ նա խելօք է, ոչ իմը կըլինի եւ ոչ քոնը, այլ կըպատկանի ինքն իրան։

Սեմեմերիմ. Հա՜, այդպէս ասա։ Ես դէմ չեմ։ Թող նա ջրհեղեղի ինձ, ուրիշ ճանապարհով օգնի իւր ազգին։ Բայց օգնի։ Լսի՛ր, Կատարինէ՛ լաւ լսի՛ր։ (Մօտենում է եւ ձայնը ցածացնելով) Վերջերս ինչ-որ նոր քամիներ են գալիս հիւսիսից։ Հայ երիտասարդները սկսել են վրացիներին հետեւելով, վարակուիլ այդ քամիներով, այնքան այնպիսի գաղափարներով, որ միանգամայն հակառակ են մեր հասարակութեան շահերին։ Եթէ Արտաշէսն էլ վարակուել է, այն ժամանակ, ՕՕ՜, այն ժամանակ ահա իմ իսկական դժբաղդութիւնը։ Ես չեմ դիմանալ այդ բանին։ Ես Արտաշէսին կը համարեմ անձնական թշնամի։ Հասկանում ես, որովհետեւ, որովհետեւ, Կատարինէ՛, ինձ համար անձ եւ գաղափար միեւնոյն բաներն են։ Ես իմն ասացի։ Այժմ հրամայիր, ինչ ուզում ես։

Կատարինէ. Դնա բազար ու գնիր միս, ձուկ եւ ուրիշ ինչ-որ հարկաւոր է։ Այսօր Արտաշէսի ընկերները գալու են, ես ուզում եմ նրանց ճաշի պահել։

Սեմեմերիմ. Իսկոյն։ Բառորդ ժամ չանցած կը վերադառնամ։ Ես պէտք է մի լաւ խօսեմ Արտաշէսի հետ։ (Վերցնում է գրասեղանի վրայից դայնեզր գլխարկը եւ գնում խորքի դռներով։)

Կատարինէ. (Նայում է Սեմեմերիմի ետեւից) Երեխայ, միշտ երեխայ...

ՏԵՍԻԼ II

Կատարինէ եւ Անահիտ

Անահիտ. (Ներս է մտնում աջ կողմի առաջին դռներից։ Հագնուած է պարզ, մաքուր եւ ոչ անճաշակ։ Դէմքի վրայ նկատելի են անդադար աշխատանքի հետք եւ յոգնածութիւն։ Սակայն շարժումներն աշխոյժ են։) Աշակերտուհիներս տեսրակներն ուղղեցի, այսօր ոչն է, կարող եմ քեզ օգնել, մայրիկ։

Կատարինէ. (Թախտի բարձերն ուղղելով) Հարկաւոր չէ։ բաւական է որ դրսերում աշխատում ես, գոնէ տանը հանգստացիր։ Խեղճ աղջիկ։ դու յոգնեցիր այս հինգ տարուայ մէջ շատ դասեր տալուց։ Բայց մի մտածիր, եղբայրդ ուսումն աւարտել է ու կեկել. այժմ հերթը նրանն է աշխատելու։ (Ուրախ) Ա՜հ, այսուհետեւ հեռո՜ւ ինձնից հոգսեր, մենք բաղդաւոր կը լինենք։ Այնպէս չէ՞, Անահիտ։

Անահիտ. Ես երբէք մեղ անբաղդ չեմ համարել, մայրիկ, մանաւանդ ինձ։

Կատարինէ. (Դարձեալ տխրելով) Է՜հ, ասում ես էլի, մտիկ՞ արա հայելուն, յետոյ խօսիր։ Երէկ չէ մէկէլ օրը քսան ու չորս տարիդ լրացաւ եւ դու դեռ ծնողներիդ տանն ես։

Անահիտ. (Շառագունելով) Մայրի՛կ...

Կատարինէ. Լաւ, լաւ, մի՛ նեղանար, այսօր ես միտք չունիմ սիրտ նեղացնելու։ (Ուրախ) Լսի՛ր, Անահիտ, առաջ էլ ես միշտ մտածում էի Փլօրայի մասին, բայց երէկուանից դէս նա աչքիս առջեւից չի հեռանում։ Կարծես, նա արդէն իմ հարսն է եւ ես նրա սկեսուրը։

Արդէն ես երեւակայում եմ Ալվանդեանների հարստութիւնը Արտաշիսի ձեռքում։

Անահիտ. Մայրիկ, օրիորդ Ալվանդեանի հարստութիւնը չէ գրաւիչ. այլ ինքը։ Ֆլորան հիանալի աղջիկ է, ե՛ւ խիրուն, ե՛ւ խելօք, ե՛ւ պարկեշտ։

Կատարինէ. Ես շատ ուրախ եմ, որ դու նրան այդպէս հաւանում ես։ Ուրեմն, օգնիր ինձ, որ այս բանը գլուխ բերենք Արտաշիսի համար։

Անահիտ. (Վիրաւորուած) Մա՛յր, ես խնդրում եմ քեզ միանգամ առ միշտ՝ ազատել ինձ այդ տեսակ դերերից։ Ես միջնորդ լինել չեմ կարող։

Կատարինէ. Լաւ, քիչ կոտրատուիր, Ֆլորան խամ ուրիշ չէ. ընկերուհիդ է։ Նա քեզ սիրում է եւ միշտ մի բան անելիս առաջ առաջ քո խորհուրդն է հարցնում։

Անահիտ. Ֆլորան այնքան խելօք է եւ այնքան անկախ, որ այդ տեսակ մի լուրջ բանի համար ոչ ոքի խորհուրդը չի հարցնիլ։

Կատարինէ. Իսկ հայրը կարո՞ղ է նրա վրայ ազդել։

Անահիտ. Հայրը նրան այնպիսի ազատութիւն է տուել, որպիսին ունին մեր օրիորդներից շատ քչերը։ Միայն Ֆլորան այնքան յարգում է իւր հօրը, որ հազիւ թէ ամուսնանայ հակառակ նրա կամքի։

Կատարինէ. Որ այդպէս է, ես շատ էլ վախ չունիմ։ Ալէքսանդր Ալվանդեանը Արտաշիսին մանկութիւնից է սիրում։ Կարծեմ նա մի օր ինչ-որ ակնարկութիւն էլ արել է հօրդ մօտ։ Բայց հայրդ ուշադրութիւն չի դարձրել։ Ա՜խ, այդ մարդն իւր ընտանիքի թշնամին է։

Անահիտ. Մայրիկ, դու միշտ յարձակվում ես հայրիկի վրայ։ Այդ անարդարութիւն է։ Հայրիկն Ալէքսանդր Ալվանդեանի մօտիկ բարեկամն է, սիրուած եւ յարգուած նրանից։ Բայց նա այնքան ազնիւ եւ անշահասէր մարդ է, որ անձնական բարեկամութիւնն երբէք չի շահագործիլ ո՛չ իւր եւ ո՛չ իւր ընտանիքի համար, այնպէս որ այս կողմից հայրիկին չը պիտի մեղադրել։ Բայց ապահով կաց, Ֆլորան միայն կամուսնանայ այն երիտասարդի հետ, որին կըհաւանէ եւ կըսիրէ։

Կատարինէ. Արտաշիսին նա կըհաւանի էլ, կըսիրէ էլ։ Ա՜հ, Անահիտ, եւ ո՞վ չի հաւանիլ նրան։ Տեսնո՞ւմ ես ինչպէս է փոխուել։ Նրա սիրուն հասակը, գեղեցիկ ճակատը, կրակոտ աչքերը, գանգուր մազերը, բոլորը, բոլորը կատարեալ են։

Անահիտ. Այդ քո ճաշակով։ Ֆլորան ունի իւր սեպհական հայեացքը։ Այսպէս թէ այնպէս, եթէ իմ կարծիքը որ եւ է նշանակութիւն ունի, խորհուրդ կըտայի, մայրիկ, թողնել այդ գործը իրան, Արտաշիսին։ Դու կարող ես նրան բարկացնել, հայրիկին էլ գրգռել։

Նազանի. (Ներս է բերում սամովարը, դնում է սեղանի վրայ եւ, աւելը վերցնելով, կանգնում է խորքի դռների առջեւ։)

Կատարինէ. Ինչ-որ էլ լինի, ես պէտք է Արտաշիսի ուշադրութիւնը դարձնեմ Ֆլորայի վրայ։

Անահիտ. Դո՛ւ գիտես։ Սո՜ւս, գալիս է։

ՏԵՍԻԼ III

Նոյնք, Արտաշէս, յետոյ Սենեբերիմ

Արտաշէս. (Դալիս է ձախ կողմի դռներից։ Մտախոհ, խեղացի դէմքով, շալն ճակատով, առողջ կազմուածքով. թանձր ու գանգուր մազերով երիտասարդ է։ Հագած է սեւ գունի պիջակ ու պանթալօն, կապոյտ ուսանողական շապիկ՝ որի վրեն մէջքին կապած է սեւ մետաքսեայ գօտի երկայն ծոպերով։) Բարի լո՞յս։ (Արագ քայլերով մօտենում է ճաշի սեղանին, նստում է եւ ոտը ոտի վրայ ձգում։)

Կատարինէ. Բարի լոյս իմ դօքտեօրին։ Հըմ, լա՞ւ քնեցիր։ (Սկսում է Արտաշիսի համար թէյ ածել։)

Արտաշէս. Հիանալի։ Եօթ օրուայ անքուն ճամբորդութիւնից յետոյ փափուկ անկողինն ինձ համար նեկտար էր։ Հապա, պատմեցէք ձեր կեանքից։ Երէկ ժամանակ չունեցանք երկար խօսելու։ (Առնում է մօրից շիմ բաժակը եւ դնում իւր առջեւ։)

Նազանի. (Սիրով նայել է Արտաշիսին) Բոյիդ դուրբան, կը թողնե՞ս, որ օթաղդ սրբեմ։

Արտաշէս. (Ցեռ նայելով) Օհ, Նազանի, բարի լոյս, բարի լոյս։ (Վեր է կենում, Նազանու ձեռը սեղմում է եւ յետ է գալիս) Ինչպէ՞ս ես, լա՞ւ ես։

Նազանի. (Շփոթուած եւ զգացուած) Աստուած քեզ կեանք տայ, աղա։

Արտաշես. Աղա՞։ Չէ՛, Նազանի, այդ չեղաւ, ինձ ուղղակի անուանիր Արտաշէս։ Աւելը թող այնտեղ, եկ նստիր։ Ուզում քեզ հետ մի քիչ զրոյց անել. ես ինքս իմ սենեակը կը սրբեմ։

Կատարինէ. (Սաստիկ զարմացած Արտաշիսի վարմունքից) Ինչպէ՞ս թէ դու կը սրբես, Գնա, Նազանի, գնա բանիդ։

Նազանի. (Տակաւին շփոթուած) Խի՞ պիտի դու սրբես, Նազանու ձեռները չորացե՞լ են։ (Գնում է ձախ կողմի դռներով։)

Կատարինէ. Մի՞թէ կարելի է ծառայի հետ այդպէս վարուիլ։

Արտաշես. Ինչո՞ւ չի կարելի։ (Թէյ է խմում)

Կատարինէ. Նա քո ընկերն է թէ հաւասարը։ Մեղը ու կարագ կեր։

Արտաշես. Ինձ համար բոլոր մարդիկ հաւասար են։ Դէհ. Անահիտ, ասա է. ի՞նչ ես լռել։ Դու հիանալի նամակներ էիր գրում ինձ։ Զարմանալի գիտես դէպքերը հանգամանօրէն նկարագրել։ Ես քո մի քանի նամակներից կազմել եմ թղթակցութիւններ մայրաքաղաքի լրագիրների համար։ Վաթսուն ռուբլի վարձ եմ ստացել, կէսը քեզ է պատկանում։ (Հաց ու պանիր է ուտում։)

Կատարինէ. Ի՞նչ, դու էլ ես գրում լրագրներում։ (Վերցնում է Արտաշիսի բաժակը նորից լցնելու։)

Արտաշես. Երբեմն։

Կատարինէ. Մի՛ արա. որդի, գրելուց խեր չըկայ։ Հայրդ ի՞նչ շահեց. որ դու ինչ շահես։ (Բաժակը դնում է Արտաշիսի առջեւ) Հա. ինչո՞ւ մեղր ու կարագ չես ուտում։ Կե՛ր. (Անանները մօտեցնում է Արտաշիսին։) Ցատկապէս քեզ համար ենք առել։

Արտաշես. Մայրիկ, կարծեմ դու ինձ դեռ երեխայ ես համարում։

Կատարինէ. Որդին մօր համար միշտ երեխայ է։ Սպասիր, ես քեզ համար իւղապատառ կը պատրաստեմ։ (Ուզում է պատրաստել։)

Արտաշես. (Ժպտալով) Թո՛ղ. մայր, դու կատարեալ դայեակ ես ուզում լինել ինձ համար։ Երեւակայիր, Անահիտ, գիշերուայ ընթացքում երեք անգամ մտաւ սենեակս, որ տեսնի քնած եմ թէ արթուն։ Ես. ի հարկէ. քնած ձեւացայ։

Կատարինէ. (Անհանգիստ) Ի՞նչ, ուրեմն, դու լաւ չե՞ս քնել։

Արտաշես. (Ծիծաղելով) Դէէ դէ. բաներս փչացրի։

Անահիտ. Այդ արդէն չափազանցութիւն է, մայրիկ։

Կատարինէ. Լռի՛ր. դու ի՞նչ գաղափար ունես մայրական զգացման մասին։ (Արտաշիսին) Թէյդ խմիր. կը պաղի։

Արտաշես. (Կատակով) Օ՜հ. դու ինձ կը սպանես, մայրիկ։ Դէհ. աչքիս վրայ. ի՞նչպէս կը հրամայես խմել. գցա՞ծ. թէ՛ կծովի. բաժակո՞վ. թէ՞ պնակով։ (Լուրջ) Մայրիկ, եթէ ուզում ես սիրտս շահել, այդ չէ միջոցը։

Կատարինէ. Բաս ո՞րն է, ասա, որդի. որ իմանամ։

Արտաշես. Թող ինձ անուշագիր, բոլորովին անուշագիր։ (Վեր է կենում։) Դէ ես կերայ էլ, խմեցի էլ. բաւական է։ Ո՞ւր է հայրիկը։

Կատարինէ. (Դժկամակութեամբ ոտքի է կանգնում եւ սկսում է սեղանի վրայի բաները ժողովել ու պահարան դնել։) Գնաց բազար. քո հիւրերի համար ուտելեղէն գնելու։

Արտաշես. Իմ հիւրերի համար։ Մի՞թէ ես հիւրեր եմ հրաւիրել։

Անահիտ. Ներիր. այս անգամ ես մայրիկի կողմն եմ։ Նա ուզում է քո ընկերներին պատուել ճաշով։ Դու իրաւունք չունիս նրան այդ բաւականութիւնից զրկելու։

Արտաշես. Թող այդպէս լինի, բայց ի սէր Աստծու, թողէք այդ չինական ձեւերը։ Առ հասարակ ես ձեզ խնդրում եմ իմ մասին չը հոգալ։ Այնպէս կարծեցէք, որ ես իսկի չեմ էլ եկել Ռուսաստանից։

Կատարինէ. (Ծիծաղելով) Այդ խելօք խելօք խօսելը համալսարանո՞ւմն ես սովորել։ Ի՞նչպէս թէ չես եկել, քանի որ եկել ես։

Արտաշես. (Լուրջ) Եկել եմ, բայց էլի շուտով պիտի գնամ։ Ես ժամանակաւոր հիւր եմ այստեղ։

Կատարինէ. Շատ ուրախ եմ, որ հանաք անելը չես մոռացել։

Արտաշես. Ես հանաք չեմ անում։ Ես կը մնամ այստեղ ամենաչատը մի շաբաթ կամ տասն օր, յետոյ պիտի գնամ եւ այս անգամ . . . գուցէ երկար ժամանակով։ (Երեսը դար-

ձրնում է յուզմունքը թագցնելու համար։)

Լռություն։

Կատարինե. (Նայել է Արտաշիսին երկարատև հայեացքով։) Լսեցի՞ր, Անահիտ։

Անահիտ. Այո՛, մայրիկ, նա կատակ չի անում։

Արտաշես. Մի՛ ընտելացիր ինձ, մայր։ Որքան սառը վարուես ինձ հետ, այնքան հրաժեշտը թեթև կը լինի թէ՛ քեզ եւ թէ՛ ինձ համար։

Կատարինե. (Անանը, որ բռնած ուներ ձեռքում, ընկնում է յատակի վրայ եւ փշրվում։) Արի՛ ու երազին մի՛ հաւատա։ Երէկ գիշեր դու մի մեծ գետի ափումն էիր, ես միւս ափում։ Կանչում էի քեզ, կանչում, դու չէիր լսում...

Անահիտ. Ինչո՞ւ այդպէս վախեցար, մայրիկ։ Նա գնում է, էլի կըգայ։ Երեւի, դեռ քննութիւնները չի վերջացրել։

Կատարինե. Ո՛չ, ո՛չ, Անահիտ, նրա խօսքերի մէջ ինչ-որ խորհրդաւոր չեչտ կայ։ Մայրական սիրտը խաբել անհնարին է։ (Խորը նայում է որդու երեսին) Կարելի՞ է իմանալ քո գնալու պատճառը։

Արտաշես. Եթէ թոյլ կրտաս սուտ չասել — ոչ, չի կարելի։ (Բայլում է։)

Կատարինե. Ուրեմն իմ բոլոր յոյսերը զո՞ւր էին, ուրեմն, հինգ երկար տարիներ աչքս ճանապարհին չը պիտի՞ սպասէի քեզ, ուրեմն իմ երջանիկ երազները քո մասին ծո՞ւմ են ընկնում։ Ասա՛, ունի՞ս դու որդիական սէր։

Արտաշես. Ես ունիմ զօրաւոր սէր դէպի մի մեծ պարտականութիւն։ Բանի որ այդ պարտականութիւնը կատարուած չէ, չեմ կարող պատկանիլ ոչ միայն իմ ծնողներին, այլեւ ինքս ինձ։

Կատարինե. Լսում ես, աղջի, ես ոչինչ չեմ հասկանում։ Բացատրիր ինձ, ի՞նչ է ուզում ասել։

Անահիտ. Մայրիկ, նրա ասածն ինձ համար էլ մի հանելուկ է։ (Կոտրած անանի փշրանքը ժողովում է, տանում դուրս խորքի դռներով եւ իսկոյն լեռ է գալիս։)

Արտաշես. Մայր, մի՛ ստիպիր ինձ ասել այն, ինչ-որ չունիմ իրաւունք ասելու։ Մի՛ ստիպիր նոյնպէս ստելու։ Ես զզվում եմ ամեն տեսակ ստերից։

Կատարինե. (Թուլացած նստում է) Դու այնպիսի մի հարուած տուեցիր ինձ, որ աշխարհը գլխիս մթնեց։ Հինգ տարի սպասել եւ վերջը ա՞յդ լսել։ Արտաշէ՞ս, Արտաշէ՞ս, դու սիրտ չունիս։

Արտաշես։ (Հառաչում է ծանր) Թող այդպէս լինի։ Ներիր ինձ, ես պիտի մի քանի կարեւոր նամակներ գրեմ։ (Բայլերն ուղղում է դէպի ձախի դռները։)

Կատարինե. (Ուշքը ժողովելով, արագ ոտքի է կանգնում) Ո՛չ, կա՛ց։ Այդ ինչո՞ւ այդպէս ծանր հառաչեցիր։ Ես ուզում եմ իմանալ քո հոգսը։ Կեանքս տակն ու վրայ մի՛ արա։ Ինչո՞ւ համար ես փախչում ծնողներիդ տնից։ Ինչնութի՞ւն ունիս։

Արտաշես. Ո՛չ։

Կատարինե. Բեզ քշո՞ւմ են այստեղից։

Արտաշես. Ո՛չ։

Կատարինե. Սիրահարուա՞ծ ես։

Արտաշես. (Դրգռուած) Ո՛չ, ո՛չ ո՛չ, հազար անգամ ո՛չ։ Մա՛յր, աղաչում եմ քեզ, մի գցիր ինձ նեղը քո անհանգիստ հարցերով։ Ես ճշմարտութիւնն ասել չեմ կարող. իսկ ստել չեմ ուզում, չեմ ուզում, չեմ ուզում։ (Ուզում է գնալ)։

Կատարինե. (Առաջն առնելով) Որդի, ինչո՞ւ ես նեղանում. ախար ես մայր եմ, դու իմ միակ որդին ես։ Ինչո՞ւ ես թագցնում ինձնից քո հոգսերը։

Արտաշես. Ժամանակին ամեն բան կիմանաս, մայրիկ, հանգիստ կաց։ Իսկ առ այժմ մի՛ աշխատիր ազդել իմ սրտի վրայ։ Այնտեղ կան զգացումներ, որոնց դու չես կարող փոխել։

Կատարինե. Այդ զգացումները աւելի թանգ են քան քո մա՞յրը։

Անահիտ, (Տեսնելով, որ մոր հարցերը ձրնշում են Արտաշիսին) Մայրիկ, ինչո՞ւ համար ես այդքան զօրում։ Տեսնում ես, որ չի ուզում ասել։

Կատարինե. (Բարկացած) Մի՛ խառնուիր. քո բանը չէ։ (Արտաշիսին) Ասա՛, աւելի թանգ են քան քո մա՞յրը։ Ասա, ես մայր եմ, հասկանո՞ւմ ես, մայր։

Արտաշես. (Դառնացած եւ գրգռուած) Իսկ ուրիշները մա՞յր չե՞ն, իսկ իմ ընկերները քարի՞ց են ծնուել։ Մայրեր կան որոնց թշուառութիւնը դու երեւակայել չես կարող։

Մայրեր կան, որոնց առջեւ դու ունիս մի խոշոր պարտականութիւն։ Ահա այդ պարտականութիւնն է, որ ես յանձն եմ առել կատարել... եւ պիտի գնամ կատարելու։

Սենեքերիմ. (Դուրս է գալիս խորքի դռներից, անկատելի կանգնում է շեմքի վրայ եւ սկսում է ականջ դնել)։

Կատարինե. Ի՞նչ ես ուզում ասել, որդի, քանի գնում, այնքան դու անհասկանալի ես դառնում։

Արտաշես. Բայց ի՞նչ կարող եմ ես ձեզ հասկացնել, քանի որ ձեր աչքերը չեն տեսնում, թէ ի՞նչ է կատարվում ձեր շուրջը։ Ի՞նչ կարող եմ բացատրել, երբ ձեզ համար միայն նա է թանգ, որ մերձ է ձեր ականջին, երբ ձեր սրտերը չեն կարողանում ամփոփել իրանց մէջ աւելի բարձր զգացում, քան մայրական սէրը։

Սենեքերիմ. (Ուրախանալով, մեկուսի) Ա՜ա, ասա՛, որդի, ասա՛։

Արտաշես. (Աւելի ու աւելի ոգեւորուելով) Կոյրեր էք դուք, որ մայրական սէր էք տեսնում այնտեղ, ուր եսամոլութիւնն է տիրում իւր ամբողջ ուժով։ Ձեր հասկացած մայրական սէրը մի ախտ է, որ միշտ մաքառել է բարձրագոյն սիրոյ դէմ եւ ջլատել է շատ ուժեղ հոգիներ։ Ոչ, հեռու պիտի փախչել նրանից, որպէս զի աւելի եռանդով եւ աւելի արթուն մտքով ծառայել իսկական սիրոյն։ Ես կը ստորանամ իմ աչքում, եթէ յանուն որդիական սիրոյ փախչեմ իմ պարտականութիւնից։ Այն վեհ գործից, որ այնքան զոհեր է տարել եւ դեռ պահանջում է...,

Սենեքերիմ. (Ուրախութեան նշաններ անելով) Ճիշտ է, ճիշտ է, տառապեալ ժողովրդի սուրբ գործից։

Կատարինե. Ի՞նչ պատահեց քեզ, որդի, ո՞վ քեզ վիրաւորեց, որ այդպէս բարկանում ես։ (Հանդարտ ղալիս է)։

Անահիտ. (Մի կողմ քաշուած, նայում է վերք եղբօրը եւ ձեռքերը հօրը, որին նկատել է միայն ինքը։) Մայրիկ։

Արտաշես. Լաց, արտասուք. միշտ մի եւ նոյն զէնքը հոգիները թուլացնելու համար։ Ահա ինչո՞ւ ես չէի ուզում գալ այստեղ։ Մայր, հերիք է, ի՞նչ կայ. կերթամ, էլի մի օր կը գամ։ Ի՞նչ կարիք կայ լաց լինելու։ Դէ՛, հերիք է, ասում եմ ա՛խ, մի՛ աշխատիր գալ-խիցս վռնտել գաղափարներ, որոնք այնտեղ հաստատուել են առ միշտ։ Բաւական է։ Շիկացրած երկաթը դժուար է արցունքներով սառցնել։ Մայր, թող, որ իմ ուխտը հաստատ մնայ, իմ երդումն անխախտ։ Մի անգամ, որ պարտականութիւնը կանչել է ինձ, պէտք է գնամ, պէտք է գնամ, պէտք է գնամ։ Բաւական է, ասում եմ։ Դէ լաւ, լաց եղիր որքան կամենաս, եթէ հեղեղ անգամ դառնայ քո արցունքը, չի կարող իմ ճանապարհը կապել։ (Դնում է ձախ կողմի դռներով)

ՏԵՍԻԼ IV

Նոյնք առանց Արտաշիսի

Սենեքերիմ. (Առաջ է գալիս ոգեւորուած) Որդին իմն է, իմը։ Իմ ցանածը ծլել է, ծաղկել եւ պտուղներ է տալիս։ (Դառնալով դէպի այն դուռը, որով Արտաշէսը գնաց) Օրհնուի քո եկած ճանապարհը, աւելի օրհնուի այն ճանապարհը, որով պիտի գնաս։ (Դառնալով կնոջն ու աղջկան) Ի՞նչ էք մայր ու աղջիկ քարացած մնացել։ Չը լսեցի՞ք նրա խօսքերը։ Այդ ոսկի խօսքերը պիտի դրոշմուած լինին իւրաքանչիւր հայ երիտասարդի սրտում։ Անահիտ, չե՞ս հպարտանում քո եղբօրով։ Ինչ-որ հայրդ քարոզել է խօսքով ու գրչով, նա ուզում է կատարել գործով։ Կին, տեսնո՞ւմ ես ինչ որդի ունիս։ «Շիկացրած երկաթը դժուար է արցունքով սառցնել։» Եւ դու այդ խօսքերից յետոյ դարձեա՞լ լաց ես լինում։ Ցիմար ես, յիմար, ուրիշ ոչինչ։ Որդիդ որոշել է ծառայել մայրենի ժողովրդին, եւ դու լա՞ց ես լինում։ Ա՜ա՛, ի՞նչ կասես, Անահիտ, ինչո՞ւ ես լռում։

Անահիտ. (Մտազբաղ) Հայրիկ, ես աշխատում եմ հասկանալ Արտաշիսի միտքը։

Սենեքերիմ. Հասկանալ, հը, ինչ անհասկանալի բան ասաց նա։ Նա յիշեցրեց իմ երիտասարդութիւնը, երբ մի այսպիսի օր հօրս հետ կռուեցի եւ տնից փախայ։ Նա ինձ նոր կեանք ներշնչեց։ Ահ, ինչ սխալուած եմ եղել ես, կարծելով, թէ Ռուսաստանը հայ երիտասարդների մէջ սպանում է ազգային զգացումը։

Կատարինե. (Աչքերը արեւի եւ կատաղի նայում է Սենեքերիմին։) Հերիք է, խելագար, հերի՛ք է...

Սենեֆերիմ. Ա՛հ, ո՛չ,՝ հերիք չէ։ Մարդուկեանքում այսպիսի երջանիկ օրեր հազիւ են պատահում։ Խելագար եմ, այո՛. գիտեմ. ոգեւորուում եմ։ Ի՞նչ անենք, մայրս ինձ այսպէս է ծնել։ Բայց դու ինձ նախանձում ես, կատարինէ, այդ պարզ է։ Որովհետեւ Արտաշէսն իմն է եւ ո՛չ քոնը։ Որովհետեւ առիւծը չի ուզում քո թեւերի տակ հապրիլ։ Ողորմելի՛, ինչ էիր սպասում. որ նա վաղուանից սկսի լրագրներում յայտարարել՝ այս ինչ բժիշկն ընդունում է այս ինչ ժամերին. եկէ՛ք, եկէ՛ք. ռուբլիներ բերէք, որ ձեզ խվերին Երուսաղէմ ուղարկի։ Դու պահանջում էիր, որ նա դառնայ մէկն այն եսամոլներից, որոնց դէմ ես այնքան կռուել եմ։ Հա. հա. հա, գիտեմ. դու նրա համար մինչեւ անգամ հարսնացու էլ ես պատրաստել։ Ինչո՞ւ չէ, Ֆլորան սիրուն աղջիկ է. համակրելի, պարկեշտ, հարուստ. օ՜. մանաւանդ հարուստ։ Բայց չեղա՞ւ. աա չեղաւ. նեռդ բարին դիպաւ։ Արծիւը չի ուզում աղաւնի դառնալ եւ իւր բունը հաստատել քս կատուրի տակ։ Նա թռչում է հեռու. հեռու, բարձր ու բարձր։ Եւ ես ուրախ եմ. օհ. անսահման ուրախ։

Կատարինէ. Անսիրտ. անհոգի. անխելք, բաւական է փրփրել, ինձ էլ լսիր. որդիդ ձեռքիցդ գնում է։

Սենեֆերիմ. (Տակաւին ոգեւորուած) Աա, ի հարկէ, գնում է. բայց ո՞ւր. հասկանո՞ւմ ես. արդեօք։ Նա գնում է մի տառապեալ ժողովրդի գերկը. ուր գնում են նրա ընկերները։ Նա ուխտ ունի. չը լսեցի՞ր. երդում։ Հասկանում եմ. նա բժիշկ է։ իսկ այնտեղ բժիշկների մեծ կարիք կայ, ես հարիւր	ան գամ գրել եմ այս մասին։

Նազանի. (Դուրս է գալիս ձախ կողմի դռներից երկայն աւելը ձեռքին եւ գնում է դէպի խորքի դռները։)

Սենեֆերիմ. Գնա խոհանոց. Նազանի, ես գնել եմ ամեն բան։ Բոլոր շնորքդ գործ դիր եւ ամենաընտիր կերակուրները պատրաստիր։ Այսօր Սենեքերիմ Սահառունին ուրախութիւն ունի։

Նազանի. Աչքիս վրայ։ (Գնում է խորքի դռներով։)

Կատարինէ. Լսի՛ր, գիժ, լսի՛ր, հարբած առանց խմելու. եթէ քո գլխի վրայ Աստուած ու կրծքի տակ խիղճ կայ, մի՛ կործանիր իմ որդուն։ Նա իմ միակ յոյսն է, չունիմ ուրիշը, պահի՛ր նրան այստեղ. մի՛ թողնիր գնալու. ապա թէ ոչ՝ կը փոշիմանես, շատ կը փոշիմանես։ (Արագ քայլերով գնում է խորքի դռներով։)

Սենեֆերիմ։ (Ետեւից ձայնով) Լսո՞ւմ ես, Անահիտ։ Նա ինձ փոքրացրել է. ուզում է որդուս էլ փոքրացնել։ Բայց յուսով եմ, որ այդ չի յաջողիլ։ Աա, տրամադրութիւնից պիտի օգտուել։ Իսկոյն պէտք է գրել մի յօդուած «չիկացրած երկաթ» վերնագրով։ (Մօտենում գրասեղանին։)

Անահիտ. Բայց, հայրիկ, ինձ թւում է, որ դու Արտաշիսի ասածները սխալ հասկացար։

ՏԵՍԻԼ V

Սենեֆերիմ, Անահիտ, Ֆլորա, յետոյ Կատարինէ

Ֆլորա. (Գալիս է խորքի դռներից։ Սիրուն, վայելչակազմ օրիորդ է. կիրք ու կենդանի ձեւերով. որ զերծ են կոկետութիւնից։ Հագնուած է հարուստ. պարզ, ճաշակով։ Ձեռքն ունի մի գեղեցիկ խաչ) Այ քեզ նորութիւն։ Արտաշէսն եկել։ Ես այդ չը գիտէի։ Նազանին ասաց։ Շնորհաւորում եմ, սիրելիս։ (Համբուրվում է Անահիտի հետ)։ Պարոն Սենեքերիմ, թոյլ տուէք ձեզ էլ շնորհաւորել։ (Մօտենում է եւ աշխոյժով սեղմում Սենեֆերիմի ձեռքը։)

Սենեֆերիմ. (Դեռ չի նստել գրասեղանի քով) Շնորհակալ եմ, Ֆլորա, շնորհակալ եմ։ Դու իրաւունք ունես ինձ շնորհաւորելու։

Ֆլորա. Ես էլ նոր լուր եմ բերել քեզ համար. Անահիտ։ Դիտեմ որ քեզ կուրախացնի։ Հայրս այսօր ձեր ուսումնարանին նուիրեց հազար ռուբլի։

Անահիտ. Այդ իսկ որ շատ ուրախալի լուր է։ Մեր ուսումնարանը մեծ կարիք ունէր։ Շնորհակալութիւն խեղճ աշակերտուհիների կողմից։

Սենեֆերիմ. (Նստելով գրասեղանի քով) Ալէքսանդրը մեր օրինակելի բարեգործներից մէկն է։ Եւ ես շատ ուրախ եմ, որ նա իմ բարեկամն է։

Ֆլորա՝. Բայց ես քեզ վրայ բարկացած եմ, Անահիտ։ Դու ժողովարարութիւն ես անում Հայաստան վերադարձող գաղթականների հա-

մար եւ համարձակվում ես ինձ մոռանալ։ Ամո՛թ քեզ։

Անահիտ. Ես քեզ այնքան եմ ձանձրացրել իմ դիմումներով, որ այլ եւս ամաչում եմ։

Ֆլորա. Օհո՛, «ձանձրացրել եմ», կարծես, քեզ համար ես դիմում։ (Բաց է անում բազկից քաշ արած խակը եւ այնտեղից փող դուրս բերելով տալիս է։) Ահա՛, ես հայրիկից վերցրի իմ բաժինը։

Անահիտ. (Հաւրեելով փողը) Երկու հարիւր բուբլի։ Կըտամ մեր գանձապահին, նա քեզ անդորրագիր կուղարկի։ (Դնում է պահարանի մէջ։)

Ֆլորա. Այժմ դիմենք գործի։ (Մի ձեռով գրկելով Անահիտին, սկսում է նրա հետ անցուդարձ անել։) Այդպէս, ուրեմն, եղբայրդ եկել է։ Երեւակայում եմ, որքան փոխուել է։ Բայց ո՞ւր է։

Անահիտ. Զբաղուած է. շուտով, երեւի, դուրս կըգայ։

Ֆլորա. Զբաղուած է, օհ՜, ի հարկէ, չէ՞ որ այժմ բժիշկ է. դոքտոր։

Սենեֆերիմ. Անահիտ, էլի ո՞վ է ձեռք տուել գրասեղանիս։

Անահիտ. Ոչ ոք, հայրիկ։

Սենեֆերիմ. (Թերթերը ֆրֆրելով) Բաս ո՞ւր է իմ «Բարոյական լիլլիպուտներ» անուանով յօդուածը։ Ահա՛ գտայ։ (Պենսնեն դնելով, ընկրտում է կարդալ։)

Անահիտ. Հայրիկ, մենք քեզ խանգարո՞ւմ ենք։ Դնանք իմ սենեակս, Ֆլորա։

Սենեֆերիմ. Ո՛չ, ոչ, մնացէք այստեղ։ Ես չեմ պարապում, այլ այնպէս։ Ինձ հաճելի է ձեզ լսել։

Ֆլորա. Ասա է՛, Անահիտ, չա՞տ ես ուրախ։ Ի հարկէ, մի հատիկ եղբայր ունենալ, հինգ տարի չը տեսնել եւ յանկարծ մի օր տեսնել։ Ես եղբայր չունիմ, բայց զգում եմ ինչ ասել է քրոջ սէրը։

Սենեֆերիմ. (Ձեռագիրը գրչով ուղղելով) Դու էլ ունէիր, Ֆլորա, դու էլ ունէիր եղբայր։ Երեք տարեկան էիր, երբ նա մեռաւ բկացաւից։ Գավրեալը մի սիրուն տղայ էր կապոյտ աչքերով, գանգուր մազերով։

Ֆլորա. Ես յիշում եմ նրան երազի պէս։

Անահիտ. Ես էլ։ Միտս է, նրա սպիտակ դագաղը դուրս տանելիս՝ հանգուցեալ մայրդ ուշաթափուեց։

Սենեֆերիմ. Ճիշտ այնպէս, ինչպէս Ալէքսանդրը եկեղեցում ընկաւ Թեւերիս վրայ Ովսաննայի դիակը դուրս տանելիս։ Ալէքսանդրը սիրում էր իւր կեանքի ընկերուհուն։ Ովսաննայի մահը նրա համար սոսկալի հարուած եղաւ։

Անահիտ. Հայրիկ, թողնենք այդ խօսակցութիւնը. Ֆլորան տխրում է։

Սենեֆերիմ. (Ցեռ նայելով) Ա՜ա, ի՞նչ, տրխրո՞ւմ է։ Ես չեմ թողնել, արգելուած է։ Այսօր մեր տանը տօնախմբութիւն է։

Կատարինե. (Գալիս է խորքի դռներից, հագուստի թեւերն ուղղելով։) Ֆլորա՜։

Ֆլորա. (Անմիջապէս տխրութիւնն անցել է) Ա՜հ, տիկին Կատարինէ, աչքդ լոյս, շնորհաւորում եմ։ Հաւրուրվում է) Վերջապէս ձեր փափագին հասաք։

Կատարինե. (Հառաչում է, բայց աշխատում է ուրախ ձեւանալ։) Այո, սիրելիս, հասայ... գլխարկդ վերցրու, նստիր։ Այսօր դու մեզ մօտ ես ճաշում։ Արտաշէսի ընկերները պիտի գան։

Ֆլորա. Ուրախութեամբ կրծանօթանամ Արտաշէսի ընկերների հետ։ Բայց ճաշի չեմ կարող մնալ. դուք գիտէք, տիկին Կատարինէ, որ հայրիկս առանց ինձ երբէք չի ճաշում։

Կատարինե. (Ցածր ձայնով եւ խորհրդաւոր) Գալիս է։

ՏԵՍԻԼ VI

Նոյնք եւ Արտաշէս

Արտաշէս. (Գալիս է արագ քայլերով ձախ կողմի դռներից, ձեռքին երկու ծրար։) Անահիտ, այստեղ մօտիկ փոստարկղ կա՞յ։

Անահիտ. Այո, ուղիղ մեր տան դէմ ու դէմ։

Արտաշէս. Տար այս նամակները եւ քո ձեռքով գցիր։

Անահիտ. (Առնում է ծրարները եւ գում խորքի դռներով։)

Ֆլորա. Ցարգանքներս մեր մեծապատիւ դոքտորին։

Արտաշես. (Նոր միայն նկատելով Ֆլորային։) Ա՜ա, օրիորդ Ֆլորա, ներողութիւն։ (Ձեռ է տալիս բարեկամաբար) Ի՞նչպէս էք, իմ նախկին աշակերտուհի։ Աւարտեցի՞ք գիմնազիան։

Ֆլորա. Արդէն երկու տարի է։

Կատարինէ. Եւ ի՞նչպէս. ոսկէ մեդալով։ Ֆլորան ամբողջ գիմնազիայի աչքն էր...

Ֆլորա. (Հեգնօրէն) Եւ իմ դուրս գալուց յետոյ գիմնազիան կուրացել է։ Տիկին Կատարինէ, դուք միշտ ինձ չփոթեցնում էք։

Արտաշես. Ի՞նչպէս է ձեր հայրը, օրիորդ։ Մի ժամանակ նա ինձ սիրում էր։

Կատարինէ. Նա այժմ էլ քեզ սիրում է եւ միշտ հարցնում է քո մասին։ Դու պարտաւոր ես առաջին վիզիտդ նրան անել։

Սենեֆերիմ. (Միշտ գրաղուած գրասեղանի քով։ Մեկուսի։) Ըհը, թռչնորսը թակարդը գրեց։ (Ցեռ է մտիկ անում պենսնեի վերեւից։) Տեսնե՞նք։

Արտաշես. Մայրիկ, ես վիզիտներ անելու մտադրութիւն չունիմ։

Սենեֆերիմ. (Զարախնդութեամբ, մեկուսի) Ըհը, կերա՞ր... (Երեսը դարձնում է դէպի գրասեղան։)

Կատարինէ. Բայց մի՞թէ չես կամենալ տեսնել հօրդ բարեկամին։

Արտաշես. Այդ իմ բարոյական պարտքն է։ Ես միշտ յարգել եմ պարոն Ալվանդեանին։ (Հրաւիրելով Ֆլորային նստել, շարունակում է նրա հետ խօսել ցածր։)

Սենեֆերիմ. Ալէքսանդրին պիտի միշտ յարգել. նա ազգասէր հայ է։

Անահիտ. (Վերադառնում է խորհի դռներից յուզուած եւ, մօտենալով, շշնջում է Սենեֆերիմի ականջին։)

Սենեֆերիմ. (Վախեցած) Մի՞թէ։ (Արագ քայլերով գնում է խորհի դռներով։)

Կատարինէ. (Տեսնելով, որ Արտաշէսը սիրալիր խօսակցում է Ֆլորայի հետ ուրախացել է) Անահիտ, համոզիր Ֆլորային, որ ճաշի մնայ։ (Ինչ-որ վերցնում է պահարանից, գնում խորհի դռներով եւ դարձեալ յետ է գալիս։)

Ֆլորա. (Ոգեւորուած) Մի՞տ է, Անահիտ, ինչպէս մի երեկոյ Արտաշէսը մեզ վախեցրեց։ Նա իւր սենեակում դասեր էր պատրաստում, մենք այստեղ թէյ էինք խմում։ Յանկարծ լսեցինք նրա գոռոցը. «Վրէ՜ժ, վրէժ պէտք է առնել այդ գազաններից»։ Մենք վազեցինք նրա սենեակը եւ ինչ տեսնենք։

Անահիտ. Դլուխը սեղանի վրայ դրած, հեկեկում է։

Արտաշես. (Մոռայղ) Ցիշում եմ ես այդ երեկոն։ Դա այն գազան գաւառապետ Դուրգաղվի պատմութիւնն էր, որ կարդացի ընկերոջս նամակում, ինձ վրայ ազդեց այնպէս։ Նա մի գիւղի բնակիչներին ամբողջ օր պահել էր անձրեւի տակ չոքած եւ յետոյ ծեծելով սպանել էր երկու ծեր գիւղացիների։

Կատարինէ. Այդ տեսակ բաները երեխայութիւնից ազդում էին քեզ վրայ։

Սենեֆերիմ. (Ցեռ է գալիս խորհի դռներից նկատելի շփոթուած։) Արտաշէս, այստեղ եկ։

Արտաշես. (Մօտենում է հօրը։)

Սենեֆերիմ. (Շշնջիւնով ինչ-որ ասում է Արտաշիսին։)

Կատարինէ. (Զբաղեցնում է Ֆլորային։) Ինչպէ՞ս ես հաւանում Արտաշիսին։

Անահիտ. (Հեռուից անհանգիստ նայելով հօրն ու եղբօրը։) Մայրիկ, զգո՞յշ։

Սենեֆերիմ. (Ցածր ձայնով) Այդ ի՞նչ է նշանակում։

Արտաշես. Ինչի՞ մասին էին հարցնում։

Սենեֆերիմ. Ո՞րտեղից ես եկել. ե՞րբ, քանի՞ ժամանակ պիտի մնաս։

Արտաշես. Դատարկ բան է, մի՛ անհանգստանար. սովորական ոստիկանական հարց ու փորձ է... (Նորից մօտենում է Ֆլորային։)

Կատարինէ. Արտաշէս, ճշմարիտ չէ՞, որ Ֆլորան շատ է փոխուել։ Մտիկ արա, դու այսպիսի սիրուններ շա՞տ ես տեսել քո Ռուսաստանում։

Ֆլորա. (Կարմրելով) Տիկին Կատարինէ, եթէ այդպէս խօսէք, ես այլեւս ձեր տուն չեմ գալ։ (Վեր է կենում։)

Սենեֆերիմ. (Կատաղած) Կին, զգոյշ խօսիր։

Արտաշես. (Լուրջ եւ խիստ) Մայրիկ, ես քեզ արգելում եմ այդ տեսակ խօսակցութիւն իմ ներկայութեամբ։ Նստեցէ՛ք, օրիորդ. այդ մի անզգոյշ դարձուած էր։

Կատարինէ. (Վշտացած եւ ամաչելով) Դէ լաւ, ի՞նչ ասացի, որ ամէն կողմից յարձակվում էք վրէս։ Դուք խօմ օտարներ

չէք, մանկութիւնից էք ճանաչում միմեանց։

Անահիտ. Ա՛հ, կարծեմ գալիս են։ (Շտապով գնում է խորքի դռներով։)

ՏԵՍԻԼ VII

Նոյիմ, Տիգրան, Հրանտ եւ Նոյիմզար.

Տիգրան. Նեղ դեմքով, հանկարծ ձեւերով երիտասարդ է. մաքուր հագնուած։) Բարով ձեզ։ (Արտաշիսին ձեռ է տալիս, միւսներին խաղաղավարի գլուխ թեքելով։)

Հրանտ։ (Բաւական երկայն խրճնուած մազերով, նեղ ճակատով, լայն կզակով եւ խորն ընկած վառ, անհանգիստ աչքերով երիտասարդ է։ Հագնուած է շատ անփոյթ։ Անփոյթ են եւ նրա ձեւերը, երբեմն նոյն իսկ կոպիտ։ Ողջոյն, ընկեր։ (Ամուր թափով սեղմում է Արտաշիսի ձեռը եւ հազիւ ուշադրութիւն է դարձնում միւսների վրայ։)

Նոյիմզար. (Մտնում է ներս միւսներից ուշ, Անահիտի ուղեկցութեամբ։ Շիկահեր, կապոյտ աչքերով, մի փիչ տղամարդային, բայց ոչ կոպիտ ձեւերով օրիորդ է։ Հագած է հասարակ ասուեայ պարզ սեւագոյն շրջազգեստ, տղամարդի օձիք, փողկապ, պարզ գլխարկ առանց փետրի կամ ծաղիկների։) Բարեւ ձեզ։ (Արտաշիսի ձեռը սեղմելով, ընդհանուրին գլուխ է տալիս։)

Արտաշես. (Հասարակ ձեւով ներկայացնելով) Իմ ընկերները։ Իմ ծնողները ու քոյրը։ Օրիորդ Ալվանդեան։

Միմեանց բարեւում են։

Անահիտ. (Հիւրերին աթոռներ է տալիս։)

Ոմանք նստում են, ոմանք կանգնած մնում։

Հրանտ. (Անփոյթ ընկղմվում է թախտի վրայ։)

Կատարինէ. (Տիգրանին) Դուք տիկին Վարվառէ Ներսիսեանի որդին չէ՞ք։

Տիգրան. (Բաղամարի) Այո, տիկին։

Կատարինէ. Աւարտեցի՞ք ձեր ուսումը։

Արտաշես. Երկու ֆակուլտետ—բնագիտականը եւ իրաւաբանականը։

Սենեքերիմ. (Հրանտին) Ինձ թւում է, որ ես ձեզ մի տեղ տեսել եմ։

Հրանտ. Անշուշտ երկու գաբատավոյների մէջ։

Սենեքերիմ. Ո՛չ, ես ձեզ տեսել եմ մի բաղմամարդ ժողովում։ Դուք ճառ էիք ասում։ Շատ տաքացած էիք խօսում, բայց բովանդակութիւնը մոռացել եմ։

Հրանտ. Սարսափելի անհրաժեշտութեան մասին։ Ինձ ուրիշ նիւթ չի հետաքրքրում։ Ծխախոտ ունի՞ք։

Սենեքերիմ. Համեցէ՛ք։ (Առաջարկում է ծխախոտի տուփը։)

Հրանտ. (Ծխախոտը վերցնում է եւ վառում Սենեքերիմի առաջարկած լուցկուց, ոչ մի նշանով շնորհակալութիւն չը յայտնելով։)

Անահիտ. (Որ ցածր խօսակցում էր Նոյիմզարի եւ Տիգրանի հետ) Այո, օրիորդ, ուսուցչուհի եմ թէ՛ դպրոցում եւ թէ՛ մասնաւոր տներում։

Նոյիմզար. Վարժուհութիւնը համակրելի արհեստ է, բայց մարդու նեարվները քայքայում է։

Հրանտ. (Անուշադիր թողնելով Սենեքերիմին) Նոյիմզարն էլ երեք տարի, եթէ կարելի է ասել, կրթել է մատաղ սերունդը։ Բայց այն օրից, երբ, վերջապէս, հասկացել է, թէ հրդեհի ժամանակ ալէլուիա չեն երգում, թողել է եւ անցել մեր բանակը։

Սենեքերիմ. Ձեր բանա՞կը։ Այդ ի՞նչ բանակ է։

Հրանտ. Արտաշէսը ձեզ կը բացատրի։ Թի՛ւ, ձեր ծխախոտը շատ թոյլ է։ (Զգում է յատակի վրայ եւ ոտով հագցնում)։

Կատարինէ. (Հրանտին) Դուք ո՞րտեղ էք աւարտել ձեր ուսումը։

Հրանտ. Տարրականը բանտում, միջնակարգը աքսորում, իսկ բարձրագոյնին դեռ չեմ արժանացել։

Կատարինէ. (Ապշած եւ սարսափած հեռանում է Հրանտից։)

Սենեքերիմ. (Միամտաբար ծիծաղելով) Այդ լաւ ասացիք։ Ցուսով եմ, որ բարձրագոյն ուսումն էլ կանցնէք հայրենիքի համար։

Հրանտ. Մենք հայրենիք չունինք։

Սենեքերիմ. Ուզում եմ ասել՝ հայ ազգի համար։

Հրանտ. Մենք ազգ չենք ճանաչում։

Սենեքերիմ. (Ցնցուելով) Իա՛, ի՞նչպէս թէ ազգ չէք ճանաչում։ (Ոտքի է կանգնում եւ, մի զարմացական հայեացք ձգելով Հրանտի

վրայ, ոտից մինչեւ գլուխ. հեռանում է։)

Նոյիմզար. (Շարունակ Ֆլորայի եւ Անահիտի հետ խօսում է։ Անահիտին։) Ասում են հայ օրիորդները ծայրայեղ ազգասէրներ են։ Դո՞ւք էլ։

Անահիտ. (Դրական եւ կտրուկ) Այո՛, օրիորդ։

Նոյիմզար. Ինչո՞ւ այդպէս խիստ եղանակով ասացիք։

Անահիտ. Որովհետեւ պարծենում եմ դրանով։

Նոյիմզար. (Հեգնօրեն ժպտալով) Կեցցէ՛ք։ (Դառնալով Ֆլորային։) Դուցէ դո՞ւք էլ, օրիորդ։

Ֆլորա. Չը գիտեմ, այդ մասին դեռ չեմ մտածել։

Նոյիմզար. Մեր ժամանակում դեռ չէ՞ք մտածել։ Հետաքրքրական է։ Թոյլ կըտա՞ք, օրիորդ, ձեզ հետ մօտիկ ծանօթանալու։

Ֆլորա. Ուրախ կըլինեմ։ Մնդրեմ մի օր չնորհ բերել մեր տուն։

Նոյիմզար. }
Անահիտ. } Շարունակում են խօսել ցածր ձայնով։
Ֆլորա. }

Նազանի. (Երեւում է խորքի դռների մէջ մի ձեռին դանակ, միւս ձեռում մի բաւրջան, թեւերը ծալած։) Խանում, մի էստեղ եկ։

Կատարինէ. (Շտապով գնում է, Նազանուն նշաններով յանդիմանում եւ նրա հետ հեռանում խորքի դռներով։)

Հրանտ. Հետաքրքրական է իմանալ, այդ ի՞նչ պատկերներ են զարդարում այս պատերը։ (Վեր է կենում եւ, ձեռները պանդոլոնի գրպանները դնելով մտիկ է անում պատկերներին։)

Տիգրան. (Որ շարունակ առանձին խօսակցում է Արտաշիսի հետ) Այդ բոլորն ապացուցանում է, որ դու պէտք է զգոյշ լինես։ Վասօին արդէն բռնել են։

Արտաշես. (Ցածր) Ճշմարի՞տ։

Տիգրան. Այո։ Երէկ երեկոյ։ (Շարունակում է շշնջիւնով։)

Կատարինէ. (Ցեւ է գալիս խորքի դռներով։) Անահիտ, կամաց կամաց սեղանը պատրաստենք։

Անահիտ. Այո, մայրիկ։ (Ֆլորային եւ Նոյիմզարին) Ինձ ներեցէք։ (Սկսում է մօտն օգնել, պահարանից ճաշի սեղանի վրայ տեղափոխելով աւանաներ, դանակ, պատառաքաղ, եւ այլն։)

Հրանտ. Այո, այո, բոլորը միմեանց համապատասխանում են։

Սենեքերիմ. (Ֆլորային մօտենալով։ Հրանտին) Դուք, անկասկած, ամենքին ճանաչում էք։

Նոյիմզար։ (Մօտենում է Արտաշիսին եւ Տիգրանին։)

Հրանտ. (Հեգնաբար) Ո՞վ չի ճանաչում հայ ազգի, այսպէս կոչուած, սիւներին։ Եթէ Արտաշէսն երէկ միայն մտած չըլինէր այս տաճարը, կարելի էր կարծել, որ նա էլ կռապաշտ է։

Սենեքերիմ. Ֆլորա, նա ի՞նչ է ասում։ (Նայում է հեռուից Հրանտին ոտից ցգլուխ։)

Կատարինէ. (Ճաշի սեղանի մօտ զբաղուած) Անահիտ, ուրթ հոգի չե՞նք։

Անահիտ. Եօթ, մայրիկ, Ֆլորան չի ուզում մնալ։

Հրանտ. (Նայելով պատկերներին) Ոչ, ոչ, այստեղ նայեցէք, շատ հետաքրքրական է, շատ։

Նոյիմզար. (Տիգրանին) Այդ կոպիտը ծերունուն վիրաւորելու է։

Տիգրան. Չը պիտի թոյլ տալ։ (Բարձր) Հրա՞նտ, արի այստեղ։

Հրանտ. Վարդան Մամիկոնեանից սկսած մինչեւ մեր ժամանակակիցները։ Այս ի՞նչ է, մի ծերունի, եպիսկոպոսի միրուքով, սուրը ձեռին վրէժ է աղաղակում։ Օհո՜, հո, դրա՞նք էլ կան, նորագոյն հերոսները խորհրդաւոր դէմքերով։ Հայաստանի փրկիչնե՜ր։ Ի՞նչ ինքնահաւան, անբարտաւան դէմքեր։ Ազգային բոստանի խրտուիլակներ։

Սենեքերիմ. (Բաւական զրգռուած, մօտենում է Հրանտին։) Այդ ի՞նչ էք ասում, պարոն։ Դրանք մեր ազգային նորագոյն նահատակներն են։

Տիգրան. (Բռնելով Հրանտի թեւը։) Զսպիր քեզ, տեղը չէ։

Հրանտ. Զըլսելով, միշտ ձեռները պանթալոնի գրպաններում) Որը վեղարով, որը զրահաւորուած, որը գրիչը ձեռքին, որը թուրը, պատրաստ են հարուածելու իրանց ազգի թշնամիներին։ Հէ՛ս, ահա եւ հայկական պա-

տերի սովորական պաստառը — «Ոգի Հայաստանի»։ Մի հաստավիզ բուրժուայ գեղեցկուհի աւերակների վրայ նստած, (Դադարում է նայիլ.) սիրահարուած ինքն իւր գեղեցկութեան վրայ։

Սենեքերիմ. (Հազիւ զսպում է կատաղութիւնը) Այդ ինձ նուիրեալ է իմ նախկին աշակերտուհիներից մէկը։

Հրանտ. Որքն, անշուշտ, կրթել էք այդ նկարի ոգով։

Սենեքերիմ. Թէկուզ այդպէս, երիտասարդ պարոն, թէկուզ այդպէս, ի՞նչ կասէք արդեօք։

Հրանտ. (Կոշտ) Այն կասեմ, որ այդ մինչեւ անգամ ազգասիրութիւն չէ, այլ ազգամոլութիւն։

Սենեքերիմ. Որքն, յուսով եմ, դէմ չէք դուք եւ ոչ մէկը ներկայ եղողներից։

Հրանտ. Հրաժարելով հրաժարիմք ի մոլորութենէ։

Տիգրան. (Ուժգին խաչելով Հրանտի թեւը.) Լռելո՞ւ ես, վերջապէս թէ՞ չէ։

Արտաշես. (Մի անկիւնից անհանգիստ դիտում է։)

Սենեքերիմ. Ահա թէ ինչ, ուրեմն դուք...

Հրանտ. Մենք այդ բոլորը պիտի գցենք պատմութեան արխիւը եւ փոխարէնը մեր պատերին պիտի կախենք աշխատաւորի պատկերն իւր կոշտ ձեռներով եւ խորշոմած ճակատով։

Նոյիմզար. (Անհանգիստ) Հրանտ, այդպէս չի կարելի։

Հրանտ. (Խիստ եղանակով) Հապա ի՞նչպէս, երկար տարիներ մարդիկ մոլորեցրել են ժողովրդին, պահել են խաւարի մէջ, մի՞թէ բաւական չէ։

Սենեքերիմ. Լսո՞ւմ էք, երիտասարդներ եւ օրիորդներ։ Լսո՞ւմ ես, Արտաշէս։ Այդ տղան քո ընկերը չէ, սխալմամբ է մտել այստեղ։ Ո՞վ է մոլորեցրել, պարոն, ո՞վ...

Հրանտ. Բոլոր այդ երեւելիները, մեր պապերը, հայրերը, դուք, սերնդէ սերունդ, յամառ մոլեռանդութեամբ։

Սենեքերիմ. Անտանիտ, այդ ի՞նչ է ասում։

Անահիտ. (Մօտենալով հօրը.) Հայրիկ, մի՛ վրդովուիր։

Կատարինէ. (Շփոթուած) Այդ մարդը հիւրերին պատուել չըգիտէ։ Մի՛շտ վէճ։ (Գնում է խորքի դռներով։)

Նոյիմզար. (Մօտեցել է Արտաշիսին) Ես ցաւում եմ, որ այդ կոպիտին հետս բերեցի։

Ֆլորա. (Շփոթուած դիտում է մերթ մէկին, մերթ միւսին։)

Սենեքերիմ. (Ճակատը շփելով) Այդպէս չի կարող լինել։ Այստեղ մի թիւրիմացութիւն կայ։ Մի՞թէ էլ թուլացել, թէ՞ականջներս լաւ չեն լսում։ Բայց նա պարզ խօսեց, համարձակ, աներկիւղ։

Կատարինէ. (Ցեւ է գալիս խորքի դռներով) Ճաշը պատրաստ է։

Անահիտ. Խնդրեմ, նստեցէք, պարոններ։ (Նոյիմզարին) Խնդրեմ, օրիորդ։

Ֆլորա. Ինձ ներեցէք։ Ցաւեսութիւն։ (Դրսից է տալիս եւ գնում է խորքի դռներով, ուերժելով Կատարինէի թախանձը, որ դռների մօտ ամ անգամ եւս աշխատում է նրան հաւոզել ճաշի մնալու։)

Տիգրան. (Բռնելով Հրանտի թեւը, տանում է թեւի խորքը։) Դու բոլորովին տակտ չունես։ Դու մինչեւ անգամ կոպիտ ես։

(Այստեղ մինչ Արտաշիսն ու Սենեքերիմը խօսում են աւանտեանի վրայ, թեւի խորքում Կատարինէն աշխատում է Հրանտին հաւոզել ճաշի մնալու։ Անահիտը խօսում է Նոյիմզարի եւ Տիգրանի հետ։)

Սենեքերիմ. (Աշխատել է իրան զսպել։ Բռնում է Արտաշիսի թեւիցը եւ խաշում նրան դէպի աւանտեան։) Արի այստեղ։ Ի՞նչ ասաց այդ տղան։

Արտաշես. (Մռայլ) Ներողամիտ եղիր, Հրանտը յայտնի է իւր կոպտութեամբ։

Սենեքերիմ. Աա, հայի կոպտութիւնով ինձ չես կարող զարմացնել։ Նրա ասածների միտքն է գլխաւորը։ Աստ, նա քո ընկե՞րն է։

Արտաշես. Այո՛։

Սենեքերիմ. Դու համաձայն ես նրա ասածների հետ։

Արտաշես. (Կամենալով հեռանալ) Այդ մասին յետոյ, գնանք դեռ ճաշելու։

Սենեքերիմ. Ո՛չ, ո՛չ, ես չեմ կարող ճաշի նստել մինչեւ որ չիմանամ ո՛վ ես դու, ո՛վքեր են քո ընկերները։

Արտաշես. (Հաստատ) Իմ ընկերները, հայրիկ,

իմ գաղափարակիցներն են։ Ես ուրիշ ընկերներ չեմ ճանաչում։

Սենեքերիմ. *Բայց այդ տղան այն չասաց, ինչ-որ դու այստեղ, մի ժամ առաջ։ Երբ դռների մօտից լսեցի քո վէճը մօրդ հետ, երբ ականջիս հասան քո կրակոտ խօսքերը, յափշտակուեցի, ուզում էի յարձակուել քեզ վրայ, գրկել, համբուրել։ Դու անցար քո սենեակը եւ ես ասացի. «ահա իմ զաւակը, ահա իմ իսկական ժառանգը։»*

Արտաշես. *Ինչի՞ մասին էին իմ խօսքերը, հայր։*

Սենեքերիմ. *Մեր վեհ գործի մասին, այդպէս չէ՞։*

Արտաշես. *Ձեր վեհ գործը մերը չէ, իսկ մեր գործով դու չես կարող յափշտակուիլ։*

Սենեքերիմ. *Ուրեմն, մենք ովքե՞ր ենք, դու եւ ես։*

Արտաշես. (*Սառը*) *Դու եւ ես, հայր, բոլորովին տարբեր աստուածներ ենք պաշտում։*

Սենեքերիմ. (*Բռնելով որդու օձիքը։*) *Հա՞յ ես դու, թէ չէ...*

Արտաշես. *Ես ազգութիւն չեմ ընդունում։*

Սենեքերիմ. (*Բաց թողնելով Արտաշիսի օձիքը, ձեռը յենում է արոռի մէջքին եւ բարձր ու դողդոջուն ձայնով։*) *Անիծուի՞ս դու։*

Բոլորը. (*Բեմի խորից ապշած նայում են։*)

ՎԱՐԱԴՈՑԸ

(Կը շարունակուի)

ԵՐԱՋ

Առաւօտ էր. լուսամուտին փակ փեղկէն
Կը սողոսկէր մութ սենեակիս մէջ արեւն
Իր նախընծայ ճառագայթներն. երբ ա՛յն ժամուն
Ուր կը սփոփէ հունը բիբերն՝ աւելի՛
Թեթեւ ու քաղցր, կանգնեցաւ հովը մօտ
Ու նայեցաւ երեսս ըստուերը անո՛ր՝
Որ ինծի նա՛խ առաջին սէր սորվեցուց,
Ու զիս թողուց արցունքներու մէջ յեսոյ։
Ինծի մեռած չէր երեւար, բայց տխուր,
Եւ ինձ ըսաւ հառաչելով. կ'ապրի՞ս դուն,
Ու կը պահե՞ս յիշատակ մ'ո՛ր եւ իցէ
Մեր մասին։ Ի՞նչպէս եւ ուրկէ՞ կուգաս, ո՛վ
Դեղեցկութիւն սիրուն, ըսի։ Ո՛հ, ո՛րքան,
Ո՛րքան լացի հեզ ու կու լամ. եւ չէի
Կարծեր որ զայն իմանայիր պիտի դուն,
Եւ ա՛ս՝ իմ ցաւոս կը գործէր աւելի՛
Անմխիթար. բայց դուն պիտի թողո՞ւս զիս
Դարձեալ. ես շատ կը վախնամ. ադ ըսէ ինձ.
Ի՞նչ անցաւ հոս գլխէդ. դուն այն առջի՞ն ես.
Եւ ի՞նչ բան հեզ կը տխրեցնէ ներհսապէս։
Կը զրաւէ միտքդ մռայլութիւն, ըսաւ նէ,
Ու կը պատէ հո՛ւնը զայն. ես մեռած եմ,
Ու դուն՝ ադ շատ ամիս կ'ընէ՝ տեսար զիս
Վերջին անգամ։ Ի լուր ասոնց՝ ցաւ մ'անհուն
Կուրծքս նրնեց։ Շարունակեց ապա նէ.
Մեռայ ծաղիկ հասակիս մէջ, կեանքն երբոր
Է աւելի՛ անուշ, ու սիրտը չէ՛ դեռ
Սառուցած թէ զո՛ւր է մարդկային ամէն յոյս։
Հէր մանացուն պէտք չունի շատ վազելու,
Ընձալու զայն՝ որ զինքն ամէն տագնապէ
Պիտ՝ ազատէ. բայց անուելի է մանն՝ երբ
Երիտասարդ հասակին մէջ կը հասնի.
Եւ է դրժնէ հակատագիրն այն յոյսին
Որ հոգին տակ կը շիջանի։ Աւելո՛ւդ
Է գիտնալ ի՛նչ որ կը ծածկէ բրնութիւնն
Անփորձներէն կեանքի, ու շատ աւելի՛
Կ'արժէ կոյր ցաւը քան թէ խակ գիտութիւնն։
Ո՛հ, տարաբախտ, ո՛հ սիրելի, լուռ կեցիր,
Լռէ՛, ըսի ես, զի դուն հոս խօսքերով
Կը բզբկես սիրտս. մեռա՞ծ ես ուրեմն,
Ո՛վ սիրունիդ իմ, ու ես ե՞մ կենդանի
Եւ զրուա՞ծ էր երկինքն որ հո՛ւսկ հրտիներներն
Այդ սիրատարփ, հրնիռ մարմինը կրէ՛ր,
Ու մնար ամբողջ իմ եղկելի այս պատանին։
Ո՛հ, ես քանի՛ քանի՛ անգամ որ կրկին
Կը մտածեմ թէ չես ապրիր դուն այլեւս՝
Հաւատալ չեմ կարող։ Ո՛հ, ո՛հ, ի՞նչ բան է
Այն զոր մենք մահ կը կոչենք. ա՛յսօր փորձով
Կարենայի՛ իմանալ զայն, եւ գլուխս նէր
Բախեին ժրպիրն մոլուցքներէն զսպել. ե՛մ
Երիտասարդ. բայց կը սպառի կը կորսուի
Երիտասարդ հասակս հանգոյն ծերութեան.
Կը զարհուրիմ ծերութենէ, եւ սակայն
Ինչ հեռու է շատ. բայց իմ ծաղիկ կեանքս
Անկէ շատ բիչ կը տարբերի։ Ծնա՛նք, ըսաւ,
Երկուքնիս ալ արտասուքի. մեր կեանքին
Զրժպտեցաւ երջանկութիւնն, ու երկինքն
Հեռացաւ մեր տագնապներով։ Ադ եթէ
Ես, յարեցի, աչքս արցունքով ու դէմքս ալ
Եմ դալուկով հոգեր մանուանցդ համար,
Ու կը կրեմ վրեալի սիրտ մ', ըսէ՛ ինձ,
Սիրոյ եւ կամ գութի կայծիկ մը երբէ՞
Մինչ կ'ապրէիր՝ հոս սրտիդ մէջ վառեցա՞ւ
Հանդէպ թրուառ սիրահարիդ։ Այն ատեն
Կ'անցրնէի ես գիշերներս ու օրերս

Անյուսութեամբ եւ յուսալով. իսկ այսօր
Մ'իտս ընդունայն տարակոյսով կը յոգնի :
Եթէ տրխուր կեանքս գոնէ մէկ անգամ
Ցաւ պատճառեց քեզ, կ'աղաչեմ, մի՛ ծածկեր,
Եւ թող սփոփէ զիս գոնէ այս յիշատակն,
Արդ որ գողցան ապագան մեր օրերուն :
Եւ նէ. Սփոփուէ, ո՛վ վատաբախտ, ես զքեզ
Ազան չեղայ հանդէպ քեզ մինչ կ'ապրէի,
Հիմա՛կ ալ չեմ, զի էի ե՛ս ալ թշուառ :
Այս չարաբաստ աղջկան վրայ մի՛ զանգատիր :
Մեր չուառութեանց եւ զիս այրող, զոչեցի,
Սիրոյն համար, երիտասարդ հասակին
Քաղցր անունով ու մեր կեանքին կորսուած
Յոյսին համար, թոյլ տուր ինձ, ո՛վ սիրունի,
Որ քու ձեռքիդ դրպչիմ : Եւ նէ զայն ինձի
Կը կարկառէր քաղցրատրխուր շարժուածքով :
Մինչդեռ ես զայն համբոյրներով կը ծածկեմ,
Ու բաբախուն տագնապալից քաղցրութեամբ
Կը սեղմեմ զայն թասուն ծոցիս, հրտինքով
Կը տոչորին դէմքս ու կուրծքս, ու կը մնայ
Զայնքս կոկորդս, եւ հանդէպ իմ նայուածքիս
Կը բեկանի լոյսն : Ցեսոյ նէ իր աչքերն
Աչքերուս մէջ զորովագին սեւեռած,
Արդ կը մոռնա՞ս, ըսաւ ինձ, ո՛վ սիրական,
Որ ես գեղէ մերկ կողոպուտ եմ մնացած :
Ու դուն զո՛ւր, ո՛վ վատաբախտիկ, զուր սիրով
Կը տոչորիս, կը զոփաս : Արդ մնաս բարո՛վ
Առ յաւէս. մեր նէք մարմիններն ու մրսքերն
Խպառըսպուն բաժնուած են : Ինձ համար
Դուն չես ապրիր ու պիտի քնաւ չապրիս ա՛լ,
Բախտը փրշրեց հաւատքն որ ինձ երդուրնցար :
Ուզելով այն աւեն զոչել տագնապէս,
Ու նուաղելով, 'ւ անմրխիթար արցունքով
Բիբերս ուռած՝ թոթուեցի քունքս գլխէս :
Եւ սակայն նէ աչքերուս մէջ կը մընար,
Եւ արեւուն շառաչին մէջն անորոշ՝
Ես զայն տեսնել կը կարծէի տակաւին :

ԼԷՕՌԱՐԴԻ

Թարգմ. Հ. ԱՐՍԷՆ ՂԱԶԻԿԵԱՆ

...ԱՂԲԻՒՐԸ ԼՈՅՍԻՆ

Դու կը փայլիս մեծութեան
եւ զոհազործութեան համար :
ՌԻԿ – ՎԷՏԱ

Կ'երթամ աղբի՛ւրը լոյսին...
Ուղին երկար է, ալարկուած է ուղին
Կայծքարերով, ցանկուած՝ մուրտի փուշերով.
Ուղին շեղ է նառագայթի մնանգունակ :
Անկէ կ'ելլեմ յենլով դողդոջ ծունկերուս,
Եւ ծունկերէս՝ զոր գամեցին եղբայրներս՝
Արիւնքս տամ կը բղխի.
Հեւքն է կուրծքիս, թարթիչներուս վրայ փոշին.
Սիրտս սափորն է դատարկ,
Ու ես կ'երթամ դէպ ի աղբիւրը լոյսին...
Լոյսն աղուոր է բարձրութեան մէջ հոսանուս,
Խոնարհումին մէջ՝ արդար.
Օր մ'ես տեսայ էութենէն մաս մը սուրբ
Մօտ հոգւոյն մէջ ճանանչաւուխս, եւ ցաքած
Մեր գիւղակին մէկ հրնօրեայ հերոսին
Հողակոյտին վրայ դալար :
Միջօրէին զայն տեսայ՝
Որ նրման մեծ թիթեռնիկի մ'ըսպիտակ
Կը թալէր զաղջ պատուհանիս քարին վրայ,
Որ մայթերէն կամ աղծապիղծ համբայէն
Ներողամիտ զքրութեամբ
Կը հոսէր նոր կրքուած կաթի մը պէս եղկ,
Որ իրիկունն հորիզոնէ հորիզոն
Կ'երիզանար գեղերու պէս յակրնթի
Կամ կը կազմէր երկինքներուն վրայ խաղաղ
Անընդհատ աւազաններ՝ որոնց մէջ
Կը բրռնկէին նուռնուռքարէ կրոզեակներ :
Զայն ես տեսայ, եւ հոգւոյս մէջ արթնցաւ
Պանդուխտի տենչ մը անորոշ եւ լրկիչ
Դէպ ի զաւառ մ'անծանօթ, լի՛ արեւով.
Եւ արդ կ'երթամ դէպ ի աղբի՛ւրը լոյսին...
Լոյսն է մրտիս հարսը, եւ դուստրն Աստուծոյ.
Ան գինին է Տիեզերքին բերկրութեան,
Որ իրիկուն մը կողէն դուրս Ցիսուսին
Հեղեղօրէն հոսեցաւ,
Ներումի պէս հոսեցաւ, վա՛ղը, Մեղքին
Սեղանին շուրջը հաւաքուած մարդերուն
Անյուսութեան ըսկիններուն մէջ դատարկ :
Լոյսը արիւնն է բնութեան,
Դիշերուան խոյրն եւ պատմունանն է օրուան.
Աստուածային Ակնին է՝
Որ երկունքի մէջ մեռած մօր մը նրման
Կը սեղծէ իր վախնանելու ժամանակ,
Ակնին հրեղէն աչքերով՝
Որուն հոգին ամէն զարուն կը տրոփի
Հիլէին մէջ եւ մարդկային մրտածման,
Որուն համար զոհերով դե՛ռ կը մրխան
Լուսանքներով ծիծաղկոտ
Նրբիրական ափերը յոյդ Դանգէսին :
Ու ես կ'երթամ դէպ ի աղբի՛ւրը լոյսին...
Լոյսը մարմարն է երկնային հանքերուն,
Որով Արուեստն անմահական երազով
Կը քանդակէ ձիւնամարմին աստուածներ :
Իր ծոցին մէջ կը ծընին
Մռայլ Տանդէներն ու Հոմերները հրսկայ.
Իր ծոցին մէջ իմաստութիւնը երգ մ'է՝
Զոր գիշերուան մէջ խորունկ
Բանաստեղծները կը լրսեն աստղերէն՝
Որ ցորեկուան մէջ նրւազեն աբխարհին :
Ան ամենո՛ւն զինքը կու տայ, ամենո՛ւն

Կը բաժնուի ու կը մընայ անբաժան
Նրբխարհին պէս.—ան նրբխարհն է՝ որ կ'իջնէ
Ամէն առտու սեղանները վրայ մեր
Մարդեղութեան արիւնլուայ խորհուրդին :
Ու ես կ'երթամ դէպ ի աղբի՛ւրը լոյսին . . .
Քանի՞ հազար , կամ հանի՞ բիւր տարիներ
Պէտք է որ ա՛յսպէս քալեմ .
Քանի՞ անգամ պէտք է իյնամ կարեվէր
Ճանապարհիս վրայ՝ բացուած
Նրպաւակին պարհիանաց բրոցով . . .
Զրգիտեմ ես .—միայն թէ , ո՛վ եղբայրներ ,
Ո՛վ խաչ հանող եղբայրներ ,
Թողուցէք զիս նամբորդութեանս մէջ մինակ .
Ա՛յնքան մինակ եւ ա՛յնքան լուռ , որ լսեմ
Սրտիս տրոփիւնն՝ որ իմ ընտրած նրւազս է
Նրւազներուն մէջէ բիւր :
Արեւով լի եւ արեւները տանող
Ուղիիս վրայ մի՛ սրփռէք
Ձեր շուրջ՝ մռայլ թեւի մը պէս ուրուրի :
Եւ ո՛չ ալ զիս կանչեցէք
Խրճնոյմներուն ձեր զուարթ՝
Ուր բոզութիւնը կը զարնէ նուազարան :
Ընդունա՛յն է խոստանալ
Սրտիս կոյսեր , սիրտս սափորն է դատարկ՝
Եւ ես կ'երթամ դէպ ի աղբի՛ւրը լոյսին . . .

ԴԱՆԻԷԼ ՎԱՍՊՈՒՐԱՆ

ԻՄ ՅԻՇՈՂՈՒԹԻՒՆՆԵՐՍ

(Շարունակութիւն)

Զ.

Շաբաթ մը յետոյ , նշանուած էի Անտոն Գարայի հետ :

Ան իր մօրաքրոջ որդւոյն քով առաջին դրագիր էր :

Օրթագիւղի մէջ՝ Գարաեան Սահակ աղա յարգուած մարդ էր : Շատ խիստ էր իր որդւոցը հետ : Լսելով որ իր որդին Թատրոնի մէջ խաղացող աղջկան հետ պիտի պսակուէր , սաստիկ բարկացեր էր :

— Ա՛լ տունս գործ չունիս , ըսեր էր. պաշտօնէդ ալ հրաժարուած ես. գնա՛ :

— Շա՞տ շնորհակալ եմ, կը պատասխանէ, ու տունէն դուրս կ'ելլէ :

Գալով ինձ մօտ կը պատմէ պատահածը .

— Ազնի՛ւ , ես պանդոկի մէջ սենեակ պիտի վարձեմ : Դուն ինձմէ երես մի՛ դարձներ . ես գործ կը ճարեմ, քեզ ու մայրդ կը պահեմ՝ ինչպէս որ պէտք է :

— Դուն ալ հանգիստ եղիր , Անտոն . ես ալ այնքան աղքատ չեմ. ունիմ հազար ոսկի . ատով գուն կրնաս գործ մը բռնել :

Պանդոկի մէջ կ'ապրէր . բայց ամէն օր մեզ մօտ կը ճաշէր :

Մէկ կամ երկու ամիս էր որ նշանուած էինք , պարոն մը սկեսրայրիս հաւաստեր էր թէ՝

— Եթէ քու հարսնացուդ Հրաչեան է , կ'ապահովցնեմ քեզ որ հարսներուդ մէջ առաջին տեղը պիտի բռնէ : Գնա՛ անգամ մը տես , յետոյ ինչ կ'ուզես ըսէ :

Երկրորդ օրը՝ նշանածիս հետ ծեր մարդ մը ներս մտաւ : Զգացի թէ անոր հայրն է : Զիս տեսաւ թէ չէ . համբուրեց .

— Կեցցե՛ս , Անտո՛ն ըսաւ , այսպիսի հարսնացու ես չէի կարող ճարել քեզի :

Քիչ մը նստելէ յետոյ , խնդրեց որ մեզ երկուքս մինակ թողուն : Ու երբ մինակ մնացինք, ըսաւ ինձ .

— Ազնի՛ւ , աղջիկս , այժմ խնդիրք մը ունիմ քեզի . տեսնենք պիտի յարգե՞ս :

— Հա՛յր . հրամայեցէք , վստահ եղէք որ ձեր հրամանը իբր պատգամ պիտի ընդունիմ :

— Իմ խնդիրքս է որ ձեր պսակը կատարուի պապական եկեղեցւոյ մէջ : Կինս ու ես շատ կրօնամոլ ենք :

— Սիրելի հայր , ներեցէք ինձ , քանի՞ զաւակ ունիք :

— Տասնըչորս :

— Այժմ կարգը ձերն է հարցընելու թէ իմ մայրս քանի՞ զաւակ ունի : Մէկ հատ միայն : Ու ինքն ալ կրօնամոլ է որքան դուք : Ան ալ սնուցեր մեծցուցեր է զիս այն յոյսով որ պիտի պսակէ զիս այն եկեղեցւոյն մէջ ուր զիս մկրտեր է : Այժմ ըսէք , կարո՞ղ եմ թքնել այն կուրծքին վրայ որ ինծի կաթ է տուեր , թքնել այն մօր վրայ որուն միակ յոյսն եմ ես : Հիմա որ ամէն բան իմացաք , խնդրեմ՝ հրամայեցէք , ես պատրաստ եմ ընելու :

— Ո՛չ , ո՛չ , սիրելի՛ աղջիկս :

Կանչեց նշանածս .

— Անտո՛ն, դուն պէտք է՞ պակուիս լուսաւորչական եկեղեցւոյ մէջ, ես կուտամ իմ հայրական օրհնութիւնս։

Շատ յուզուեցայ, կարծեցի թէ հայրս վերակենդանացած էր։

Մինչև մեր հարսնիքը, ամէն օր կուգար։ Շատ կը սիրէր զիս, ես ալ զինքը շատ կը սիրէի։ Ափսո՜ս որ շատ քիչ ժամանակ վայելեցի զինքը։ Ամուսնութենէս տարի մը յետոյ, արդէն կորսնցուցած էի զինքն ալ։

1873 սեպտեմբեր 14ին, պսակուեցանք, և մեր մեղրալուսինը անցուցինք Նիկոմիդիա, ուր ամուսին պաշտօն էր ստանձներ։ Երկաթուղւոյ գիծն ու կամուրջները կը շինուէին մինչև Անկիւրա։ Նիկոմիդիայի մէջ բացած էին գործարան։ Ահա այդ գործարանին մէջ առաջին գրագիր էր։ Պարոնի մը ընկերակցութեամբ՝ բերել տուաւ Ֆրաֆէրոներ ու տէրութեան յանձնեց։ Բայց մենք դեռ չէինք գանձած դրամը, տէրութիւնը չկարենալով վճարել թէ՛ գործաւորներուն և թէ՛ ապրանքատիրոջ, փակուեցաւ գործարանը։ Նոյնպէս դադրեցաւ երկաթուղւոյ գծի շինութիւնը։

Վեց ամիս հազիւ էր անցեր, մենք կորսնցուցինք թէ՛ մեր սեփական դրամը և թէ՛ ոռճիկները, տեղափոխուեցանք Պոլիս՝ Օրթագիւղ թաղը, 1876 թուականին։

Այդ միջոցին, Մաղաքեան կազմեց խումբ մը՝ Սիմոնովիչի աջակցութեամբ, և սկսաւ տալ շարք մը ներկայացումներ Փերայի Ալքազար թատրոնին մէջ։

Դերասաններն էին Մաղաքեան, Ադամեան, Սիսակ, Թրեանց, Տէօրճեան և՝ կարծեմ՝ Մնակեան։ Դերասանուհիներն էին Աստղիկ, Սիրանոյշ, տիկին Վալիտէեան։

Անակնկալ դիպուած մը հիմէն տապալեց այդ գործը։ Սիմոնովիչ Օսմանեան Պանքայի գանձապահն էր. զեղծման ամբաստանութեամբ բանտարկուեցաւ։ Ներկայացումները դադրեցան։

Ամերիկեան՝ Պոլիս գալով փորձեց նոյն խմբով տալ ներկայացումներ Ալքազար թատրոնին մէջ։ Բայց խեղճը չյաջողեցաւ։ Իր լեզուն Պոլսեցւոց համար խորթ կը հնչէր։ Եկաւ ինձ մօտ՝ խնդրեց մասնակցիլ։

— Օգնեցէք ինձ, տիկին. ես դժբաղդ մարդ եմ, որ եկայ և ձեզ ամուսնացած գտայ։

Խեղճը կը կարծէր թէ մերժմանս պատճառը ամուսնութիւնս էր։

Շաբաթ մը յետոյ՝ դարձեալ գալով մեզ մօտ, զիս գտաւ շատ գէշ հիւանդ վիճակի մէջ։ Այն ատեն ներողութիւն խնդրեց։ Երեք ամիս անկողին մնացի՝ քիչ մը ցուրտ առած ըլլալուս հետեւանքով։

Ամերիկեան կարծեմ անմիջապէս դարձաւ Թիֆլիս։

Դերասանական խումբ չկար. կա՛մ պէտք էր Վարդովեանի խմբին միանայինք և կա՛մ պարապ նստէինք։ Յաջորդ "սէզոն"ին համար՝ Եղիազար Մելիքեան վարձեց Ֆրանսական թատրոնը։ Զուհաձեանի ղեկավարութեամբ պիտի ներկայացնէինք շարք մը օփերէթներ, Ֆրէզ, Բէօռէ, Լէկլէրքի Հօրհոր, ևն.

Շատ հնչուն և կլոր ձայն ունէի։ Եկան ինձմէ խնդրել որ ընդունիմ առաջին երգչուհիի պաշտօնը։ Առաջարկեցին 50 ոսկի ամսական. Փերա՝ առնուազն 5 ոսկիի բնակարան, դեսպակ որով պիտի կարողանայի ամէն օր երթալ փորձի։

Տհաճութեամբ ընդունեցայ պայմանը։ Ստիպուած էի, քանի որ ոչ մէկ տեղ տուամ կը ներկայացնէին. Օրթագիւղի Հայոց թաղը բոլորովին հրոյ ճարակ եղած էր։

Հաստատուեցանք Փերա։ Խումբը բաղկացած էր մօտ քառասուն հոգիէ։

Թրքական Օփերայի երգիչ դերասաններն էին Գարեգին Ռշտունի, Անտոն Ռշտունի, Նալեան, Սիսակ, Զատիրաստ, Միշէլ Պէրպէրեան, Խաչիկ Փափազեան (Թենօր). դերասանուհի-երգչուհի՝ ես ինքս. մնացեալները հոսկէ հոնկէ հաւաքուած մարդիկ էին։

Զուհաձեանի տրամադրութեան տակ կար օրքէսթր մը, կարծեմ 35 հոգիէ բաղկացած։ 250 ոսկի ամսական կը ստանար միմիայն օրքեսթրը։ Ա՛լ խումբը չեմ գիտեր ի՞նչ կ՚արժէր։ Անհաշիւ կը ծախսուէր։ Ամէն իրիկուն թատրոնը լեցուն էր, բայց կարելի չէր այդ ծախսը ծածկել։

1878ի հոկտեմբեր 24ին, ունեցանք աղջիկ զաւակ մը։ Գէորգ Այվազեան կնքահայր եղաւ։ Անունը դրինք Պերճուհի։

Այդ օրէն ամիս մը յետոյ, արդէն թատրոնը փակուած էր։

Է.

Տեղափոխուեցանք Պոլիս։

Ֆասուլեաճեան ինձ մօտ գալով համոզեց ընկերակցութեամբ երթալ Ադրիանուպոլիս՝։

— Ամսական քառասուն ղրուշով տուն մը կարող ես վարձել, ըսաւ, և քսան ղրուշով լաւ ծառայ։

Այնքան աժան ցոյց տուաւ ամէն բան, որ եթէ մենք ծախսէինք երկու հարիւր ղրուշ, արդէն շատ ու շատ՝ էր։

Ես խնդրեցի որ ինձ ամսական տայ և առաջարկեցի՝ այդ Աւետեաց Երկրի համար՝ ուր պիտի ապրէինք մանանայով՝ 15 ոսկի։ Ընդունեցաւ։

Վերջապէս, ճանապարհածախսը ինձմէ հայթայթելով գացինք Ֆասուլեաճեանի սիրելի քաղաքը։ Այդտեղ, իմացայ թէ մեր ներկայացումները պիտի ըլլային միայն Թուրքերէն, որովհետև Ադրիանուպոլսոյ Հայերը Թրքախօս են։

Խումբին մէջ կային դերասաններ՝ Պ Պ. Ֆասուլեաճեան, Սիսակ, Հոլասեան, Գէորգ Պէրպէրեան, Ռուբէն Պիննէմէճեան, Թաշճեան, դերասանուհիք՝ Տիկ. Ֆասուլեաճեան, Ազնիւ Արապաճեան, Տիներզատ Պէրպէրեան և Հրաչեայ։

Առաջին քայլէն՝ ատեցի թէ՛ Թրքախօս քաղաքը և թէ՛ Ֆասուլեաճեանը, որ զիս չարաչար խաբեց։ Քսան ղրուշի փոխարէն, փոքրիկ տան մը համար վարձք կը վճարէի ամսական երկու հարիւր յիսուն ղրուշ։

Առաջին ներկայացումն էր "Քաթէրին Հովուարտ"։ Բեմին անմիջապէս առջևը նստած էր հարիւրապետ մը, հարբած, և շարունակ կը գոռար.

— Ասլանը՛մ, աշը՛ք (Առի՛ւծս, սէ՛րս)։

Դերասանները կը խանգարէր իր անվերջ "ասլանը՛մ"ներով։

Ես անմիջապէս խնդրեցի Ֆասուլեաճեանէն թոյլ տալ ինձ որ երթամ Պոլիս։ Բայց՝, նա բացատրելով թէ ի՞նչ կ՚ըլլար խմբին վիճակը՝ եթէ ես ձգէի երթայի, համոզեց զիս մնալու։

Երկու ամիս յետոյ, Ֆասուլեաճեան սկսաւ.

— Ժողովուրդը կը ցանկայ տեսնել Հերանոյշը։

Չէի գիտեր թէ այդ անունով դերասանուհի կայ, և թէ Ֆասուլեաճեան շատ մօտիկ է անոր։

— Ֆասուլեաճեա՛ն, ըսի, քանի որ հոս գալերնէս յետոյ դու ինձ մերժեցիր ամսական տալ, և ստիպեալ՝ ընկեր ենք, ես չեմ՝ կարող ամսական տալ; այն ալ տասը ոսկի՝ ինչպէս կ՚առաջարկես, օրիորդի մը որուն անունը առաջին անգամ կը լսեմ։

Ֆասուլեաճեան բերել տուաւ Հերանոյշը։

Ես հրաժարուեցայ խումբէն։

Հերանոյշ եկաւ։ Բայց դեռ բեմ չէր ելած։

Եկաւ Ֆասուլեաճեան, խնդրեց, աղաչեց որ կրկին ընկերակցիմ։

—Ընկերա Թուրքաց փիէսներուն մէջ պիտի կատարէ առաջին դերերը, իսկ եւրոպական դերերուն մէջ՝ դուն։

Ճիշտն ըսելով՝ ես ընդունեցայ, որովհետև կը ցանկայի տեսնել գեղարուեստի այդ քրմուհին։

Առաջին ներկայացումն էր „Հէյ վահ", որուն մէջ կային երկու Թուրք երիտասարդ կանանց դերեր։

Առաջին կնոջ դերը կը կատարէր Հերանոյշ, իսկ երկրորդը՝ ես։

Ելանք բեմ։ Իմ երկրորդ դերս եղաւ առաջին։

Քէմալ պէյ գրած ուներ "Վաթան" (Հայրենիք) տիտղոսով խաղը։ Արդէն երկու անգամ ներկայացուցած էինք "սէզօն"ին սկիզբը։ Հասոյթ եղեր էր ամենաքիչը յիսուն ոսկի։ Ֆասուլեաճեան ծանոյց ինձ թէ այդ խաղին ներկայացումը ծախսեր էր քսանուհինգ ոսկիի, այն պայմանաւ որ անոր մէջի Զէքիէի դերը պիտի կատարէ Հերանոյշը։

— Շատ լաւ ես ըրեր, Ֆասուլեաճեա՛ն, ըսի։ Ես ալ քսանուհինգ ոսկիի ծախեցի "Անճէլօ Մալիտիէրի" խաղը, զոր այս "սէզօն"ին ներկայացուցեր ենք երկու անգամ, և որուն մէջ Թիզպէի դերը կատարեր է կինդ ու տուեր է հասոյթ երկու հարիւր ղրուշ։ Այս պայմանաւ ծախու առին որ Թիզպէի դերը ես կատարեմ։

— Ի՞նչպէս, դուն ի՞նչ իրաւունքով երեկոյթ կը ծախես։ Եւ վերջապէս չե՞ս գիտեր որ այդ դերը իմ կնոջս դերն է։

— Ես ծախեր եմ այն իրաւունքով որով դուն ես ծախեր։ Գալով Թիզպէի դերին, հոգ չէ, ես չեմ կատարեր։ Բայց դուն ալ պէտք է

ջնջես քանուհինդ ոսկի ընկերութեան պարտքէն։

— Ո՛չ, ոչ կը ջնջեմ և ո՛չ ալ կը ծախեմ։

— Քանի որ այդպէս է, Ֆասուլեաճեա՛ն, ես ալ չեմ ծախեր "Վաթան„ի ներկայացումը։ Կա՛մ կը ստորագրես "Անձէլօ„ի պայմանը և կամ Հերանոյշը չի ներկայացներ Զէքիէի դերը։

— Զիս կախեն ալ՝ չեմ ստորագրեր։ Ինծի Ֆասուլեաճեան կ'ըսեն։

Արդէն յայտարարութիւնները ցրուած էր։ Գացի անմիջապէս տպարան, հարիւր յիսուն հատ յայտարարութիւն տպել տուի՝ Զէքիէ–Հրաչեայ։ Այդ կերպով հրապարակի վրայ կար երկու տեսակ յայտարարութիւն, մէկին մէջ Զէքիէի դերը կը կատարէր Հերանոյշը, իսկ միւսին մէջ՝ Հրաչեան։

Այդ օրը Ֆասուլեաճեան Հերանոյշի հետ երթալով Թուրքերուն մօտ, պաշտպանութիւն խնդրեց։ անոնք ալ խոստացան։ Այդ ներկայացումները կը տրուէին Թանգարանի սրահին մէջ։

Ներկայացման իրիկունը, Թանգարանի պարտէզին մէջ, ժողովուրդը երկու մասի բաժնուած էր։ Հայ, հրէայ և եւրոպացի հասարակութիւնը իմ կողմս էր, իսկ Թուրքերը՝ Ֆասուլեաճեանի։

— Մենք Հրաչեայ չենք ուզեր։ Ատրճանակ կը քաշենք վրան, եթէ բեմ ելլէ։ Մենք Հերանոյշ կ'ուզենք, էֆէնտի՛մ, Հերանո՛յշ։

Հայք և Եւրոպացիք կը պատասխանէին։

— Դուք Թուրքերդ փոքրամասնութիւն կը կազմէք։ Կառավարութեան դուռը ծառայող մէկ քանի գրագիրներէ զատ ուրիշ Թուրքեր չկան Թատրոն յաճախող։ Ուրեմն Թատրոնը պահպանողը մենք ենք, և մենք կը ցանկանք տեսնել Հրաչեան։ Թող Ֆասուլեաճեան ստորագրէ "Անձէլոյի„ պայմանը։ մենք դուրս կ'ելլենք Թատրոնէն և երբ Հրաչեան ներկայացնէ Թիզպէ, այն ատեն կուգանք զայն տեսնելու։

Հաւաքուած բազմութիւնը կարող էր Թանգարանի սրահին կրկնապատիկը լեցնել։

Այդ միջոցին ես կը հագուէի իմ սենեակս, իսկ Հերանոյշ իր սենեակին մէջ։

Վարագոյրին բացուելու ժամն անցեր էր արդէն։ Ժողովուրդը կը սուլէր և փայտերով կը զարնէր տախտակամածին, բայց վարագոյրը չէր բացուեր։ Ֆասուլեաճեան, երկու ձեռքով գլուխը բռնած, շուարած, չէր գիտեր ինչ ընելիքը։

Մայրս ու ամուսինս ինձ կը Թախանձէին։

— Ազնի՛ւ, Թուրք են, կարող են ատրճանակի հարուածով մը քեզ սպաննել։ խղճա՛ մօրդ, խղճա՛ փոքրիկիդ։

— Մայրի՛կ, այն բոպէին որ ես տեսարան եկայ, ա՛լ ձեզի չեմ պատկանիր։ Ի՞նչ որ պատահելու է՝ Թող պատահի։ Կա՛մ պիտի ստորագրէ և կա՛մ պիտի բեմ ելլեմ։

Այդ բոպէին իսկ, ժողովուրդը ներս խուժեց։ Ամէնուն ձեռքը գաւազան կար։ Գտան Ֆասուլեաճեանը։

— Շո՛ւտ ստորագրէ՛, Թէ ոչ հի՛մա քեզ կը սպաննենք, ըսելով՝ ստորագրել տուին պայմանը և յանձնեցին ինծի։

Բայց ես առի և պատռեցի պայմանագրութիւնը, ըսելով Ֆասուլեաճեանին։

— Ասկէց ետքը՝ պէտք չկայ որ այս Թատրոնին մէջ ես խաղամ։ բաւական է որ ստորագրեցիր։

Դուրս ելայ Թատրոնէն։

Թատրոնին մէջ մնացին քանի մը Թուրքեր։

Այժմ ի՞նչ ընէի որ կարողանայի Ազրիանուպոլսոյ մէջ ունեցած պարտքս վճարելով վերադառնալ Պոլիս։

Երկրորդ օրն իսկ, հրէայ Թատերասէրները եկան զիս գտան և ըսին։

— Տիկին, կ'ուզենք առաջարկութիւն մը ընել, բայց չենք համարձակիր։ Խնդրենք, ըսէ՛ք, կարելի չէ՞ որ դուք մեզ հետ ներկայացում մը տաք սպանեալ լեզուով։

— Բայց ես չեմ գիտեր սպանեալերէն։

— Մենք կուտանք ձեզ Ֆրանսերէն փիէսը, "Փոլ ճօն„, դուք կը ծանօթանաք բովանդակութեանը։ Մենք դերը կը կարդանք սպանեալերէն, դուք կը գրէք հայերէն։ Դերի դիմացը կը գրուին բառերուն հայերէն բացատրութիւնները։ Առաջին ներկայացումը կ'ըլլայ ի նպաստ մեր դպրոցին։ դուք կը ստանաք յիսուն ոսկի։ Երկրորդ անգամ նոյն փիէսը կը խաղանք ի նպաստ ձեզ։

Ո՜վ բարեկամներս, լսեցէք, դատեցէք, Թէ ի՞նչպիսի միջոցներով մենք պահպաներ ենք մեր գոյութիւնը։

Ընդունեցայ պայմանը։ Տասնեհինգ օրէն արդէն պատրաստ էինք։ Փորձերը յաջող էին։

Ներկայացման իրիկունը, տեղերուն գինը

կրկնապատիկ նշանակուած էր։ Հրէաներէն աւելի Հայ ու Եւրոպացիք կային։ Ֆասուլեաճեան ևս այդ իրիկուն ներկայացում պէտք է տար, բայց ժողովուրդ չըլլալուն պատճառաւ փակեց թատրոնը։

Բեմ ելայ թէ չէ, ձեռքովս յենուեցայ աթոռին։ Կը վախնայի որ վար չիյնամ յուզմունքէս։ Սիրտս սաստիկ կը զարնէր, բայց երեսէս բան մը ցոյց չէի տար։

Հրէաները կը պնդէին թէ՝

— Անիկա անպատճառ առաջուց գիտէր սպանելերէն. յայտնի է արտասանութենէն։

Երկրորդ թէ երրորդ արարուածին, կար յանդիմանական կտոր մը աղջկանս ուղղուած. երբ արտասանեցի ոգևորութեամբ սա խօսքերը. "Սի փարտօ՞ն տեմանտա, փարտո՞ն, իժա տէզ նաթուրատա, քէ տոմադիս էլ բալօ. տելա վեն կան սա էթէոնա, ի քէ խառվաթէս քոնէլ լաքառա տէ դու մատրէ", ծափահարութեան վերջ չկար։

Կրկնեցինք նոյն խաղը ի նպաստ ինծի ևս։ Այդ գիշեր ստացայ վաթսուն ոսկի զուտ հասոյթ։

Ֆասուլեաճեանի խումբը գէշ վիճակի մէջ էր։ Ամէն իրիկուն թատրոնը կը բանային ու կը գոցէին առանց ներկայացման՝ ժողովուրդ չըլլալուն պատճառով։

Վերջապէս Ադրիանուպոլսոյ աղաներէն մէկ քանին եկան տունս, աղաչեցին որ նորէն միանամ Ֆասուլեաճեանի խմբին։ Ես առաջարկեցի երկու ոսկի ամսական։

— Տիկի՛ն, ըսին, ի՞նչ կ'ըսէք։ Սկսնակներուն կուտան այդ գումարը։ Մինթէ ձեզի կը վայլէ՞ այդպիսի պայման դնել։

— Պարոններ, դուք չէք ուզեր զիս հասկընալ։ Մենք որքան որ շահելու ըլլանք, ընկերութիւնը միշտ պարտական պիտի մնայ։ Ֆասուլեաճեան հարիւրին 15 փիէսին համար կը ստանայ, 17ը իրեն, 15 կնոջը, 15 "աքսեսուար"ի, 10 ոսկի ալ Հերանոյշը պիտի ստանայ. իսկ ես ոչինչ կը ստանամ և դեռ պարտական ալ կը մնամ ամսական 10 ոսկի։ Այո՛, աւելի լաւ է երկու ոսկի ամսականով ծառայեմ իրեն մօտ, որպէս զի գէթ ամէն ամիս 10 ոսկի պարտական չմնամ։ Այսպէս՝ չեմ ընդունիր ընկերութիւն, այլ երկու ոսկի ամսական և մէկ նպաստ։

Ֆասուլեաճեան շատ հակառակեցաւ. բայց մարդիկը պնդեցին.

— Ա՛լ ի՞նչ կ'ուզես, չենք հասկնար։ Երկու ոսկի՝ Հրաչեայ, դեռ նա՞զ կ'ընես։

Վերջապէս՝ կրկին միացանք։

Մէկ-երկու շաբաթէն իմ նպաստս էր։ Պիտի ներկայացնէինք "Ենդ և Հաւատարմութիւն"։ Տեղերու գները կրկնապատկուեր էին։ Բազմութիւնը այնքան էր, որ վալի փաշային որդւոյն համար հազիւ կարողացանք աթոռ մը ճարել։ Այդ գիշեր ևս ստացայ 85 ոսկի։

Ֆասուլեաճեան, տեսնելով բազմութիւնը, կատղեցաւ.

— Ահա՛ ձեզի երկու ոսկի ամսական. հիմա դուք հաշուեցէք թէ ամսական ի՞նչ կը ստանայ։

— Եղբա՛յր, միթէ քեզմէ՞ կ'առնէ այդ դրամը, պատասխանեցին. միթէ մեղաւո՞ր է ժողովուրդը որ կը յարգէ իր դերասանուհին։

Յաջորդ շաբթուն, Ֆասուլեաճեանի նպաստն էր։ Սրահը (օթեակներ չունէինք) կէսէն աւելի պարապ էր։ Զիս վիրաւորեց՝ ըսելով.

— Ժողովուրդը կողոպտեցիր։

Տեսայ որ անկարելի էր այդ պարոնի օճախին մէջ գործել. ուստի առի ընտանիքս 1878ի մարտ ամսուն և եկայ Պոլիս հաստատուիլ։

Մայրս հիւանդ էր. քաղցկեղ ունէր. չորս ամիս յետոյ՝ վախճանեցաւ։

Ը.

1877-78ի ձմեռնային "սէզոն"ը սկսանք ընկերութեամբ, Օրթագիւղի թատրոնին մէջ, իմ առաջնորդութեամբս։ Ընկերներս էին Մանուկ Սիսակ, Անտոն Ռշտունի, Մատթէոսեան, Քիթապճեան, Միշէլ Թոսպաթեան, Պէրպէրեան, Այվազեան, Ադամեան, Կիւրեղեան, Վիքթոր Շամտանճեան, Հերանոյշ, ևն.

Բարեսիրաց ընկերութիւնը առանց վարձքի մեծ տուն մը դրաւ մեր տրամադրութեան տակ, ուր կը բնակէինք ամբողջ խմբով։

Ունէինք ներքին կանոնագրութիւն և պահեստի սնտուկ, որու մէջ պահ կը դրուէր մեր շահին հարիւրին տասը։

Այնպիսի սիրով էինք կապուած, որ կարող եմ ըսել թէ ընտանիքի մը անդամները չեն կրնար ըլլալ այնքան սիրով։ Եթէ մէկին կօշիկը մաշած էր, ունեցողը անոր փոխ կուտար։

Ըսի արդէն թէ Օրթագիւղը այրած էր։ Հայեր քիչ էին մնացած հոն, և թատրոնին կէսն իսկ չէին կրնար լեցընել։ Շատ օրեր դերասանները առանց դրամի կը մնային։ Ամէն մէկէն կ'առնէի տասը կամ քսան փարա, ու մէկ կողմէն փորձերը կ'ընէինք, միւս կողմէն դպրոցի պարտէզին մէջ կերակուր կը պատրաստէինք, միջնարարին, կը նստէինք կ'ուտէինք, "Պէ՛հ, պէ՛հ, տղա՛ք ի՞նչ պատուական կերակուր է" ըսելով։

Ադամեանի և իմ նպաստներուն, թէպէտ դիները կրկնապատկուած կ'ըլլային, թատրոնը լեցուն էր։ Ադամեան ընկեր չէր։ Ամէն մէկ երկոյթի համար իրեն կը վճարէինք հարիւր ղրուշ։ Այդ պատճառաւ անոր նպաստին հասոյթը ընկերութեան կը վերաբերէր։

"Սէզօն"ը վերջացաւ։ Պահեստի գումարը բաժնեցինք։ Իւրաքանչիւր անդամի բաւական դրամ ինկաւ, որով կարողացան իրենց պէտքերը հոգալ։ Սիրով զատուեցանք իրարմէ։

Ամուսինս Ադրիանուպոլիս գնաց գործով, իսկ ես տան մէջ նստայ՝ փոքրիկ Պերճիկիս հետ։

1878 յունիսին, Սիսակ եկաւ ինձ մօտ.

— Դուն այսպէ՞ս կը սիրես ընկերներդ։ Մեր նիւթական դրութիւնը շատ դէշ է։ Քեզ համար հաց ես ճարեր, իսկ ընկերներուդ մասին չես մտածեր։

— Ես ի՞նչ կարող եմ ընել, Սիսակ, գործ կայ և չե՞մ գործեր։

— Ի՞նչպէս թէ չկայ, Ռուսներով լեցուն է Ադրիանուպոլիսը։ Այնտեղ կարելի է մեծ գործ տեսնել։

— Տղա՛յ ես։ Անոնցմէ ի՞նչ օգուտ։ Մինթէ մենք կարո՞ղ ենք ռուսերէն ներկայացում տալ։

— Գրէ՛ ամուսնոյդ, թող գտնէ այնպիսի մարդիկ որ կարողանան խումբը վարձելով տանիլ այնտեղ։ Մենք կը ներկայացնենք անպատճառ վոտվիլ մը թուրքերէն լեզուով, որպէս զի կարողանանք թատրոն անունը դնել։ Իսկ մնացեալ մասը կը բաղկանայ շանսոնէթներէ։ Բոլոր ընկերներս կը խնդրեն որ այս գործը գլուխ հանես։

Գրեցի ամուսնոյս։ Կարապետ Ասատուրեան ընկերանալով Կարապետ Բանդիկեանի հետ, եկաւ Պոլիս խումբը վարձելու։ Ինձ հետ կային Աստղիկ, Սիրանոյշ, Գոհարիկ Հիրինեան, Մանուկ Սիսակ, Հոլաս, Զափրաստ, ևն.

Գացինք և սկսանք փորձերը։

Ես դիս չէզոք կը պահէի։ Հացի համար բեմ պիտի ելլէինք։ Փառք չէի սպասեր։

Իմ երգերէս մէկ քանին Աստղիկը առաւ, մէկ քանին՝ Սիրանոյշը։ Ես ալ թուրքերէն լեզուով "Քթէն դժգոհ աղջիկը" պիտի երգէի։

Առաջին իրիկունը ներկայացուցինք վոտվիլ մը մէկ արարուածով։ Ցետոյ բեմ ելաւ Աստղիկը։ Երգեց թէ չէ, ծափահարեցին և ծաղկեփունջ մը նետեցին՝ կուրծքին նշան առնելով։ Ծաղկեփունջը փայտի վրայ էր շինուած, խեղճին կուրծքը ծակեցաւ, և լալով ներս եկաւ։

Ցետոյ ելաւ Սիրանոյշ։ Ծափահարեցին և ծաղկեփունջ մը նետեցին ստամոքսին։ Ան ալ վերջացաւ։

Կարգը իմն էր։ Հալիւ բեմ ելած, ուշադրութիւնս այն կողմն էր ուրկէ կը նետէին ծաղկեփունջը։

Երգս վերջացուցի։ Ծափահարեցին թէ չէ, ծաղկեփունջը եկաւ. բայց ես զգուշացայ, և ինկաւ գետին. ոտքովս զարկի, ու գնաց թաւալեցաւ ժողովրդին մէջ, ուր նստած կային տրակոններու վաշտէն զինուորականներ։ Ասոնք բարկացան ու գանգատեցան.

— Ա՛ս ինչ է. հայ գերասանուհին ոտքով ետ կը դարձընէ մեր նուիրած ծաղկեփունջը։

Ոստիկանապետը, տեսարան գալով, թարգմանի միջոցաւ ըսաւ.

— Տիկի՛ն, ինչո՞ւ կ'ուզէք զինուորականները վիրաւորել։

— Պարո՞ն, ներեցէ՛ք, մտքէս իսկ չեմ անցներ այդպիսի բան մը։ Մեզ մօտ՝ ծաղկեփունջը կուտան իբր գոհունակութեան և յարգանքի նշան. իսկ ձեզ մօտ չեմ գիտեր ի՞նչպէս է։ Ասոնց ձեռքը՝ ծաղկեփունջը նշան առնելու գործիք է։ Տեսէ՛ք, մէկ օրիորդին կուրծքը ծակեցին, միւսին ստամոքսը ցաւցուցին. ես զգուշացայ, և ոտքովս ետ դարձուցի։

— Իրաւունք ունիք, տիկի՛ն, անոնք պարտաւոր էին աւելի քաղաքավար ըլլալ, ըսելով հեռացաւ։

Երկրորդ անգամ բեմ ելլելուս՝ ծաղկեփունջը սուրի ծայրն անցընելով ամենայն քաղաքավարութեամբ նուիրեցին։

Զօրականները կը ցանկային մուտք ունենալ քուլիսները։ Մենք արգիլած էինք։ Վերջապէս ոստիկանապետին խնդրեցինք, և ան ալ երկու պահապան զինուորներ կանգնեցնելով տեսարանի դրան մօտ, արգիլեց անոնց մուտքը։

Մէկ ամիս այս պաշտպանողական դիրքը բռնելէ յետոյ, այլ ևս հանգիստ էինք։ Դուռը պահպանող չկար, բայց ոչ ոք ալ չէր համարձակեր ներս մտնել։

Ես ամէն գիշեր "Քթէն դժգոհ աղջիկը" երգելով ձանձրացուցի ժողովուրդը։ Այնպէս որ բեմ ելած ատենս դիս չէին ծափահարեր։ Սիրանոյշ, Աստղիկ, Գոհարիկ ունէին յաջողութիւն։ Ես անտարբեր էի, բեմ կ'ելլէի որպէս զի թիւը լրանար։

Օր մը ընկերներէս ոմանք գացին գանգատելու թէ՝

— Հրաչեայի անունը չկայ ժողովրդին մէջ։ Ան ամիսը կը ստանայ յիսուն ոսկի, իսկ մենք՝ այսքան։

Բանդիկեան կարապետը՝

— Իրաւունք ունիք, ըսեր էր։

Ես լսեցի, և անմիջապէս հրաժարականս տուի, ըսելով.

— Մինչև տասներկինգ օր կուտամ պայմանաժամ։ Գտէք իմ տեղս ուրիշ մը, որպէս զի ձեր թիւը չպակսի։ Բայց այդ ժամանակամիջոցին՝ երեք՝ օր ինձ կուտաք օրքեսթրը, ես ալ փորձեր կ'ընեմ ու կ'երգեմ քանի մը նոր երգեր։

Ընդունուեցաւ պայմանս։ Իսկոյն ամուսինս ուղարկելով Պոլիս՝ բերել տուի լաւ շանսոնէթներ։ Ռուսերէն թարգմանել տուի "Քթէն դժգոհ աղջիկը", նոյնպէս՝ Շուպէրթի "Մնաս բարով"ը։

Երբ այդ երգերով բեմ ելայ, սաստիկ ծափահարուեցայ։ Կարծէք ժողովուրդը ինձմէ բան մը կը սպասէր և լուռ կենալուս համար նեղացեր էր։

Կրկնելու հրաւէր, ծափահարութիւններ ու անվերջ ծաղկեփունջեր կը տեղային։ Շրջուն գոհարավաճառներ կային թատրոնին մէջ. անոնցմէ գնեցին գեղեցիկ մանեակ մը՝ փոքրիկ գոհարներով զարդարուած և էյադամանդակուռ մատանի մը ու ինձ նուիրեցին։ Վերջապէս՝ ոգեւորութիւնը անչափ էր։

Բանդիկեանը եկաւ ինձմէ ներողութիւն խնդրելու։

— Ո՛չ, ես չեմ կենար այլ ևս, չեմ ալ ուզեր որ դուք իմ պատճառաւս՝ ինձասուիք։ Պարոն մը կ'ուզէ վարձել թատրոնը, տուէք անոր. մտադիր է, բերել Վարդովեանի օփերեթի խումբը։

Այդպէս ալ եղաւ։ Տալով թատրոնը անոնց, մենք դուրս ելանք մէջէն։

Օփերեթի ժամանակ, ժողովուրդը ազատ էր քուլիսներուն մէջ մտնելու։ Դերասանները և ուրիշ ծանօթութիւն հաստատեր էին զօրականներուն հետ, և շատ անգամ միասին կ'ընթրէին։ Օփերեթի խմբին մէջ կային Պէնկլեան, Մնակեան, Թրեանց, Սանճաք, Պէրպէրեան, Են. Դերասանուհիք էին Գարագաշ քոյրեր, Աղաւնի, Զապել, և ուրիշներ։

Պոլիս գառնալով՝ հաստատուեցայ Բերա։

1879ին, Զմշկեան գալով Պոլիս, պայմանաւորուեցաւ Ադամեանի, Աստղիկի և Սիրանոյշի հետ և ուղեւորուեցան Կովկաս։

1880ի փետրուարին աղջիկ մը ևս ունեցանք և կնքեցինք Արմենուհի անուամբ, երկու շաբաթ յետոյ՝ սաստիկ տկարացաւ երեխան։ Անձնուիրաբար կը խնամէր տոքթ. Փեշտիմալճեան, որուն ծանօթացեր էի Բերայի հրդեհի տարին։ Երբ մայրս զիս քիչ մը տկար տեսնէր, անմիջապէս անոր մօտ կը տանէր։ Չկար դերասան մը կամ դերասանուհի մը որ անոր խնամքներէն զուրկ ըլլար։ Շատ շատերուս թէ՛ գիտութեամբ և թէ՛ դրամով օգնած է։ Անոր մահուան դամբանականը Իզմիրլեանը խօսեցաւ, ըսելով "Մարդասէր Քրիստոսի մարդասէր զաւակը մեռաւ այսօր"։ Մեծ բազմութեամբ աղքատներ շրջապատած էին անոր դագաղը և կուլային։

Կայսեր խորհրդատու բժիշկն էր. Բաուֆ փաշայի հետ պիտի երթար գաղղիական ջրերը։ Այդ պատճառաւ յանձնեց ամուսնոյս ամսական երեսուն ոսկի հաշուով դրամ, բաժնելու համար իր աղքատներուն, որոնք արդէն կը ստանան եղեր ամէն ամիս հացի և տան վարձքի համար։ Հարուստ չէր։ Մեռած ժամանակը տեսնուեցաւ թէ դրամ չունէր. իր անձը ապահովագրած էր որպէս զի իր զաւակներուն կարենայ փոքր գումար մը ձգել։

Հայ մարդ էր և հայ բանաստեղծ.

« Մի՛ ասեր երբէ՛ արտով յուսահատ՝
Ի՞նչ կարէ անել միակ մի անհատ..
Լէզէոնի աեղ զինուորք կը կազմեն.

Երբ մէն մի մեղու չի դիմէ ի վարդ,
Թողու հոգն այլու, փեթակն այն աւեն
Տես ի՛նչ կը կազմէ : Հա՛յ երիտասարդ,
Դու կարես լինել հայրենեացդ շէմին
Մի վէմ հիմնական, մի նեցուկ ուժգին.
Դու ֆո հայրենեացդ միայն պէտն հոգա՛.
Լեռանց սուրոսը դու փոքրիկ անհարթ
Մի քար ես միայն, եւ սարերն հրսկայ
Պէտ չունին ֆեզի, հա՛յ երիտասարդ : »

Այո՛, այսպէս կը խօսէր Փէշտիմալճեան, և ինքն ալ ժրաջան մեղուներէն էր :

1880ի աշնան Պ. Աբգար Յովհաննիսեանը եկաւ Պոլիս : Գալով ինձ այցելութեան, ծանօթացանք միմեանց : Շատ լաւ տպաւորութիւն թողուց վրաս : Պայմանաւորուեցաւ Գարագաշ քոյրերու և Մնակեանի հետ ու հեռացաւ Պոլսէն :

1880–81ին Օրթագիւղ "սէզոն" մը ևս անցուցինք ընկերաբար, նոյն սիրով և նոյն պայմաններով, դարձեալ իմ առաջնորդութեամբս : Դերասաններն և դերասանուհիներն էին Թոսպատեան, Սիսակ, Պէրպէրեան, Մատթէոսեան, Ալիքսանեան, Բերկիւլեան, Տիկ. Հէքիմեան, Օր. Հէքիմեան, Պ. Հէքիմեան, Վիքթոր Շամտանճեան, Ահարոն Ատրունի, և ուրիշներ :

Առանց ո և է միջադէպի՝ սիրով վերջացուցինք այդ "սէզոնն" ալ :

Թ.

1881ին Պոլիս եկաւ Իշխան Ամատունին : Եկաւ մեր տունը այցելութեան, և խնդրեց որ ներկայացում մը տամ :

— Բայց ես խումբ չունիմ այժմ, Իշխան, ոչ ալ թատրոն :

— Ոչինչ, տիկին, ես կը վարձեմ թատրոնը, կը փակենք դռները, դուք կը ներկայացնէք ինձ համար :

— Շատ կը սխալիք, Իշխան. ես մասնաւորի դերասանուհի չեմ : Այլ խնդիր է երբ կը յայտարարուի և բազմութիւն չըլլար. վերնատունը միայն կ'ըլլայ երկու կամ երեք հոգի. ատ ինձ համար ժողովուրդ է, և ես պէտք է որ ներկայացնեմ :

— Հապա ի՞նչպէս կարող եմ գիտնալ ձեր ուժը : Ես ի՞նչպէս տանիմ ձեզ :

— Ես չեմ խնդրեր որ զիս տանիք : Տարէք Մարի-Նուարդը :

— Տիկին, խնդրեմ, ճիշտն ըսէք. ո՞րն է ձեր "ամիլուան". մինչև այսօր չկրցի ճիշտ տեղեկութիւն ստանալ այդ մասին : Մէկը կ'ըսէ թէ դուք լաւ "սուպրէթ" էք, միւսը կ'ըսէ թէ դուք "էնժէնիւ-տրամաթիք էք, մէկ ուրիշը թէ առաջին դերեր լաւ կը կատարէք : Այս հարցը ինձ համար հանելուկ մը դարձաւ :

— Իշխա՛ն, թոյլ տուէք ինձ լուծել այդ հանելուկը : "Ամիլուա" չկայ, կարգեր կան, պէտք է այդ կարգերէն անցնիլ.. ես այդ կերպով ալ անցայ այդ կարգերէն : Առաջ կատարեցի փոքրիկ աղջկան, հրեշտակի դեր, էն. յետոյ "սուպրէթ", յետոյ "կրիզէթ", "էնժէնիւ", էնժէնիւ-տրամաթիք". ամենէն վերջը՝ բացարձակ առաջին դեր : Կ'երևայ թէ այն մարդիկ, որոնց տեղեկութիւն էք հարցուցեր, մէկը տեսեր է զիս "սուպրէթ"ի, միւսը՝ էնժէնիւ"ի, ուրիշները՝ առաջին դերի մէջ : Մինչև "էնժէնիւ-տրամաթիք" անցեր եմ : Այժմ, եթէ կայ պակասութիւն, այդ պիտի ըլլայ առաջին դերի մէջ :

Իշխանը ինձ հետ համաձայն չէր, վերջապէս համոզեցի զայն քանի մը օրինակներով.

— Եթէ ես չեմ անցեր այդ դերերը գործնական դպրոցի մէջ, ի՞նչպէս պիտի կարողանամ ներկայացնել "Գամէլիազարդ տիկնոջ" կամ "Քաթէրին Հովուարտ"ի նման խաղեր : Դերասանուհի մը կ'երթայ ուրիշ քաղաք մը, իրը "տէպիւ" կ'ընտրէ այդ կարգի խաղ մը, որուն մէջ ամփոփուած են բոլոր դերերը, ատով կարելի է չափել դերասանուհին, եթէ ան բոլոր կարգերէն չէ անցեր և լոկ տրամաթիք դերասանուհի է, առաջին արարուածէն պիտի սկսի լալ, և դուք չպիտի ստանաք այն՝ ինչ որ պէտք էր ստանայիք : Կան դերասանուհիներ, որոնց կարողութիւնը չի ներեր "սուպրէթ"էն կամ "կրիզէթ"էն անդին անցնիլ, և անոնք կը մնան միշտ այդ դերերուն մէջ :

Վերջապէս՝ առաջարկեց 300 ռուպլի ամսական : Ես ուզեցի յիսուն փոլ իմիէրիալ, այն պայմանաւ որ Մարի-Նուարդին հետ ևս պայմանաւորուի : Իշխանը ինձ հաւատացուց թէ երեք հարիւր ռուպլին կ'ընէ 50 փոլ իմիէրիալ : Ես գաղափար չունէի ռուպլիի արժէքին վրայ, և խաբուեցայ :

— Եթէ այդպէս է, Իշխա՛ն, գրեցէք պայ-

մանագրի մէկ օրինակին մէջ 50 փոլ իմիէրիալ և միւսին մէջ՝ 300 բուպլի։

Պայման էի դրեր որ երեք խաղ իմ իրաւունքս է իբր "տէպիւ" տալ։

Իշխանը մեկնեցաւ։ Ես ալ սկսայ պատրաստութիւն տեսնել։

Այդ միջոցին, Աստղիկ Տիրէքլէր-Արասիի փայտաշէն թատրոնին մէջ պիտի ներկայացնէր Թուլքերէն լեզուաւ "քաթէրին Հովուարտ"։ որուն մասին շատ էի լսեր՝ Կովկաս երթալէն ի վեր։

Տեսայ առաջին արարուածը միայն, և երբ գացի մնաս բարով ըսելու, Աստղիկ ինձ ըսաւ.

— Ակնի՛ւ, Կովկաս կ'երթաս, քեզ անկեղծ խորհուրդ մը տամ. չհամարձակուիս "քաթէրին Հովուարտ" խաղալ։ Ես անով Աստղիկ եղայ։ Դուն սարսափելի կը գլորուիս։

Այս խօսքերը շատ յանդուգն էին։

— Քանի որ այդպէս է, ես ալ կ'երթամ անով քու աստղդ խաւարեցնելու։ Եթէ դուն խնդրէիր այդ խաղը չներկայացնել, ատ ուրիշ բան էր։

Եւ հրաժեշտ տալով հեռացայ։

Երկրորդ օրն իսկ ճամբայ ելանք դէպ ի Կովկաս։ Ինձ հետ էին Գարագաշ քոյրեր, Մարի-Նուարդ, Մնակեան, Սանճաքճեան։

Հասանք Թիֆլիս թէ չէ, արդէն երևցաւ որ պէտք էր հոսանքի հակառակ մաքառիլ։ Ժողովուրդը Աստղի՛կը կ'ուզէ տեսնել, իսկ "կոմիտետ"ը դժգոհութեան պատճառով հեռացուցեր է Աստղիկը և բերէր է Հրաչեան։

Իշխանը կը խնդրէ.

— Զըյլայ որ "Քաթերին Հովուարտ" տաք իբր "տէպիւ"։ Ժողովուրդը արդէն գրգռուած է, բոլորովին կը լարուի ձեզ դէմ։

— Իշխա՜ն, ես պայման եմ կապեր ձեզ հետ, ինչ որ կը ցանկամ՝ այն կուտամ իբր "տէպիւ"։ Ես "Քաթէրին Հովուարտ" պիտի տամ։

— Բայց, տիկի՛ն, մենք բերեր ենք ձեզ Թիֆլիս, ամնական պիտի վճարենք, չենք ցանկար որ դուք տապալուիք։

— Տուէք թուղթ մը, այս բոպէիս կը ստորագրեմ, թող մեր պայմանագրութիւնը չեղեալ համարուի. բայց իբր "տէպիւ" կը ներկայացնեմ "Քաթէրին Հովուարտ" և այնպէս կը հեռանամ։

Իշխանը պայմանը ջնջելու հաւանութիւն չտուաւ, և նշանակեցին "Քաթէրին Հովուարտ"։

Առաջին փորձին, իշխանը նստած կը սպասէ որ ես փորձեմ ինչպէս որ հարկ է, բայց ես կ'արտասանեմ շատ կամաց և կը փորձեմ հանգիստ,

Երկրորդ արարուածին, յանկարծ տեսնեմ դագաղ մը բերին բեմին վրայ։ Իշխանը կը ստիպէ զիս որ անպատճառ մտնեմ դագաղի մէջ և այնպէս փորձեմ։ Ես մերժեցի։

— Բայց, տիկին, չէ կարելի այդպէս, պէտք է տեսնենք թէ ի՞նչպէս դուրս կուգաք դագաղէն կամ թէ ի՞նչպէս կ'արթննաք։

— Իսկ եթէ լաւ դուրս չգամ դագաղէն կամ լաւ չարթննամ, դուք ի՞նչ կարող էք ընել ինձ։

— Մենք ձեզ ցոյց կուտանք թէ ի՞նչպէս պիտի կատարէք։

— Այն ատեն աւելորդ էր գալ Պոլիս։ Այստեղ կան օրիորդներ. կարող էիք զանոնք վարժեցնել և բեմ հանել այս դերերուն մէջ։

Երկրորդ օրը դերասանները լուր բերին թէ առաջին երեք կարգ աթոռները բռնած են այն անձինք որ որոշած էին զիս սուլել։

Կարող էք երևակայել իմ դրութիւնս։ Ժողովուրդը զիս չի ճանչնար։ Շատ կարելի է ամենաառաջին դերասանուհի եմ կամ թէ վերջինը, թող տեսնէ զիս մէկ մը, եթէ արժանի եմ՝ ծափահարէ, իսկ եթէ արժանի եմ սուլուելու՝ թող սուլէ երկրորդ ներկայացման։ Եթէ "Քաթէրին Հովուարտ"ի տեղ ուրիշ խաղ մը ըլլար և զիս համեմատէին եւրոպացի կամ ռուս դերասանուհիներու հետ՝ որոնց մասին գաղափար անգամ չունէի, այն ատեն կարելի է բոլորովին հեռանայի Թիֆլիսէն։ Բայց զիս կը համեմատէին Աստղիկին հետ։ 97ին եկեր էր Աստղիկ Թիֆլիս, և ժողովուրդի սիրելին էր դարձեր, ժողովուրդը չէր ուզեր որ անոր կատարած դերը ուրիշ մը կատարէ։ Արդ, Պոլսոյ խումբին մէջ Աստղիկ կը կատարէր երկրորդ դերեր, իր ամենամեծ դերերն եղեր են "Փարիզու աղքատներ"ուն մէջ Ալիտայի դերը, և "Կողոպտուած փոստ"ի մէջ Ժաննայի դերը. իսկ "Քաթէրին Հովուարտի"ի մէջ՝ Քենետիի դերը. ըստ Կովկասեցւոց՝ Աստղիկ պէտք էր կատարէր Քաթերինի դերը, իսկ ես՝ Քենետիին։ Ես Պոլիս ներկայացուցեր եմ այդ խաղը և կատա-

րեր եմ քաթէրինի դերը. Ստղիկ եթէ ուզեր իմ ըրածս կրկնել, ինչքան ալ նմանցներ. չէր կրնար յաջողիլ իմ ըմբռնած կերպովս խաղալու: Այս մտածումն էր ինձ ուժ տուողը: Եթէ այս մարդիկը, կ'ըսէի ինքնիրենս, չպիտի կարողանան զանազանել մայրը մօրուէն, այն ատեն արդէն աւելորդ էր այստեղ ներկայացում տալ:

— Դուք պէտք է ներկայացումէն առաջ խմբագրատունները երթաք, կ'ըսէին ինձ:

— Ես անաչառ քննադատութիւն կը ցանկամ, "տէպիւ„էս առաջ ո՛չ մէկուն հետ չեմ ուզեր երթալ ծանօթանալ:

Հասաւ ներկայացման իրիկունը: Դերասանուհիները սենեակս գալով ձեռքերնին սրտիս վրայ կը դնէին.

— Զարմանալի՛ բան, կ'ըսէին, այս կինը չի վախնար:

Ճիշտն ըսելով, այդ բոպէին ես կ'արհամարհէի հասարակութիւնը, ինքնիրենս կրկնելով.

— Ի՞նչ գազաններ են ասոնք, զիս սաստիկ կը յուզեն, չեն ձգեր որ հանգիստ դերիս վրայ մտածեմ:

Եթէ քիչ մը վախ զգայի, ահա այն ատեն դատս կորսնցուցած էի. վա՜յ անոր, որ, նոյն իսկ եթէ ունի հանձար իր մէջ, քաջութիւն չզգար կռուելու.

Բեմ ելայ թէ չէ՝ ծափահարեցին:

Առաջին արարուածին վերջը՝ շատ փոքր ծափահարութիւն ստացայ:

Երկրորդ արարուածի գերեզմանի տեսարանին, դագաղէն իջնելով, մինակ, ծունր դրած՝ կ'աղօթէի, լսելով Էթէլվուտի ձայնը որ զիս կը կանչէր. "քաթէրին„. ես ինքզինքս մոռցայ, և փոխանակ ըսելու՝ "ԱյոՔ եմ„, ըսի՝ "Հոս եմ„: Երկրորդ անգամ կանչեց՝ „քաթերի՛ն„. ա՛լ ետ չառի իմ "հոս„ս և կրկնեցի "Հոս եմ„:

Յաջորդ օրուան թերթերէն մէկուն մէջ կար յօդուած մը այսպիսի բովանդակութեամբ. "Այժմ կը հասկնանք թէ պոլսեցին "հոս„ բառը ստեղծեր է միմիայն "քաթէրին Հովուարտ"ի գերեզմանի տեսարանին համար: Այս գերեզմաննոցին մեռելային խորութեանը մէջ ա՛յնքան աղդու էր այդ "հոս„ը:„

Երկրորդ արարուածի վերջը՝ քիչ մը աւելի էր ծափահարութիւնը: Իսկ երրորդին, երբ գահը բարձրանալով լսեցի Էթէլվուտի ձայնը, դարձուցի գլուխս՝ սարսափած՝ դէպ ի այն կողմը ուրկէ ձայնը եկեր էր, ստուգելու համար թէ չե՞մ երազեր, ուրուական չէ՞, ահա այն ատեն լսեցի որ առաջին կարգերուն մէջ կ'ըսէին.

— Մենք չենք կարող սուլել ասիկա, ետ առէք սուլիչները:

Այդ բոպէին՝ ծափահարութիւնը տեւեց առնուազն տասը վայրկեան, ժողովուրդը կը ցանկար որ ես գլուխ տայի: Բայց ես չէի կարող, դիմախաղը կը կորչէր: Իշխանը դրսէն եկաւ քուլիս.

— Տիկի՛ն, կ'ըսէր, գլուխ տուէք, այդպէս չէ կարելի:

Տեսնելով որ ձար չկայ, թողնելով դերս՝ դէպ ի քուլիսը պատասխանեցի.

— Պէտք է ժողովուրդը սովորի. այս միջոցին դերատարը չի կրնար գլուխ տալ, և պէտք չէ զինքը խանգարել:

Դառնալով ժողովրդին՝ սառն գլուխ տուի:

Վարագոյրը փակուելէն յետոյ՝ չեմ գիտեր քանի անգամ զիս կանչեց ժողովուրդը:

Մեր բոլորիս սիրելի Սունդուկեանցը ներս գալով.

— Կեցցէ՛ք, տիկի՛ն, ըսաւ, մենք չէինք կարծեր:

Իշխան Ամատունիին նուիրեցին պսակ մը, ան ալ բեմի վրայ գլուխս անցուց:

Ներկայացումէն յետոյ, ժողովուրդը խըռնուած էր դրան առջև, և "կեցցէ„ներով զիս ճանապարհ դրաւ դէպ ի տուն:

Երկրորդ ներկայացումը ըլլալու էր Մարի-Նուարդին "տէպիւ„, "Սէր առանց համարման„: Մէկ քանի հոգի յոյսերնին դրեր էին այդ ներկայացման վրայ. կ'ուզէին Նուարդով զիս տապալել: Բայց չյաջողեցան: Ժողովուրդ շատ քիչ կար:

Երրորդն էր "Մայրական Սէր„. այդ ներկայացման ստացայ թարգմանչի կողմէն ադամանդեայ ապարանջան:

Ափսո՜ս որ այդ ժամանակուան թերթերէն ոչ մէկը պահած եմ:

Ապա ներկայացուցինք "Քոյրդ Թէրէզա„. Լրագիրները գովեստով խօսեցան իմ մասիս: Բայց այդ գովեստները ինձ համար կարեւորութիւն չունէին. "Հրաշալի կատարեց, հիացուց հանդիսականները„. ևն. ինձ համար

կարևոր էր արհեստական քննադատութիւն։

"Քոյր Թէրէզայ„ի առթիւ Աբյոգանէի մէջ գտայ յօդուած մը ուր կար քննադատութիւն։ Բայց քննադատը սխալ ճանապարհ էր ցոյց տուեր։ Վեր ի վերոյ կը յիշեմ որ գրողը մէն մի տեսարանի համար գովեստներ ընելէ յետոյ՝ „Տիկնոջ խաղի ամէն մէկ պատկերը սալոններ կարող էր զարդարել." ևն. կ'ըսէր՝ "Բայց չենք գիտեր թէ ինչո՞ւ տիկինը գոհեց քոյրը մօրը, մինչդեռ պէտք էր մայրը գոհուէր քրոջ„։

Յաջորդ օրը, Պ. քննադատը իր մէկ ընկերոջ հետ եկան ինձ մօտ։ Բարեւեցին ինձ։ Ես սկսայ ծիծաղիլ։

Պարոնը իր բարեկամին ըսաւ.

— Ես չըսի՞ թէ տիկինը կը ցանկայ որ ոչ մէկ բիծ ցոյց չտան իր խաղի վրայ, և շարունակ գովեն զինքը։

— Ո՛չ, պարո՛ն, պատասխանեցի, ներեցէք ինձ. ես կը սիրեմ քննադատութիւնը, բայց պէտք է լուրջ ըլլայ։ Ես ութն օր, ութը գիշեր խաղը ձեռքս աշխատեր, սիրտս մաշեցուցեր եմ թէ ո՛րը պէտք է գոհուի. ես գիտեմ թէ քոյրը պիտի գոհուի՝ ըստ հեղինակին։ Ահա՛ խաղը։ Հեղինակը գրեր է քոյր Ճուզէփփայի բերանը սա խօսքերը.

— Բայց դուք միանձնուհեաց գայթակղութեան պատճառ կը դառնաք։

— Ես ոչ մէկուն բան մը չեմ ըսած, և անիկա բան մը չգիտեր ուսկից կ'եզրակացնէ այդ խօսքերը։ Եւ վերջապէս եթէ կար դժուար կէտ մը, որու վրայ շատ եմ աշխատեր, այդ այն կէտն էր որ քոյրի դգեստներուն մէջ պէտք էր մայրը պատկերացնել դէմքիս վրայ։ Մայրը յուսմունքէն մահամերձ է. ատիկա խայտառակութիւն է քոյրին համար։ Հապա ինչո՞ւ չի կրնար յաղթել մահուան։ Բնական օրէնքին պէտք է գլուխ ծռենք։ Երբ վախ կը զգանք, առանց ուզելու մեր գոյնը կը փոխուի։

— Ես չեմ լսեր քոյր Ճուզէփփայի խօսքերը։ Այդ միջոցին բարեկամիս մէկը գիս պիւֆէն հրաւիրեց գաւաթ մը քոնեաք խմելու. կ'երևայ թէ այդ պատճառաւ չեմ լսեր։

— Այո՞, դուք մէկ գաւաթ քոնեաքով կը փչէք մեր ութ օրուան աշխատանքին վրայ և կը փճացնէք զայն։ Եթէ կ'ուզէք քննադատութիւն գրել, ուսումնասիրեցէք խաղը այնպէս ինչպէս ես կ'ուսումնասիրեմ։ Դուք, առաջին

ՏԻԿԻՆ ՀՐԱԶԵԱՑ

(Քոյր Թէրէզա. 1882, Կովկաս)

քննադատներէն մէկը, այն ատեն դերասանի չտեսածը կարող կ'ըլլաք տեսնել և ուղղել զանիկա։ Երբէք կարելի չէ քննադատութիւն գրել այդպէս, "Հրաշալի կատարեց, կամ վատ կատարեց„։ Ո՛չ, պէտք է արարուած առ արարուած հետեւիլ և ցոյց տալ դերերու բնաւորութիւնները։ Այն ատեն դերասանն ալ կարող է իմանալ որ դուք գիտակցութեամբ կը գրէք ձեր քննադատութիւնը։

— Բայց, տիկի՛ն, այն ատեն գոնէ երկու օր պէտք է քննադատութիւն մը գրելու համար։

Այն օրէն յետոյ այդ պարոնը ոչ մէկ քննադատութիւն գրեց. զգալով որ ծանր է քննադատի պաշտօնը և պէտք է աշխատի երկու օր։ Երանի՜ յանձն առնէր այդ աշխատութիւնը։ Կարող էր օգտակար ըլլալ դերասաններուս։

Քիչ յետոյ. Իշխան Ամատունիին և իմ յարաբերութիւններս աւրուեցան։ Իշխանը գիս

չէր ճանչցած։ Խնդիրը մինչև այն աստիճան հասաւ որ ժողովուրդը միջամտեց։ Պ. Վահրամ Մուրթաֆեանց, ազնիւ երիտասարդը, որ արդէն քոմիթէին անդամներէն էր, իշխանին պաշտօնն ստանձնեց բեմի վրայ։

Յետոյ դերասանները գրեցին թուղթ մը իշխանին. "Մենք ձեզ հետ պայման կնքեր ենք. եթէ դուք չըլլաք, բոլորս ալ կը դադրինք գործելէ"։

Իշխանը կրկին եկաւ տեսարան։ Բայց իմ իշխանս Պ. Մուրթաֆեանն էր. անկից կը ստանայի ամենականներս և ինչ որ պէտք էր իրեն կ'ըսէի։

Ժ.

Պիտի ներկայացնէինք "Խելքից պատուհաս", որու մէջ պիտի կատարէի օրիորդի մը դերը, զոր նախընթաց տարիները կատարեր էր Սիրանոյշ։ Այդ խաղը մեծ պատրաստութեամբ են հաներ բեմ՝ չեմ գիտեր քանի անգամ փորձելով։ Այժմ այդ դերը ես պիտի կատարէի՝ միայն երկու փորձով։ Բայց այդ օրերը Արմենուհի աղջիկս շատ տկար էր, և բժիշկները յոյս չէին տար։ Զաւակիս քովը նստած, կուլայի։

Յանկարծ տեսայ որ տասը բոպէ ուշացեր եմ փորձին։ Խսկոյն կառք նստայ և հասայ թատրոն, աչքերս ուռած և կարմրած։

Քառորդ ժամ մը հազիւ ուշացեր էի, բայց արդէն առաջին արարուածը փորձեր և երկրորդն էին սկսեր։

Խնդրեցի դադրեցնել փորձը և նորէն սկսիլ։

Պ. Զմշկեան, որուն դեռ ծանօթ չէի, հրամայեց որ շարունակեն փորձը։ Այն ատեն յայտարարեցի թէ՝

— Ես չեմ ներկայացներ եթէ նորէն չփորձէք։ Ուշացեր եմ քառորդ մը. հինգ բոպէն իմ իրաւունքս է, տասը բոպէի համար ալ կարող էք տուգանք նշանակել։

Վերջապէս եկան քոմիթէի անդամներէն մէկ քանի պարոններ և սկսանք փորձել առաջին արարուածէն։

Ներկայացման իրիկունը, իշխանը պատրաստեր էր ապարանջան մը տիկին Զմշկեանի համար։

Երկրորդ թէ երրորդ արարուածը վերջանալուն, ժողովուրդը սաստիկ կը ծափահարէր և կը պոռար՝ "Հրաչեա՛յ"։

Զիս կանչեց Սարդարեանը (բեմայարդար)։ Գացի բեմ, տեսայ Պ. և տիկին Զմշկեանը որ ձեռք ձեռքի բռնած կը սպասեն որ ես գամ, ձեռքէս բռնեն և իմ անուամբս ստանան ապարանջանը։

Այդ որ տեսայ, ետ դարձայ, սենեակիս նիգը դրի և նստայ։ Ժողովուրդը շարունակ կը ծափահարէր, "Հրաչեա՛յ" պոռալով։ Բայց անոնք չէին համարձակէր վարագոյրը բանալ, քանի որ զիս կը կանչէր ժողովուրդը. եթէ ես առանձին բեմ ելլէի, հապա ի՞նչպէս իրենք ստանային ապարանջանը։

Վերջապէս, կէս ժամ այդ դրութեան մէջ կենալով, չկարողացան բեմէն ստանալ ապարանջանը և զայն ստացան իրենց զարդասենեակին մէջ։

Զմշկեան, բարկացած կը պոռար.

— Այո՛, խեղճ ժողովուրդ, երկք հարիւրներ տուէք, ի տես հրաւիրեցէք, պատուեցէք, և անոնք ձեզ անպատուեն։

— Պ. Զմշկեան, մի՛ մոռնաք որ ազգասիրաբար խաբուած ենք։ Ցիսուն փոլ իմպերիալի տեղ կը ստանանք 300 բուպլի։

Նպաստիս նախընթաց օրը, յօդուած մը լոյս տեսաւ "Զմշկեան" ստորագրութեամբ, չեմ յիշեր Արյոգանդի թէ Մեղուի մէջ. "Քանդեցէք, քանդեցէք ձեր տունները, պարոն թատերասէրներ. կը լսենք որ Հրաչեայի նպաստի համար դրամ կը ժողվեն։ Քանդուեցէք, լեցուցէք անոնց գրպանը, որպէս զի վաղը երթալով Պոլիս՝ իրենց հոսոս եղբայրներուն մօտ ծաղրեն ձեզ և ծիծաղեն ձեր վրայ"։

Բայց այդ յօդուածը՝ փոխանակ ինձ վնասելու՝ կարծէք գրգռեց ժողովուրդը։

Ես կ'ուզեմ որքան կարելի է քիչ խօսիմ այդ մասին։ Թատրոնէն մինչև մեր տան առաջ (Սալտատսկի պաղար) յաղթական կամարներով զարդարեր էին։ Թատրոնի օթեակները դափնեայ պսակներու մէջ առնուած էին։ Մեծ ընդունելութիւն, շատ ընծաներ։

Ամենաթանկագին նուէրներէս մէկն էր Գամառ-քաթիպայի հատորը, բէալական ուսումնարանի աշակերտներէն տրուած, ճոխ թաւշեայ

կազմով · կազմի վրայ կար ծիծեռնակ մը ոսկիէ, բերանը բռնած ունէր նամակ մը, որուն վրայ գրուած էր · "Մեր սիրելի տաղանդաւոր դերասանուհւոյն՝ քոյրիկ Հրաչեային„ : Մէջը կար յիսունէ ւելի ուսանողներու ստորագրութիւն :

Նոյնպէս ստացայ ռուս լեզուաւ ոտանաւոր մը՝ Նէվսքի ստորագրութեամբ :

Ստացայ պսակ մը որու մէջտեղէն կախուած էր ոտանաւոր մը ·

« Այսօր ամենս միացանք
Վառուած սիրովն բանարիդ ,
Գոչեցինք ձայնենք միաբերան՝
Կեցցե՛ս դու , զա՛րդ թատերիդ .
Այսօր ամէն մի ուսանող
Առաքելով բեզ « կեցցէ » ,
Իր յարգանաց փոխարէն
Այս պրսակը նուիրէ :
Դէ՛հ , ընդունիր դու մեզնից ,
Թէեւ նեզ է մեր ընծան ,
Բայց բղխած նա մեր սրտից ,
Եւ յարգանաց է նշան »

Տփխիսու կլասիկական գիմնազիոնի հայ ուսանողներից,
1882 , 28 յունվարի : »

Ներկայացումէն յետոյ, զարդարեր էին բազկաթոռ մը դափնեայ տերեւներով, և բերելով բեմի մուտքին առջեւը, կ'ուզէին զիս հոն նստեցնել :

Ես լսելով այդ պատրաստուած բազկաթոռի մասին, հեռացայ հակառակ կողմէն : Այնտեղէն ալ՝ ժողովուրդը, զիս բարձրացնելով, նստեցուց շքեղ բաց կառքի մը մէջ :

Վերջապէս՝ ալք և կանայք, ծերք և մանկունք զիս հասցուցին տունս պէնկալեան կրակներով և "կեցցէ„ներով :

Բարձրացայ պատշգամը : Ժողովուրդը չէր ուզեր ցրուիլ : Ցայտնեցի շնորհակալութիւնս և խնդրեցի որ իրենց մէջէն կազմեն պատգամաւորութիւն, ես ալ զանոնք մէկ մէկ բաժակ թէյով հիւրասիրելով յայտնեմ զգացումներս :

Այն գիշերը՝ յոգնած՝ մէկ կերպ անցուցի :

Շեմ գիտեր որքան ժամանակ էր անցեր, երբ օր մը եկան ինձ ըսելու յառաջիկայ ներկայացման մասին որ Վարդանանց տօնի առթիւ տեղի պիտի ունենար :

— Քեզ պիտի սուլեն, և արդէն կողմնեերով կաղամը, ևն. են պատրաստած՝ Թատրոնին մէջ ծաղկեփունջի տեղ նետելու համար :

Ես զարմացայ թէ ինչո՞ւ զիս այդքան բարձրացուցին և ինչո՞ւ այժմ կ'ուզեն գետին զարնել :

Ամուսինս կը խնդրէր որ գառնանք Պոլիս և չմասնակցիմ այդ ներկայացման :

— Այդ անկարելի է, Անտոն, անոնք զիս կայարանին մէջն ալ կարող են խայտառակել :

Դերասաններէն ոմանք ուրախ էին այդ առթիւ և ժամանակէն առաջ Թատրոն էին գացեր: Ես քիչ մը ուշացայ, և երբ ներս մտայ դռնէն, պատահեցայ Ներքանցքին մէջ ուսանող Պ. Մուրթաֆեանին: Ցաւ յայտնեցի թէ մինչև այդ օրը ուսանողութիւնը չէ պատուեր զիս պատգամաւորութեամբ մը, որպէս զի կարողանայի շնորհակալութիւնս յայտնել ·

— Ի՞նչպէս, տիկի՛ն, մենք լսեր ենք որ դուք մեզ դէմ դժգոհ ըլլալով, ըսեր էք · "Թքեր եմ ուսանողութեան վրայ„ :

— Եւ դուք չէ՞ք կրցեր հասկնալ որ ատիկա թշնամութեամբ սարքուած զրպարտութիւն է : Ատոնք դերասանական էնթրիկներ են :

Ու մենք բարով ըսելով, գացի տեսարան :

Այդ օրը պիտի արտասանէի Գամառ-Քաթիպայէն կտոր մը : Ընկերներս քուլիսներուն մէջ պատրաստուէր էին տեսնելու թէ ուսանողութիւնը ի՞նչպէս զիս պիտի ողջունէր կաղամբներով :

Շեմ գիտեր ի՞նչ հրաշք էր, բեմ ելած ատենս՝ այդ կաղամբները ծաղկի և ուսանողաց գլխարկներու փոխուեցան :

Վերջապէս, ինն ամսուան "սէզօն„ը աւարտեցինք և դարձանք Պոլիս :

Բայց իմ առողջութիւնս լաւ չէր : Արդէն կոկորդէս արիւն էր հոսեր անգամ մը :

Փէշտիմալճեան արգիլեց ինձ բեմ ելլել :

Զրկուեցայ բեմէն, բեմն ալ ինձմէ զրկուեցաւ :

Ո՞վ էր մեղաւորը : Հայ հասարակութի՛ւնը: Եթէ ան ժամանակին զիս ուղարկած ըլլար արտասահման՝ գէթ վեց ամսուան համար, ես շատ շուտ ձեռք պիտի բերէի այն ինչ որ տասը տարուան ուժ սպառելով ինքնօգնութեամբ եմ ձեռք բերեր :

Այո՛, մեր ձեռքէն չեն բռներ, ուզեր են որ ազգասիրաբար քիչ ռոճիկ ընդունինք, բայց ազգասիրաբար չեն նայած մեր զգեստներուն վրայ, պահանջած են որ մեր զգեստները ըլլան

մետաքսէ, որպէս զի անոնց խշրտոցը մինչև հասարակութեան ականջը հասնի։

ԺԱ.

1883 յունուար 30ին ունեցանք մանչ զաւակ մը. Շուշեցի Սահակ Աբրեսեան եղաւ կնքահայր, և անունը դրինք Հայկ։

Այդ թուականէն քանի մը ամիս յետոյ դէպք մը պատահեցաւ։ Թէև այդ դէպքը բեմի հետ կապ չունի, բայց կեանքիս այն յիշատակներէն է որ խորապէս տպաւորուած են սրտիս մէջ։

Գիշեր մը, ամուսինս ու ես փերայէն Ղալաթիա կ'երթայինք՝ Մաղաքեանին տեսութեան։ Բերայի մէջ կան կարմիր լապտերներով զարդարուած տուներ... Պալըք-Փազար փողոցէն անցած ատեննիս, տեսայ որ կարմիր լապտերաւոր տան մը առջև կանգնած էր սիրուն հայ մարդ մը, երկար հասակով, սպիտակ կարճ շալվար հագած, երկար կարմիր գոտին մէջքը պլլած։ Գէսին վրայ "չալմա" ունէր փաթթած, ոտքերը՝ սպիտակ կարճ գուլպաներ որ կարմիր կապերով բռնուած էին։ Հագած էր նոր մուճակ, իսկ ձեռքը բռնած ունէր դաշոյն մը։ Ոտքերովը կը զարնէր այդ դրան, ու կը հայհոյէր.

— Բացէք, կը պոռար, թէ չէ կը կոտրեմ։ Ան իմ ձեռքէս չ'ազատիր։

Ամուսնէս բաժնուելով անմիջապէս անոր մօտը գացի և ձեռքը բռնելով.

— Եղբա՛յր, ըսի, օգնէ՛ ինծի, մինակ եմ, կը վախնամ, Ղալաթիա պիտի երթամ, եղի՛ր ինձ եղբայր և ընկերացիր։

— Ի՞նչպէս, քոյրիկ. դուն լաչէ կ'ընես ինձ հետ խօսելու։ Աչքիս վրայ, ես քեզ կը հասցնեմ տեղդ։

Շարունակելով մեր խօսակցութիւնը, ճամբայ ընկանք։ Ամուսինս ալ մեր ետևէն կուգար։

— Քոյրի՛կ, քանի Պոլիս եմ եկեր, ոչ մէկ հայ կին լաչէ չէ ըրեր հետս ընտանեբար խօսելու, ոչ մէկը ինծի "եղբայր" չէ ըսեր։

— Անունդ ի՞նչ է։

— Պետրոս Ծառադ։

— Քա՛ւ լիցի։ Ո՞րտեղացի ես։

— Մշեցի։

— Ո՞րտեղ կը ծառայես։

— Մաքսատան մշակներէն եմ, և տասնապետ։

— Ամուսնացա՞ծ ես։

— Քոյրիկ, ես քո հոգուն մատաղ. այո՛։ Ես երեսուն տարեկան եմ, տասնհինգ տարիէ ի վեր ամուսնացած։ Տասնըչորս տարի է Պոլիս կը գտնուիմ։

— Պետրոս, եղբա՛յրս, թոյլ տուր ինձ քեզ յանդիմանել. Մուշ գտնուող քրոջս փոխարէն։ Ի՞նչ գործ ունէիր այդ դրան առջև դաշոյնը ձեռքդ։ Ամօթ չէ՞ քեզի։ Ափսոս չէ՞ քրոջս։ Ես մինակ չեմ. ահա՛ ամուսինս. ծանօթացի՛ր։ Ես մօտեցայ, որպէս զի թէ՛ խայտառակութենէ և թէ՛ վտանգէ քեզ ազատեմ։

Պետրոս ծանօթացաւ ամուսնոյս. յետոյ, սկսաւ հեծկլտալով լալ.

— Ներէ՛, քոյրիկ, ներէ՛, եղբայր. եթէ ես ունենայի առաջուց այսպիսի քոյրիկ, չէի փճանար։ Կը խոստանամ վաղը գրել, բերել տալ կինս, վարձել փոքրիկ սենեակ մը և ապրիլ անոր հետ։

— Կեցցե՛ս, Պետրո՛ս, կեցցե՛ս, եղբայրս. իմ՝ տունս Հայոց եկեղեցւոյ փողոցը, թիւ 13. երբ բանի մը պէտք ունենաս, եկուր գտիր զիս։

Հասանք Մաղաքեանի դրան առջև։ Պետրոս քանի մը անգամ ձեռքը կուրծքին դարնելով շնորհակալութիւն յայտնեց և հեռացաւ։

Քիչ ժամանակ յետոյ, Հայերս պիտի ընտրէինք Ամենայն Հայոց Կաթողիկոս։ Այդ ընտրութիւնը 1884ին էր։ Լսեցինք թէ դրամով քուէ կ'առնէին ու կը ծախէին։

Մեր ազգը սահմանադրութիւն ունէր, բայց դեռ ժողովուրդը պատրաստուած չէր իրը սահմանադրական ապրելու։ Այնպէս որ անիկա կրկին կը կառավարուէր ամիրայական ձևով։ Կը բերէին թուղթ մը, "ստորագրէ" այստեղ կ'ըսէին. անոնք ալ առանց գիտնալու թէ ինչ կ'ընեն՝ կը ստորագրէին քուէթուղթը։ Գիտակցութիւն ունեցողներն ալ կը ծախէին իրենց քուէն։

Այո՛, սահմանադրութիւնը մեր ժողովրդի ձեռքը այն էր ինչ որ է սուրը հինգ տարեկան երախայի ձեռքը։

Պէտք էր պատրաստել ժողովուրդը։

Գացի մաքսատուն, գտայ Պետրոսը, հրաւիրեցի մեր տունը. եկաւ։

— Պետրո՛ս, ըսի, դուք միշտ կը կրկնէք

թէ "Մենք Լուսաւորչայ ոչխարներն ենք„, այնպէս չէ՞. լա՛ւ, գիտէք ի՞նչ ըսել է այդ խօսքը՝ այսինքն Լուսաւորչայ զուրպաններն ենք, անոր զօրքին մեռնիմ. թող ան մեզ զուրպան ընէ: Այդ Լուսաւորչայ աթոռը Էջմիածին է: Այնտեղ նստողը Լուսաւորչայ փոխանորդն է: Այժմ թափուր է այն գահը: Երեսփոխանք պիտի ընտրեն այդ գահին արժանաւոր փոխանորդ: Փոխանորդողը կը կոչենք կաթողիկոս:

Յետոյ հասկցուցի իրեն թէ ի՞նչ է սահմանադրութիւնը և թէ ի՞նչ վնասներ կը հասցնէ մեզի մեր ժողովրդին տգիտութիւնը և անտարբերութիւնը դէպ ի քուէտուիը:

— Պետրոս, ըսի ի վերջոյ, ինծի մի՛ հարցներ թէ ո՞վ կ'ուզեմ կաթողիկոս տեսնել: Այժմ գնա՛, ինչպէս որ ես քեզ հասկցուցի, դուն ալ պատրաստէ՛ ընկերներդ: Քեզ տեսնեմ, Պետրոս, գործդ պիտի ձգես, թէ՛ մաքսատան մէջ և թէ՛ պանդոկները՝ պիտի հասկցնես բոլոր ծանօթներուդ, և պիտի պատրաստես գոնոնք: Քուէարկութեան միջոցին, մեծ բազմութեամբ պիտի գտնուիք եկեղեցին, պիտի հսկէք քուէտուփին որպէս զի զեղծում չգործուի:

Հասաւ համագումարի օրը:

Պետրոս եկաւ ինձ ըսելու թէ իրենց փափաքածն էր Ներսէս Վարժապետեան: Իմ ընտրելիս ալ Վարժապետեանն էր:

Գացինք Գում-Քափուի Մայր-եկեղեցին ուր ըլլալու էր քուէարկութիւնը:

Ժողովրդին ընտրեալ դասակարգը հրաւիրուած էր դասը: Երեսփոխանք և եպիսկոպոսունք եկեղեցւոյ մէջտեղը նստած էին, և մեծ շրջանակով մը փակել տուած էին ատեանը:

Եկեղեցւոյ բակը և մուտքին առջև հազարաւոր ժողովուրդ կար: Դուռը չէին բանար:

— Ի՞նչպէս ընենք, կը հարցնէին:

— Կոտրեցէ՛ք դռները, մեր եկեղեցին ժողովրդական է: Անոնք իրաւունք չունին ձեր դէմ դռները փակելու:

Ըսի այս խօսքերը և բարձրացայ գրասեղանի մը վրայ:

Ժողովուրդը սոսկալի կերպով ոգևորուեցաւ և սկսաւ խմբուիլ վանդակափեղկ դրան առջև:

Ժողովուրդը իր մէջէն պատգամաւորութիւն ընտրեց, մտաւ շրջանակին մէջ, և հսկեց քուէտուփին վրայ:

Պետրոս տարաւ յաղթանակը:

Վարժապետեան ընտրուեցաւ:

Այդ առթիւ թղթակցութիւն մը կար Մէջ-Հայաստանի մէջ, ուր ըսուած էր թէ "Կառապաններու սիրուհի կին մը կ'առաջնորդէր ժողովրդին„:

Այդ "կառապաններու սիրուհին„, ես էի:

ԺԲ.

Ամուսինս օսմանեան ծխախոտի բէժին մտաւ ծառայութեան, և տեղափոխուեցանք Գավալա:

Ծովափը կար պանդոկ մը, որու անունն էր Պէլվիւ: Այդ պանդոկը դատարկել տալով՝ հաստատուեցանք այնտեղ:

Երջանիկ էի: Շատ կը սիրէի ամուսինս, ու կը սիրուէի անկից: Զաւակներս առողջ էին: Իմ առողջութիւնս ալ հետզհետէ կը լաւանար:

Գիշեր մը, ամուսինս և ես նստած էինք պատշգամը:

Երկինքը պայծառ էր, և լուսնի տասնեւհինգը: Սպիտակ ծովի սպիտակ ջուրը կարծէք միակտուր գոհարի էր փոխուեր:

Հիացած կը նայէինք հեռուն, շատ հեռուն:

Յանկարծ դարձայ ամուսնոյս շնորհակալութիւն յայտնեցի:

— Այդ ինչո՞ւ համար, Ազնի՛ւ:

— Անոր համար որ ես երջանիկ եմ: Կ'ըսեն թէ երջանիկ մարդոց շապիկը դեղ է դժբաղդներուն, բայց թէ երջանիկ մարդ գտնել կարելի չէ: Ես երջանիկ եմ: Ուրեմն ճարուած է դեղը:

— Դուն քեզ աչք կուտաս: Այնքան կ'ըսես որ վերջապէս դժբաղդութիւն մը կը պատահի:

Ուրախ տրամադրութեամբ քաշուեցանք մեր սենեակը:

Կէս գիշերէն յետոյ, երազիս մէջ տեսայ սիրելի մայրս:

— Ազնի՛ւ, ըսաւ, ինչո՞ւ ես քնացեր. Հայկդ Ռիֆօէ բռնուած է:

Յանկարծ արթնցայ:

— Անտո՛ն, ելիր, մայրիկս երազիս մէջ ինձ ըսաւ թէ Հայկը Ռիֆօէ բռնուած է. ճրագը վառէ՛. երթամ զաւակս տեսնեմ:

— Քնացի՛ր. ի սէր Աստուծոյ, ինչե՞ր կը հնարես:

Գացի քովի սենեակը: Վարձկան կինը կը

խոկալ, իսկ որդիս՝ սաստիկ տաքութեան մէջ՝ կը զառանցէր։

Անտանելի տանջանքներ կրելով մէկ ամիսն անցուցինք։

Բժիշկն ըսաւ.

— Այժմ երախան ազատած է, բայց դեռ թոյլ է։ Այստեղ օդը չ'օգներ, և անիկա կրնայ նորէն տկարանալ ուրիշ հիւանդութեամբ մը։

Ա՛լ մնալ անկարելի էր։ Ցաջորդ առաւօտն իսկ ճամբայ ելանք։

Պոլիս հասայ թէ չէ՝ ես ալ տկարացայ։

Փէշտիմալճեան եկաւ և յայտնեց ինձ թէ ջերմ ունիմ, այն ալ գէշ տեսակէն։

Այդ օրը, ամուսինս, տխուր տրամադրութեամբ երթալով ըէժի, մոռցեր է թանկագին իրերը հետը տանիլ դրամարկղի մէջ պահելու։ Պիտի ճաշէր ուրիշի մօտ։ Մեր տան ծառայողները ինձ հետ Պոլիս էին դարձած։ Նոյն օրն իսկ, Գավալայի մեր տունը գողեր մտնելով տարեր են ամէն բան, թանկագին ապարանջաններ, օղեր, գոհարեղէններ, արծաթեղէններ, ինչպէս և ինձ նուէր տրուած Գամառ-քաթիպան։ Հետս ունէի ժամացոյց մը շղթայով և ապարանջան մը։ Ուրիշ ոչ մէկ յիշատակ չէր մնացեր ժողովրդէն. բոլորը կողոպտեր էին։

Քանի մը ամսէն ամուսինս ալ տեղափոխուեցաւ Պոլիս, և հաստատուեցանք Փերա։

Սառա-Պէրնար 1890ին պիտի գար Պոլիս և պիտի տար շարք մը ներկայացումներ։ Այդ լուրը լսելով, ես զիս գէշ զգացի։ Կը կարծէի թէ ինչպէս Քրիստոս տաճարը մտնելով դուրս էր ըրեր փարիսեցիները, նոյնը պիտի պատահէր ինծի, ես ինքզինքս դուրս պիտի վանէի թատրոնէն։ Շատ էի լսեր Սառայի մասին։ Շատ անգամ պատմեր էին թէ անիկա Մարկրիթ Կոթիէի դերին մէջ, առաջին արարուածին բեմ կ'երևայ՝ գէր երիտասարդ կին, և հետզհետէ նիհարնալով վերջին արարուածին կը դառնայ կմախք մը։

Ես կը զարմանայի որ եթէ ան գեր է, ի՞նչպէս կարող է մարմինը նիհարացնել։ Ինչ որ կ'ըսէին՝ չէի հաւատար։ Շատ կ'ուզէի տեսնել։ Եւ հիմա որ առիթը պիտի ներկայանար, կը վախնայի, զիս գէշ կը զգայի։

Ազդարարութիւնները փակցուցած էին պատերուն վրայ։ Ազդարարութեանց վրայ գծուած էր անճոռնի գլուխ մը, կրնամ ըսել՝ ճիւաղի դէմք մը, տակն ալ գրեր էին Սառա-Պէրնար։

Առաջին ներկայացումն էր "Գամէլիազարդ տիկին"։

Չէի հաւատար աչքերուս։ Այս այն կի՞նն էր որու մասին այնքան լսեր եմ։ Ի՞նչպէս պիտի ներկայացնէր այս կինը, որ իր ճիւաղային դէմքով կարենար հմայել հասարակութիւնը, պատկերացնելով Մարկրիթը։

Վերջապէս հասաւ այդ ցանկալի օրը։

Հինգ ոսկի էր մէկ օթեակի գինը։ Ես շատ նեղ դրութեան մէջ էի։

Ամուսինս ինձ կ'ըսէր.

— Ազնի՛ւ, քսան ոսկի ալ ըլլայ, տոմսակ ա՛ռ։ Ի՞նչ ընենք, տե՛ս անգամ մը։ Դուն մի՛ մտածեր թէ մեր կարողութենէն բարձր է ատիկա։ Ամէն օր չէ։

Բայց ես գիտէի որ իրաւունք չունիմ ծախսել այդ հինգ ոսկին։

Չէի կարող երթալ "փարթեր", քանի որ չէի գիտեր թէ ինծի ի՞նչ կը պատահի։ Կ'ուզէի որ ոչ ոք զիս տեսնէ, և ես ալ ոչ մէկը տեսնեմ։

Ամուսինս գնաց գործին, ես ալ հագուելով ելայ փողոց՝ առանց գիտնալու թէ ո՞ւր կ'երթամ։

Քայլերս ուղղուեր էին դէպի թատրոնի կողմը։

Ցանկարծ աչքիս հանդիպեցաւ պատին փակցուած ազդարարութեան վրայի ուրուականը։

Եկայ թատրոնին առջև անցուդարձ ընել։ Թատրոնի կապալառու Յոյնը, որուն շատ տարիներէ ի վեր ծանօթ էի, ձեռքէս բռնեց.

— Տիկին Հրաչեայ, ի՞նչ ունիք։

— Պարոն Եանքո, պարապ օթեակ կա՞յ։

— Ինչո՞ւ քիչ մը առաջ չըսիք։ Ոչ մէկ հատ մնացած է։ Եթէ կ'ուզէք, ձեզ տամ երկու "ֆոթէյլ"։

Այդ միջոցին, եկաւ պարոն մը գանգատելու թէ իր օթեակը փոխեր են և ուրիշ մը ուղարկեր են։

Կապալառուն, առնելով անոր ձեռքէն չուզած օթեակին տոմսակը, ինձ տուաւ.

— Առէք, տիկին, ըսաւ, թող ան նորէն սպասէ իր ուզած օթեակին։

Ուզեցի վճարել։ Բայց մերժեց.

— Ի՞նչ, ձենէ՞ ալ դրամ ստանանք։

Շնորհակալութիւն յայտնելով հեռացայ։

Ներկայացումը պիտի սկսէր ժամը 8ին։ Բայց ժամը 6ին արդէն օթեակիս խորը նստած էի։

Հասաւ վարագոյրը բարձրանալու րոպէն։ Սառան տեսարան եկաւ։

Աստուա՜ծ իմ, ի՜նչ կը սպասէի, ի՜նչ տեսնեմ։ Ճիւաղ չէ։ Ընդհակառակն շատ համակրելի է և կանոնաւոր դիմագծեր ունի։ Բայց իմ գիտցած Մարկրիթս չէ։ Հմայիչ ձայնով կը խօսի։ Հրաշալի էնժէնիւ տրամաթիք մըն է։ Շատ լաւ ներկայացուց։ Բայց ես մնացի մութը և չկարողացայ լուսաւորուիլ։

Տուն հասանք թէ չէ, առի խաղը, և սկսայ կարդալ։ Ահա այն ատեն լուսաբանուեցաւ հարցը։ Տեսայ որ Սառա-Պէրնար, ջնջելով դերէն երկու նկարագիրը, պահած էր մէկը, այն է տրամաթիքը։ Ըստ հեղինակին, մենք պիտի տեսնէինք առաջին արարուածին մէջ կեղտոտ կինը. եւ այն ատեն պիտի կարողանայինք նկատել տարբերութիւնը երրորդ արարուածի Մարկրիթէն։ Կաթիլ մը սէր գտեց, մաքրեց այդ կեղտոտ կինը, այնպէս որ ա՛լ ոչ մենք կը տեսնենք, ո՛չ ինքը կը ճանչնայ առաջուան Մարկրիթը։ Հեղինակը կ'ըսէ՝ "Սիրէ՛ գանիկա, և ան պիտի մաքրուի ինչպէս բիւրեղ"։

Սառա առաջին արարուածէն էր սկսած երրորդի Մարկրիթը։ Այն ատեն եկայ այն եզրակացութեան թէ տիկին Սառան կ'երևայ թէ չուզելով իր անձը յոգնեցնել, այդպէս էր ըրած, կամ ըսած էր թէ Պոլսեցիք ոչինչ կը հասկնան, անոնց համար աս ալ շատ է։

Բնական է, այս և այն կողմէ հարցումներ կ'ընէին թէ ի՞նչ է իմ կարծիքս։ Բարեկամներէս մէկ երկուքին ըսի կարծիքս.

— Սառա չներկայացուց ամբողջ խաղը։

— Ի՞նչ կ'ըսէք, տիկին, այդ արդէն չափազանց է։

Բայց իմ կարծիքս ոչ ոք կարող էր փոխել։

Սառան տեսած օրէս՝ փոքրիկ անկիւն մըն ալ ինծի տուի Հայոց Թատրոնին մէջ։ Գիտէի այժմ որ փարիսեցի չեմ։

"Գամէլիազարդ տիկին"էն յետոյ, Սառա ներկայացուց "Ատրիէն Լրքուվրէօր"։ Ի՞նչ ըսել այդ անմրման Ատրիէնի համար. առաջին արարուածէն մինչև վերջինը հրաշալի էր. իմ կարծիքովս, քանի Սառա-Պէրնարը կ'ապրի ու կը ներկայացնէ, այդ իր ստեղծագործած Ատրիէնը ուրիշ ոչ ոք պէտք է համարձակի ներկայացնել. իսկ գալով "Թօսքա"ին, երեք արարուած սքանչելի էր, "Ատրիէն"ի հաւասար. բայց չորրորդ ու հինգերորդը անտանելի էր ինձ համար, որովհետև առաջին երեք արարուածները բնական դպրոցին կը պատկանէին, իսկ չորրորդն ու հինգերորդը՝ "էֆէքտ"ներու դպրոցին։

Ժ.Գ.

Պ. Պետրոսեան, Պ. Տօնապետեանի հետ, Պոլիս եկաւ։ Այդ ժամանակ ես կը բնակէի Եօղուրտճի-Զէշմէսի ամարանոցը։ Ինձ մօտ գալով՝ առաջարկեց երթալ Թիֆլիս։ Բայց ես մերժեցի, պատճառ բռնելով տկարութիւնս։ Առաջարկեցի տանիլ տիկին Սիրանոյշը։

Ան ինձ պատասխանեց.

— Ի՞նչ կ'ըսէք, տիկին, ես չեմ կարող տիկին Սիրանոյշը տանիլ առաջին դերերու համար. Թիֆլիսեցին վարժ չէ գանիկա առաջին դերերու մէջ տեսնելու։

Համոզեցի զինքը թէ անկից լաւը կարելի չէ գտնել Պոլսոյ մէջ։

Վերջապէս, Պ. Պետրոսեան հաւանեցաւ տանիլ տիկին Սիրանոյշը։ Բայց Սիրանոյշ չէր ուզեր երթալ։ Ջղերը սաստիկ գրգռուած էին։ Տկար էր։ Համոզեցի Սիրանոյշը ընդունիլ պայմանը։

— Քայքայուած ջիղերդ պիտի վերակենդանանան, եթէ դուն կրկին մտնես ասպարէզ։

Տիկին Սիրանոյշ և Պ. Պետրոսեան գացին Թիֆլիս։

Թէև ես քաշուած էի բեմէն, բայց միշտ կը հետևէի Անթուանի "Ազատ Թատրոն"ին վերաբերեալ քննադատութիւններուն։ Կը կարդայի, կը պատկերացնէի մտքիս առջև մեր բեմը, և կ'ըսէի.

— Ժամանակ է "էֆէքտ"ներու դպրոցը կործանելու։

Գիշեր ցորեկ կը մտածէի այդ մասին, փորձեր ալ կ'ընէի։

1893ին, Պ. Աբրահամեան Թիֆլիսի քոմիթէի կողմէն գալով Պոլիս, ինձ մօտ եկաւ, և խնդրեց անպատճառ իմ մասնակցութիւնս։

Ես նախ ըսի թէ ինձ համար անկարելի է։

Խնդրեց ինձ յայտնել թէ ո՛րքանով կարող էի երթալ։ Պատասխանեցի՝ "Առնուազն 600 ռուպլի ամսական"։

Ան ինձ ոչինչ ըսելով՝ հեռագրեր է Թիֆլիս։ Երբ ստացեր է հեռագրի պատասխանը թէ՝ "Համաձայն ենք", եկաւ անմիջապէս գիս գտաւ.

— Կ'ընդունին ձեր պայմանը, ըսաւ, ուրիշ առարկութիւն ունի՞ք։

Ես շատ գէշ զգացի գիս։ Տասներկու տարի յետոյ, կրկին պիտի կնքէի պայմանագրութիւն։ Կոկորդի տկարութենէս կը վախնայի։ Կոկորդս այդ միջոցին իրաւ է թէ չէր ցաւեր, բայց ձայնս կտրուած էր։

"Դարբնոցապետ"ի Քլարան սկսայ ուսումնասիրել Պոլսէն։

Հազիւ անցեր էր երկու օր, արդէն կոկորդս սկսաւ ցաւիլ։

Ճար չկար, պէտք էր Ճամբայ ելլել։

Պ. Աբրահամեանց Պ. Ալիքսանեանի հետ ալ բանակցութեան էր մտած։

Պ. Ալիքսանեան եկաւ ինձ մօտ.

— Տիկի՛ն, ըսաւ, դուք միշտ եղած էք անկեղծ. կը խնդրեմ, նորէն եղէք, և սա հարցումիս ալ պատասխանեցէք անկեղծութեամբ։ Արդեօք ես ընդունելութիւն կը գտնե՞մ Կովկասի մէջ։

— Դուք շատ զարմանալի հարցում մը կ'ուղղէք։ Ես ի՞նչպէս կարող եմ գիտնալ։

— Ո՛չ, դուք գիտէք իմ կարողութիւնս, ուստի ըսէք։

— Անհաւասիկ ըսեմ։ Եթէ դուք պիտի ներկայացնէք այնպէս ինչպէս այստեղ, վստահ եղիք որ ընդունելութիւն չէք գտներ, բայց դուք դերասան էք, լուրջ կ'ուսումնասիրէք ձեր դերերը ինչպէս որ պէտք է, ես վստահ եմ որ այն ատեն ընդունելութիւն կը գտնէք։ Պ. Մնակեանն ալ այստեղ՝ քանի մը գաւառ կոնծելով բեմ կ'ելլէ ու կը պոռայ կը կանչէ. թուլք հասարակութիւնը գոհ կը մնայ անկից ալ, ձենէ ալ. բայց հոն նոյն բանը չէ. Պ. Մնակեան հոն շատ լաւ կ'ուսումնասիրէ իր դերերը, անիկա հոն լաւ դերասան է։

Այս խօսքիս վրայ, Պ. Ալիքսանեան, վեր կենալով տեղէն.

— Ո՛չ, տիկի՛ն, ըսաւ, չեմ գար։

Շատ ստիպեցի որ գայ. բայց մերժեց։

Պ. և տիկին Պիննէմէճեան, Աբրահամեան և ես՝ երեք գաւակներովս՝ մտանք շոգենաւ։ Խնդրեցի Պ. Պիննէմէճեանէն որ Արմանի դերը բերէ ինձ մօտ, ոլքան որ կարելի է շոգենաւի մէջ՝ օգնեմ իրեն պատրաստելու։

Տիկին Պիննէմէճեան ըսաւ.

— Ո՛չ, պէտք չկայ, Ռուբէ՛ն. ինծի ըսեր են թէ ինչպէս որ գիտէք, այնպէս ալ կը ներկայացնէք։ Ուրիշի խորհուրդ մտիկ մի՛ ըներ։

Ստիպուեցայ ըսել որ իրաւունք ունին, սխալեր եմ։

Հասանք Թիֆլիս։ Պ. Սարդարեան առաջին անգամ եկաւ գիս տեսնելու։ Անոր առաջին խօսքերը եղան.

— Ինչո՞ւ եկաք։ Ինչ անուն որ ունէիք տասներկու տարի առաջ, այժմ պիտի կորսնցընէք։ Լրագիրները արդէն ձեր դէմ են գրած թէ՝ "Մեզ հարկաւոր էր Մնակեան և Ալիքսանեան, մեզ հարկաւոր էր դերացոյց և ոչ Հրաչեայ։ Տասներկու տարի տունը մնալով արդեօք յառաջդիմե՞ց տիկինը որ 300ի տեղ 600 պիտի ստանայ։"

Կարծեմ այդ յօդուածը տպուած էր Աբյուգանի մէջ։ Սաստիկ բարկացայ Սարդարեանին դէմ։

— Եթէ այդպէս է, գիս ինչո՞ւ կը կանչեն։

Այո՛, ինչ անուն որ ունէր թողած Նախկին Հրաչեան, այժմու Հրաչեան պէտք է կործանէ զայն։ Ի՞նչ էր առաջուան Հրաչեան. ի՞նչ էինք բոլորս։ Մենք գիտէինք որ վարագոյրը փակուելու պահուն եթէ գեղեցիկ պատկեր մը ցոյց տանք՝ արդէն պիտի ստանանք ծափահարութիւն։ "Էֆէքտ"ներու դերակատարներ էինք։ Երբեմն կը չինէինք ոսկի օղակներ, բայց իրարու կցելով շղթայ շինել չէինք կարող։ Այո՛, անկցի՛ "էֆէքտ"ներու հին դպրոցը։ Ես պիտի ներկայացնեմ այժմ նոր դպրոցով։

— Բայց քեզ չեն հասկնար, թոյլ կ'ելլաս, "էֆէքտ"ներու քովը կը կորչիս։

— Ի՞նչպէս թէ չեն հասկնար, ժողովուրդը չէ կարող գիտնալ թէ ի՞նչպէս պիտի ներկայացընենք որ լաւ ելլայ. բայց երբ կը տեսնէ լաւը, անմիջապէս կը զանազանէ գէշէն։ Ահա՛, մէկն ալ դուն ես որ գաղափար չունիս իմ ըսած

դպրոցիս վրայ։ Ա՛ռ սա դերը, և յուշէ՛ ինծի։

Սկսայ փորձել մէկ երկու կտոր՝ բնական դպրոցով։ Սարդարեան եկաւ ձեռքերս համբուրելու

— Ներեցէ՛ք, տիկի՛ն։

— Բայց այժմ գնա՛, որովհետև սաստիկ յուզեցիր զիս։ Ի՞նչ քաղաք է սա. որ երբ գամ, անպատճառ պէտք է՞ կռուելով բեմ ելլեմ։

Քօմիթէն ինձ առաջարկեց երկու թէ երեք օրէն բեմ ելլել։ Ես չընդունեցայ։

Պիննէմէճեաններուն առաջարկեց։ Անոնք ընդունեցան "Երկու Որբեր„ու մէջ երևալ։

Ես նորէն դիմեցի տկն. Պիննէմէճեանին.

—Գէշ կ'ընէք, ըսի. կը ներկայացնէք "Երկու Որբերը„ այնպէս ինչպէս Պոլիս։ Ատիկա լաւ չ'ըլլար ձեզ համար։ Աւելի լաւ է չընդունիք և պատրաստուիք լաւ խաղի մը մէջ և յետոյ բեմ ելլէք։

— Եթէ այժմ բեմ չելլենք, ամսական ալ չպիտի ստանանք։

— Բայց, տիկի՛ն, այս միջոցիս՝ գէթ ինձ համար՝ դրամի հարց չկայ, այլ պատուոյ։

Ինչ որ է, ներկայացուցին։

Յաջորդ օրը՝ "Դարբնոցապետ„ի փորձն էր նշանակուած։ Գացի Թատրոն։ Լսեր էի թէ դերասաններն ալ հակառակ են իմ 600 ռուպլի ամսական ստանալուս և պիտի նային ինձ խորթ աչքով։

Զիրերս սաստիկ գրգռուած էին երբ գացի փորձի։ Առաջին արարուածի վերջը, դերասանները սկսան ձեռքս համբուրել։ Ես սաստիկ կուլայի։

— Տիկի՛ն, կ'ըսէին, բայց դուք ինչո՞ւ այսքան տարի տունը նստեր էք։ Գացէք Մոսկուա, Փեթերպուրկ։

Տասներկու տարի յետոյ երբ առաջին անգամ բեմ ելայ, սաստիկ ծափահարեցին, բայց աչքերս մթնցան։ Կրթընեցայ դրան, և առանց ծափահարութիւններուն ուշ դնելու՝ ինքնիրենս ըսի.

— Ինչո՞ւ կը վախնամ Միթէ այս այն տեղը չէ՞ ուր ես ինքզինքս միշտ աւելի ապատ եմ դգացեր քան կեանքի մէջ։

Տրորեցի աչքերս, հաւաքեցի ուժերս և ուղղակի նայեցայ ժողովրդին։ Յետոյ ընդունեցայ ինձ մատուցուած ծաղիկներով լեցուն դամբիւղը։

Այլ ևս դերիս մէջն էի։

Առաջին արարուածէն յետոյ, Պ. Սարդարեանը եկաւ մօտս.

— Շուտ, տիկի՛ն, ըսաւ, ժողովուրդը ձեզ բեմ կը կանչէ։

Ելայ բեմ։

Տեսայ որ ընկերներս էին որ բեմի վրայ կը ծափահարէին զիս մատուցանելով դափնեայ պսակ։

Շնորհակալութեամբ ընդունեցայ։

ՏԻԿԻՆ ՀՐԱՉԵԱՅ
Դամէլիագարդ տիկին, 1882. (կովկաս)

ԺԴ

Նկարիչն իր մահուընէն կամ ասպարէզէ քաշուելէն յետոյ, կը թողու ընդ միշտ իր նկարը հասարակութեան առջև, հեղինակն իր գրքերը, բանաստեղծն իր բանաստեղծութիւնները. իսկ դերասանը ոչինչ կը թողու, բաց ի քանի մը քննադատական յօդուածներէ որոնցմէ

միայն ապագան պիտի կարողանայ գաղափար կազմել դերասանին վրայ։

Թող ներուի ինձ ուրեմն 1893ի շրջանին լրագիրներու հրատարակած յօդուածներէն մէկ քանին այստեղ յիշատակել։

Արյոֆան, թիւ 112, 26 Սեպտ. 1893

"Ամսոյս 24ին, տիկին Հրաչեայ ներկայացրեց արքունական թատրոնում Ժորժ Օնէի "Դարբնոցապետը" դրաման։

"... Գալով դերակատարներին, մենք կը սկսինք տիկին Հրաչեայից։ Բնութիւնը միանգամայն շռայլել է այդ գեղարուեստի քրմուհուն ամէն բան, գեղեցկութիւն, տաղանդ, շնորհ (grâce), մի փոքրիկ բաց միայն թողնելով, և այդ բացը նրա ձայնն է։ Այդ ձայնը բաւական ազդու և գրաւիչ է երբ տիկինը կամացուկ, փաղաքշանօք կամ թէ շշուկով է խօսում։ Իսկ երբ ըստ պահանջման դերին, հարկ է համարում բարձրացնել ձայնը ո և է ոգևորութիւն կամ զայրոյթ արտայայտելու համար, այն ժամանակ ցաւելով պէտք է ասել որ ցանկալի տպաւորութիւնը չէ գործում... Բայց թողնենք ձայնը, ո՞վ է մտածում դրա մասին երբ նայում ես նրա դիմախաղին (ֆիզիոնոմիա) և շարժուածքին։ Մարդ իրօք յափշտակւում է այդ դիմախաղով։ Հազիւ պատահել է մեզ տիեզերահռչակ դերասանների մէջ այդ աստիճանի զգայուն և հոգեբանօրէն խորին կերպով արտայայտուած դիմախաղ։ Յօնքերի, աչքերի, շրթունքների հարիւր տեսակ փոփոխութիւը, բոպէաբար մի զգացումից դէպ ի միւսն անցնելը, մարդկային հոգւոյ զօրեղ յատկութեանց՝ խոր վշտի, բուռն ուրախութեան, վրդովման, զղջման զայրոյթի՝ այդքան կենդանի և սիրուն կերպով արտայայտելու եղանակի ընդունակութիւնը... Բայց այդ դէմք չէ, այլ անեղը աշխարհ է, անհուն ծով է, ուր մարդկային կրքերը ալիքների նման իրար մղում և իրար փշրում են։ Ահա՛ տիկին Հրաչեայ։ Բայց ես շատ թոյլ ուրուագիծ միայն տուի, ասածս հասկանալու համար՝ տեսնել պէտք է։

"Այդ բոլորի վրայ աւելացնելու է և այն, որ տիկինը ոչ միայն կատարելապէս հասկացել, մանրազնին ուսումնասիրել էր իւր դերը, այլ նա միանգամայն տիրապետում էր այդ դերին։ Այո՛, դա ճիշտ Կլարա տը Բօլիօն է, գլխից մինչև ոտքի ծայրը արիստոկրատ, դքսուհի, հպարտ, ինքնահաւան, բայց և վեհանձն, սիրող, ատող, զղջացող, զգայուն։"

Յիլիին

Կովկաս լրագիր (թարգմանութիւն).

"Սեպտեմբերի 24ին տեղի ունեցաւ հայկական խմբի երկրորդ ներկայացումը, Ժորժ Օնէի "Դարբնոցապետ" թատերախաղը, որուն մէջ առաջին անգամ դուրս եկաւ տիկին Հրաչեայ կատարելապէս յաղթական և յաջող։ Տաղանդաւոր և փորձառու դերասանուհին քլարայի դերին մէջ իր մտածուած արտիստիկական խաղով, հարուստ և արտայայտիչ միմիքով, գրաւեց բոլոր հանդիսականներուն ուշադրութիւնը և ամենագեղեցիկ տպաւորութիւն գործեց։ Ափսոս միայն որ տիկնոջ ձայնը նկատելի կերպով ետ կը մնայ՝ իր բոլոր արուեստագիտական ուշագրաւ յատկութիւններէն։ Բոլոր ժամանակ՝ ժողովուրդը բուռն և աղմկալից ծափերով ի տես կը կանչէր զինքը։ Տիկին Հրաչեայ հասարակութենէն ստացաւ գեղեցիկ կողով մը՝ գեղեցիկ ծաղիկներով լեցուն և երկկոյն ժապաւէններով զարդարուած, և դերասանական խմբէն՝ պըսակ մը։"

Թիֆլիսկի լիստոկ (թարգմանութիւն).

"Հինգշաբթի, սեպտեմբեր 24ին, Արքունական թատրոնին մէջ տեղի ունեցաւ տիկին Հրաչեայի բենեֆիսը։ Այս առաջին անգամը չէ որ յարգելի տիկինը բեմ կ'ելլէ Թիֆլիս, այլ այդ եղաւ 1881 Սեպտ. 3ին՝ "Քաթէրին Հովուարտ"ի դերին մէջ։ Եւ դեռ այն ժամանակ Թիֆլիսի ամբողջ հայ մամուլը գտաւ իր մէջ անզուգական ընդունակութիւններու տէր արուեստագիտուհի մը և միաբերան վկայեց իր արտաքին ինչպէս ներքին բարձր ձիրքերը և հարուստ դիմախաղը։ Այս անգամ ալ քլարայի դերը տիկին Հրաչեան կատարեց գեղեցիկ կերպով։ Հայ հասարակութիւնը շատոնց է որ չէ տեսեր բեմի վրայ այսպիսի խելացի արթիստ, որու համար ալ տիկինը վարձատրուեցաւ աղմկալից ծափահարութիւններով և միևնոյն ժամանակ հասարակութենէն ստացաւ ծաղիկներով լի կողով և պսակ։"

Տաքաշ.

Տիկին Հրաչեայի խաղը Կլարայի դերում

բաւական չէ որ վայելչագեղ էր, շնորհալի, նուրբ, նաև վերին աստիճանի բնական և մըտածուած էր։ Ո՞րչափ զգացմունք, ո՞րչափ ճիշտ ըմբռնողութիւն Կլարայի հոգեկան դրութեան։ Մենք տեսնում էինք մի հպարտ գոռոզ էակ, գոռոզ այնքան որքան կարող է լինել մի կին, մենք տեսնում էինք այդ վիրաւորուած գոռոզութեան հետևանքը — ամուսնութիւնը չսիրած մարդու հետ իբր վրէժ սիրած մարդուն ատելութեան դէմ, և ահա մի շարք տանջանքները։

"Ի՞նչպիսի սարսուռ անցաւ Կլարա-Հրաչեայի մարմնով, երբ նա առաջին անգամ մնաց միայնակ ամուսնոյն հետ։ Ո՞րչափ զզուանք կար այդ սարսուռի մէջ. բայց և ո՞րչափ անձնուիրութիւն կար այն "երջանիկ եմ„ի մէջ որ Կլարան արձակում է երբ դրամայի վերջում ձեռք է բերում իւր հաշտութիւնը Ծափահարութիւնների վերջը չկար։ Տիկնոջը նուիրուեց մի շքեղ դամբիւղ մանախմբի կողմից, իսկ առաջին արարուածից յետոյ՝ գեղեցիկ պսակ՝ դերասանական խմբից, որը բեմի վրայ կանգնած՝ ծափահարում էր տիկնոջ (Ժապաւէնի վրայ ոսկեայ տառերով փայլում էր հետևեալ բառերը՝ "Ողջամբ գալուստ Տ. Հրաչեայ 1893 Սեպտ. 24 — ընկերներից„)։

(Շարունակելի) ՀՐԱՉԵԱՑ

ԳԻՒՂԱԿՆԵՐԸ

Լեռներուն մէջ, ընկե՛ր, ուր դուն ծրծեցիր՝
Վաղուան կեանքին համար հրսկայ սերունդիդ՝
Հեքերն ըմբոստ սօսիներու արծիւին՝
Գիւղակներու տրրտո՛ւմ ծաղիկն է փրռուած։
Ո՛չ մէկ ժրպիտ տրւին անոր դալուկին
Արշալոյսներն անոյշ՝ նախկին այգերուն,
Եւ ոչ իսկ հոն հակեցաւ
Մահամերձ հուսկ սարսուռով
Հիւանդագին ճառագայթն
Աշնանահար իրիկուան։
Բարձրացի՛ր, օ՜ն, ժայռին վրրայ, ո՛վ ընկեր,
Աստղերուն տակ դիտելու
Թրշուառութեան վրհուկը ժանտ, աննըւէր
Որ գիւղերուն կուգայ կաթն իր ջամբելու
Դիշերը երբ կ'իջնէ դըժխեմ թևերով։
Եւ նէ իր չար ու չոր մատով կը շաղուէ
Եւ նօթութիւնն և տառապանքն և ծարաւն
Որոնց, բաբէ՜, մութին մէջէն կ'երկարեն
Հացին բարի յոյսով, սէրով պըրկըւած
Իրենց ձեռները վրտիտ
Դըժբախտներու կարաւաններ անհամար։
Ծերունիներն, ա՜հ, կ'անցնին, և լուսինն
Արտասուելով մատեաններն այդ կը կարդայ
Ուր կ'այրի էջը անծանօթ վէպերու։
Անոնք որ արդ կորաքամակ կ'ընթանան
Նրսեմասուեր ճամբաներու երկայնքէն
Երբեմն էին պարմանիները գիւղին
Որ սէրն իրենց՝ աղբիւրներուն պատմեցին,
Եւ գետափին զովութեան մէջ երգեցին
Դաշխուրանին գինին, բարիքը հօտին։
Ու կը քալեն անոնք մինչև իրիկուն
Հովերուն մէջ փետելով վարսն ըսպիտակ
Բըրդգըզեալ հէք ծերութեան...
Մայրերն, ա՜հ՝ կուգան՝ սեղմած կուրծքերնուն
Նօթի՜ շըրթունքը մանկան,
Եւ շունչն իրենց կեանքին, մահուան մէջ բաժնած՝
Գիշերին տակ կ'անիծեն
Պըլպուլին երգն երջանիկ։
Գեղեցկութեան մէջ թաքշամած աղջիկներն
— Սէրերն որոնց խելայեղած կը ճըչեն —
Կը կոխոտեն վարդին կոկոնն՝ որ այգուն
Երազն իրենց պիտ՝ հեգնէր։
Եւ վարը հոն հաւաքուած
Բագինին շուրջ վրհուկին
Կ'աղաղակեն աղօթք մը խուլ ու դըժնէ.
"Գըթա՜, ո՜վ Մայր, ո՜վ Տառապանք պաշտելի.
Մեր արգադիր վերջին նըւէրն ենք բերած
Պատուանդանիդ մարմարն անով պըճնելու.
Ըստաշխն՝ որ հին Պաղեստինի դաշտերէն
Բերին բարի մեր պապերն՝
Անապատի աստուածներուն բոյրերով
Կ'օծէ հաւատքն եռոտանեայդ ոսկիին.
Ըրէ՜ որ, ո՜վ Տառապանք, ո՜վ Մայր գըթած,
Վաղն իսկ ցաթի շառայլ մը գէթ խաբուսիկ
Խաւարին մէջ հիւղերուն։
Ըրէ՜ որ դի՜ւր ըլլայ վերելքը ցաւին
Մինչև վախճանը մեր խաչի սարսուռին։
Զենք ուզեր մենք ժրպիտն, հարսնիքը կեանքին,
— Զըտրրուեցաւ արդէն հէքին հոս խընդալ —
Ա՜հ, տուր մեզի պարգևը գէթ աննըման
Անդորրաւէտ մահերուն։
Դուն թէև քա՛ր՝ մի՛ ըներ սիրտդ ալ քար.
Գըթա՜, ո՜վ Մայր, ո՜վ Տառապանք պաշտելի։„
Եւ պոչիւնին վրրայ հօտին այս թրշուառ
Տառապանքն իսկ—վրհուկ գըթո՜տ, մայրական—

Հակած գըլուին ալևոր
Աստուածօրէն կ'արտասուէ՝...

Բարձրացի՛ր, օ՜ն, ժայռին վըրայ, ո՞վ ընկեր.
Եւ գիւղերուն վըրէժն իբրև մարմնացած՝
Գարշապարիդ երկաթին տակ ջախջախէ
Արդարութեան կուռքն ըստրուկ այդ կըրօնքին։

Դաշտերուն մէջ, ընկե՛ր, ուր դուն ցանեցիր՝
Երգը շուրթիդ և մանիշակն ականջիդ՝
Սերմերն առողջ պայքարներու ակօսին,
Գիւղակներ կան՝ կեանքերու հետ մռայլուած։
Տե՛ս, շամանդաղն, ահա՛, կ'իջնէ, և անձայն
Տանիքներուն վրայ կը մարէ հուսկ կայծերն
Այրիացած ցերեկին։
Եւ ջահրակին մօտ կիներն
Որ օրն ի բուն կը մանէին տըրտո՛ւմ թելն
Իրենց վաղուան պատանքին,
Մութին մէջ խո՜նջ կը հակին։
Շեմին վըրայ ակնարկն հարսին ալ ի զո՜ւր
Արահետին ըստուերներուն կ'երկարի
Ուրկէ փեսան իր այս իրկուն պիտի դար։
Գիւղերն են լուռ. մահը թևերն իր բացած
— Յաւիտեանին չըղջիկն արբշիռ, վատշըուէր —
Հովերուն հետ կ'երգէ սէրերն Հանգիստին,
Ծովափներէն կանչելով նաւն ազազուն
Եւ դաշտերէն՝ ուղևորներն հեռաւոր։
Գիւղերն են լուռ. և ցուրտ նինջին մէջ իրենց
Երազներն իսկ են անգութ։
Օր մը, պայծա՛ռ օր մը, սակայն չէր այսպէս
Երբ դուռներուն մօտ կը բուրէր—ո՞վ խարկանք—
Պըտուղներով ակաղձուն պարկն հոտաւէտ,
Եւ սարսինան ողկոյզներով խայտագին
Կ'երգէր գինին գալիք տօնի օրերուն։
Արդ ամէն ինչ է անցած
Թըռչող թևին պէս արագ։
Թըշուառութիւնն իր երկաթէ մատներով
Ջաղխեց թակոյկը ջուրին
Աղրիւրներու քարին վըրայ պաղպաջուն.
Եւ խամրեցուց պարտէզներու անանուխն
Որուն բոյրով կ'օծանէր
Շինականն իր կիւրակէն։
Կոյսերն հիմա գետակներու եզերքէն
Առանց ծաղկի կ'ընթանան
Ընծելով բախտն որ ի սպառ անժըպիտ
Խեղդեց կարապն ալիքներուն սիրագեղ։
Ո՛վ գիւղակներ, ո՞ր ձեռքն էր, ո՞ր մատն ահեղ
Որ մարեց ձեր արշալոյսն
Եւ տըլընջեան զարթօնքին մէջ ձեզ խըմցուց
Խաւարը ժա՛նտ գիշերին.
Ո՞ր ոճիրն էր սևագէս
Եղունգն որուն ծըլատեց
Սընդուսը ձեր աստղաձամուկ խըլային։
Եւ կը սպասէք շեմին վըրայ աշունին
Ցոյսը՝ յոյսն այն որ քուրձ հագած այսօր իսկ
Կեանքն իր ձեկմէ կը մուրայ...։
Եւ պիտ՝ երբեք չըլլա՞յ որ, ո՞վ գիւղակներ,
Տարիներուն մէջ դուք ծիծաղ մ'ունենաք։
Ա՜հ, քանի՜ դառն եղաւ զըրկանքն՝ որ յաւէտ
Ապագաներն ոչինչ ունին ձեզ տալիք։
Ես ալ հիմա չեմ՝ տեսներ
Կրնձնիներուն տակ բուրեան
Հայրերն որ օր մ'իրենց տըղոց պատմեցին
Գաղտնիքն անմեղ դարերուն։
Ո՞ւր է մարմարը հեթանոս բագինին
Ուր զոհեցին արի՛ արու մեր քաջերն
Աստուածներուն՝ գառնուկներ։
Ա՛լ չեմ լըսեր թեաւոր երգն հովիւին
Եւ ոտնաձայնն՝ այգի գացող աղջըկան։
Բոպիկ ոտքով երբ հիմա ես կը շտապեմ
Պարտէզներէն թարշամ, գետէն տըղմահոս՝
Կը գըթամ ձեզ, ո՞վ գիւղակներ, կը գըթամ
Իրև քերթող զաւակն հիւղի մ'անծանօթ։
Կը զգամ լանջքիս տակ ձեր հոգմերն ահաւոր
Եւ գանկիս մէջ՝ ձեր գիշերներն անլուսին։
Ո՜հ, ե՞րբ էր, ե՞րբ այն ժամանակն ուր եղաւ
Մարդն որ ժըպտուն հիմնելով գիւղն առաջին՝
Ցեցած ժայռին արևոտ՝
Ծովակն ու աստղն ու Աստուածն
Ուզեց խոկալ մենաւոր...
Եկո՛ւր, ընկե՛ր, և դիր վա՛ր ցուպըդ յոգնած.
Զանգակն հեռուն կը կոչկոչի, և գիւղերն
Հեծեծագին կ'աղօթեն.
"Երկի՜նք, որ քեզ հայր և պատճառ կոչեց մարդն
Եւ առ յաւէտ չըմքըռնեց,
Երկի՜նք, լըսէ մեզի վերջին այս պահուն.
Գիշերն իջաւ. հովերը պաղ կը փըչեն։
Անտառներէն կու գայ շըշուկը մահուան
Եւ հիւանդները երանի՜ կը կարդան
Առաւօտեան մեռնողին...։
Երկի՜նք, գըթա՛, կ'ըսեն թէ գութ ես համակ,
Ու այս գիշեր, բարէ՜, դարձեալ նոճիէն
Հիւղերը լոյս պիտի հայցեն գըլխահակ...։
Գութանն առանց եզի, ակօսն է՝ հասկի,
Եւ մերկ է խաչը ճամբուն
Պըսակներէն ուռիի։
Երկի՜նք, Երկի՜նք — ո՞վ սարսափ —
Պատանիներն ալևորած կը քալեն
Եւ Զատիկին հարսերը սև կը հագնին...
Երկի՜նք, լըսէ մեզի վերջին այս պահուն.
Գիշերն իջաւ. հովերը պաղ կը փըչեն...։„

Հանէ սուրդ, ո՛վ ընկեր, շողշող կամարէդ
Եւ նետէ զայն վերն անհունի գաղտնիքին
Շանթովն անոր այրելու տունն Աստուածին...

Ճամբուն վրայ, ընկե՛ր, ուր դու վարդեցիր
Պերճ նրժոյգով դէպ ի մարտերն հայրենի՝
Եւ շողաց սուրդ ու բաշն անոր՝ արևին,
Գիւղակներ կան՝ գերեզմանի պէս տրտում։
Կանգ առ. ու հոս ա՛լ գտիէդ վար նետէ
Նուռը՝ զոր դու լեռնէն անդին կը տանիս
Նշանածիդ սիրատարփ։
Եւ թող տուր ձիդ փունջերուն մէջ կոկոռի
Որ սրմրակներն ու վիճն երթայ լրւալու
Առուակներուն ջուրերով։
Կեցի՛ր, և դիր ձեռքդ ճակտիդ կըրակին
— Վառուած՝ գոլէն միջօրէի տաքերուն... —
Եւ դիտէ ա՛յսպէս գիւղակներն անհատնում
Ճամբորդներու պէս փոշեւոյց, հեռապա՞ռ,
Մինչև Ուխտերը պաշտուած սուրբերուն։
Տընակներ կան, ընկե՛ր, որոնց ըրնակիչն
Օր մը գընաց ու ա՛լ երբեք չըդարձաւ.
Կան ուր սուրերը ժանգոտած կը սպասեն
Արիւններու ձայնատու
Եւ մէջքերու գոտէպինդ...
Կան ուր ծերերն ըսպասումէն ա՛լ յոգնած՝
Գերեզմաններն կը փորեն.
Եւ կան ուր — ո՛վ աստուածներ —
Նօթուլթենէն դիւահարած ծընողքներ
Իրենց զաւակը կ'ուտեն...։
Անոնք ի զո՛ւր անցած տօնին երգեցին
Մատուռներուն մէջ նամէտ
Սուրբ քերթուածներն իրենց խորունկ հոգիին,
Ի զո՛ւր ծընծղան ափերուն մէջ դրպիրին
Ծափեց հաւատքը նախկին.
Չըլըսեցին, չըլըսեցին ըրնակներն
Երկինքներուն անձանաչ։
Թըշուառութի՛ւն, թըշուառութի՛ւն ժանտաժուտ.
Դու որ ծընար առանց սըրտի, և մարդուն
Սըրտին յաւէտ ցանկացիր,
Դու որ գողցար աշխարհներու ծիրանին
Եւ չըկըրցար զայն սերունդիդ հագցընել,
Ա՛յսօր, ահա, կու գամ, կու գամ շանթերով
Այրելու քեզ և հովերուն ցըրուելու։
Ձիներուն տակ դու միայնակ պիտ՝ ընստիս
Եւ ձըմեռէն երբ կայծ մը հուր դու խնդրես՝
Խըրձիթներու վառ օճախէն կարմըրած
Տղաները քեզ պիտ՝ հեգնեն...
Եւ պիտի դուն նախանձայոյզ աչքերով
Տեսնես անցնիլն հովիտէն
Խաշինքներուն կաթնառատ
Եւ սայլերուն բեռնաւոր։
Ու մեծաւոր վաղորդայնին երբ գիւղերն
Երջանկութեան հետ թև ի թև պար բըռնած
Օրհնեն հունձքերը դաշտին՝
Պիտի լըսես շըրշիւնին մէջ ծառերուն
Անէծքն անոնց հըրակէզ
Որ վարսերդ այդ պիտ՝ այրէ,
Թըշուառութի՛ւն. թըշուառութի՛ւն ժանտաժուտ...։

Եկո՛ւր, ընկե՛ր, պահ մ'ալ նայէ գիւղերուն,
Զի շուքն հազիւ ծածկեց բըլուրը կանաչ
Եւ նրշին դեռ չըթօթափեց իր ծաղիկն
Երազին վրայ նրժոյգիդ.
Նայէ՛ ճամբան վերադարձի՝ ուրկէ արդ
Կ'իջնէ գեղջուկը և կ'երգէ ցաւագին.
"Բընութի՛ւն, ուր կ'եռայ աւիշը կեանքին,
Եւ ուր կ'ածի օրերուն յոյսն անըսպառ՝
Տո՛ւր որ առատ ըլլան ջուրերը ուղիին
Ուր պիտի ես այրած ճակատս լըւամ,
Տո՛ւր որ ծաղկին ցանկապատները բոլոր
Որոնց շուքին մէջ պիտ՝ որբեն գարունին
Մայրերն օրոցքն՝ աղջիկը սէրն այգաւէտ։
Բընութի՛ւն, դու որ ծընար մեզ՝ և տըւիր
Աստուածօրէն ինչ որ կար քու մէջ բարի՝
Հիւղին վրայ բեր երգն աղու ծիծառին
Եւ անձրևներն՝ հեքին վրայ ամառին։
Ո՛վ բընութիւն, շատ իսկ տեւեց տառապանքն
Անասելի վիշտերուն։
Ու վաղը դա՞րձեալ պիտ՝ տեսնենք կըրծաբախ՝
Կալորաները առանց խարտեաշ ցորեանին
Եւ մըսուրներն առանց ոսկի վարսակին...
Բընութի՛ւն, դեռ քեզի չեկած՝ տո՛ւր վերջին
Երանութիւնը մարդերուն խոստացուած...։„

Հեծի՛ր նրժոյգդ, ո՛վ ընկեր,
Եւ հեռացիր շուտափոյթ
Թըշուառութեան վայրերէն.
Ճամբուդ վրայ երբ հանդիպիս պալատին
Որ ծոցն իրեն պիտի բանայ հոլարձակ
Ասպետական խոնջէնքիդ,
Կեցի՛ր, և հոն շուրթէդ շանթէ՛ հայհոյանքն
Հերոսօրէն պաշտելի...

ԱՀԱՌՈՆ ՏԱՏՈՒՐԵԱՆ

ԱՐՄԵՆԱԿ ՇԱՀ-ՄՈՒՐԱՏԵԱՆ

Փարիզի Քոնսերվաթուարին այս տարուան մրցման մէջ ամենէն աւելի ուշադրութիւն գրաւողներէն մին Հայ մը եղաւ, Արմենակ Շահ-Մուրատեան։ Ստացաւ Օփերայի մրցման՝ երկրորդ մրցանակ (ոչ մէկ մասնակցողի առաջին մրցանակ չտրուեցաւ այս տարի) եւ Օփերա-քոմիքի՝ առաջին յիշատակութիւն։

Պ. Շահ-Մուրատեան, ընիկ Մշեցի, իր ուսումն ստացած է Թիֆլիս՝ Ներսիսեան վարժարանը, յետոյ՝ իբր ուսուցիչ եւ երգիչ՝ վեց տարի Կարին մնացած. Փարիզ հասաւ չորս ու կէս տարի առաջ եւ Հայոց եկեղեցւոյն դպրապետ կարգուեցաւ։ Իր ցանկութիւնն էր ուսանիլ արեւմտեան երաժշտութիւն ու եւրոպական երգիչներու հոյլին մէջ տեղ մը բռնել. մեծ էր դժուարութիւնը որուն պէտք էր յաղթէր. օժտուած՝ թէնորի հոյակապ ձայնով մը, զմայլելի կերպով կ'երգէր հայ եկեղեցական եղանակները, բայց բառ մը ֆրանսերէն չէր գիտեր եւ չափազանց քիչ գաղափար ունէր եւրոպական երաժշտութեան մասին։ Իր նկարագրի ուժովը, մտքի ճապկութեամբը, լուրջ աշխատասիրութեամբը յաջողեցաւ քանի մը տարուան մէջ յաղթել այդ դժուարութեանց. տարի մը Սքոլա Քանթորում աշակերտելէ յետոյ, ընդունուեցաւ Քոնսերվաթուար, անցեալ տարի ստացաւ երգի առաջին յիշատակութիւն, օփերայի երկրորդ յիշատակութիւն. այս տարի՝ երկրորդ մրցանակ՝ օփերայի։ Թէ՛ անցեալ եւ թէ՛ այս տարի, մամուլը ամենամեծ ներբողներով խօսեցաւ իր մասին, գտնելով իր մէջ Քոնսերվաթուարին լաւագոյն թենորի ձայնը եւ յուսալով իրմէ երգչի փայլուն ապագայ։

Պ. Շահ-Մուրատեան մտադիր է դեռ տարի մը եւս մնալ Քոնսերվաթուար՝ բեմ ելլելէ առաջ աւելի եւս կատարելագործուելու համար։

Մեր սրտագին խնդակցութիւնները կը յայտնենք մեր պատուական ու տաղանդաւոր ազգակցին։

Ստորեւ կը հրատարակենք թարգմանութիւնը ֆրանսական լրագիրներու (անցեալ եւ այս տարուան) բազմաթիւ գնահատումներէն ոմանց.

« Հայազգի թենոր Շահ-Մուրատեան երգեց Ժոլիֆի « Ի զուր Փարաւոն » եղանակը ... իր համբերատար ճիգերուն շնորհիւ, առոգանութիւնը կատարելագործուած է արդէն, բայց արտասանութիւնը դեռ բաւական բարբարոս կը մնայ. բայց ի՞նչ հրաշալի օրկան։ Ի՞նչ հազուագիւտ « թէմպը » եւ ի՞նչ հրապոյր՝ ոլորումներուն մէջ։ Այս գնահատման մէջ ոչինչ կայ չափազանցեալ »։

Քոմոդիա, 2 Յուլիս 1908

« Շահ-Մուրատեան եթէ դեռ չունի որոշ արտասանութիւն մը, կ'երգէ սակայն զգացմամբ. ունի կրակ, փայլ, անկեղծութիւն։ Ժոլիֆի դասական եղանակը հասարակութեան կողմէ մեծ յաջողութիւն գտաւ »։

Կոլոնա, յուլիս, 1908

« Պ. Շահ-Մուրատեան կ'երգէ Կլէ-ի կտորը իր շատ գեղեցիկ ձայնով, իր շատ ուշագրաւ երաժշտական ճաշակով, եւ իր վարպետին լաւ արտաբերելու արուեստովը »։

Քոմոդիա, 1908 յուլ.

« Մրցակիցներէն մին միայն ունի բաւական նշանակելի ձիրքեր որպէս զի կարելի ըլլայ այժմէն իրեն խոստանալ փայլուն ապագայ մը, այն է Պ. Շահ-Մուրատեան, երիտասարդ Հայ մը ... Դեռ պէտք ունի կատարելագործուելու, եւ նախ՝ ազատելու օտարականի հնչումէն. լաւ ըրին առաջին մրցանակ չտալով, բայց երկրորդ մրցանակ տալու էին. պարզ յիշատակութիւն մը զոր տուին՝ անարդարութիւն մըն է, Պ. Շահ-Մուրատեան թենոր մըն է՝ իսկապէս շատ գեղեցիկ, զօրեղ ու ճկուն ձայնով, ուժի կտորներու մէջ՝ կարող փայլ արձակելու, կէս-երանգի հատուածներուն մէջ՝ թաւշայնութեամբ զմայլելի եւ այս երիտասարդը, որուն դաստիարակութիւնը այնքան արագ է կատարուած, կ'երգէ արդէն շատ հասկացողութեամբ եւ արտայայտութեամբ. անհունապէս հաճելի եղաւ Մեհիւլի Ժոլիֆին կտորին մէջ։ Պէտք է դեռ աշխատի, բայց արդէն արուեստագէտ մըն է »։

Էվէր, 1908 յուլիս,

Շահ-Մուրատեան, Հայ մը, որ հակառակ որոշ աստիճանով օտարական հնչումի մը՝ ոչ սակայն չափազանց, ինծի համար այս մրցման լաւագոյն մասնակցողն է։ Ասիկա արուեստագէտ մը պիտի ըլլայ կարծեմ։ Օժտուած՝ թենորի աղուոր ձայնով մը, շատ ազատ, եւ որ քաղցրութիւնը կը միացնէ ամրութեան, շատ սիրուն կերպով երգեց Ժուլֆի զմայլելի եղանակը, ջերմութեամբ, հրապոյրով եւ լաւ զգացմամբ մը։ Լաւ արտասանութիւն, լաւ «ֆրազէ», եւ արդէն՝ ոճի ըմբռնում։

Լը Մենեմրել, յուլիս 1908,

«...Պ. Շահ-Մուրատեանի ձայնը ծաւալուն յատկութիւն մը ունի. Քոնսերվատուարին ամենէն գեղեցիկ թենորի ձայնն է։ Ցամառ աշխատանքով, յաջողեր է զայն զմայլելի կերպով գործածել կարենալու, սրբագրելով՝ որքան որ կարելի էր՝ իր օտարականի հնչումը։ Ահա բնական ձայն մը, լաւ ընդարով, լաւ յղկուած, եւ որ երբեմն կարող է հզօր դառնալ։ Երգիչը կրակոտ է ու թրթռուն։ Կարելի է փափաքիլ որ քիչ մը նուազ ընդարձակ ընէ։... Իբր դերասան, Պ. Շահ-Մուրատեան երբեք ձախաւեր չէ։ Իսկապէս, Պ Պ. Իսնարատոն եւ Բաղնեսով կարող են պարծիլ այն վիճակով ուր բերեր հասուցեր են այս աշակերտը, որուն դաստիարակութիւնը մասնաւորապէս դժուար էր»։

Քոնդոն, 1909, յուլիս

«Ինչո՞ւ մրցանակ չտուին (երգեցողութեան համար) Պ. Շահ-Մուրատեանին, որ հմայիչ թենոր մըն է զմայլելի «թեմպը» ունեցող ձայնով, եւ որ մեծ աշխատանքով բոլորովին ազատած է օտարականի հնչումէն ո եւ է թուլուզցիէ մը աւելի մաքուր արտասանութեամբ, այդ երգիչը, որ ամբոխները յուզելու սահմանուած է, արտայայտեց Ֆրէշլէ-ի դժուար եղանակ մը։ Պատի՛ւ՝ դժբաղդ քաջութեան։

Վիլլի (Քոնդոն)

Պ. Շահ-Մուրատեան, թենորի շատ աղուոր ձայն, կրակոտ Վերթէր մը՝ պարզ ու բնական ձեւերով»։

Լ. Լանդրէն, 1909 յուլիս,

«Պ. Շահ-Մուրատեան, աշակերտ Պ. Իսնարատոնի, աղուոր ձայն, շատ ճաշակով կ'երգէ. արտայայտիչ ու պարզ խաղացուածք, լաւ մրցում՝ Լէոսի դը Լամերմուրի քիչ մը հինցած տեսարանի մը մէջ։»

Լը Սոլէյլ

«Պ. Շահ-Մուրատեան մրցեցաւ Լէոսի դը Լամերմուրի Էտկարի դերին մէջ. իր հնչումը, որ անցեալ տարի ընտրեց իրեն, զարմանալի կերպով բարւոքուած է. իր ձայնը, զմայլելի թեմպրով, աւելի լայն ու ընտիր է դարձած։»

Ֆիկարօ

Օտարականի հնչումը դեռ շատ կը զգացուի Պ. Շահ-Մուրատեանի մօտ, որ հաղուագիւտ ընդարով թենոր մըն է՝ Լէոսի դը Լամերմուրի Էտկարի դերին մէջ։»

Լը Մաթէն

«Հետզհետէ աւելի կը սիրեմ Պ. Շահ-Մուրատեանի ոսկեզօծ ձայնը. ան ինծի կը յիշեցնէ հեռաւոր գիշերներ Վոսփորի վրայ՝ Էյուբի մէջ անցուած. բայց իր խաղացուածքը եւ հնչումը դեռ կրնան կատարելագործուիլ։»

Ռեյնալտօ Հան (Լը Ժուրնալ)

«Երկրորդ մրցանակ ստացաւ Պ. Շահ-Մուրատեան որ եթէ մեղմացնէ իր օտարականի հնչումը, ֆրանսական թենորներուն ամենէն հրապուրիչը պիտի ըլլայ։»

Քամիլլ լը Սեն (Լ. Էքրիր Ռիէլ-Պլէ)

ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Հ. Առսեն Ղազիկեան. — Հայկական Նոր Մատենագիտութիւն եւ Հանրագիտարան հայ կեանքի (Ս. Ղազար, Վենետիկ)։ Գին 7 ֆր. 50։

Այս հսկայ գործին, որու մասին՝ առաջին պրակը ստանալէ յետոյ՝ քանի մը տարի առաջ

«Անահիտ»ի մէջ արդէն յայտնած էի հիացումս, առաջին հատորն է որ լոյս կը տեսնէ (Ա.-Թ.)։ Վենետիկի Մխիթարեանց վանքէն ազգին ընծայուած ամենէն ստուար, ամուր, օգտաշատ աշխատութիւններէն մէկն է ասիկա՝ ապահովապէս։ Հեռու՝ ցարդ հրատարակուած հայերէն գրքերու պարզ ցուցակ մը ըլլալէ, ասիկա իսկապէս «Հանրագիտարան մըն է հայ կեանքի», ինչպէս հեղինակը իրաւամբ անուանած է զայն։ Թափուած աշխատութիւնը ահագին է ու տաժանելի, եւ մեծ գովեստի արժանի է Հ. Ղազիկեան՝ այդ դատանքը յանձն առնելուն համար, որովհետեւ իրեն պէս արուեստագէտ խառնուածքի մը՝ այսպիսի չոր, կարծր ու դժնդակ գործ մը տանտապատիկ աւելի դժուար է ու անտանելի։ Ազգին օգտակար ըլլալու տենչը իրեն տուած է այն բոլոր համբերութիւնը որ անհրաժեշտ է այսպիսի ձեռնարկ մը ի գլուխ հանելու համար։ Ձեռնարկը յաջողած է կատարելապէս։ Հ. Ղազիկեան, աչքէ անցուցած ըլլալով հայերէն գրքերու եւ պարբերականներու ամենամեծ մասը, մեզի կուտայ ոչ միայն այդ բոլոր գրքերուն ու պարբերականներուն ցուցակը, այլ եւ գրքերէն ու պարբերականներու յօդուածներէն կարեւորներուն բովանդակութեան ամփոփումը, հեղինակներուն վրայ տեղեկութիւններ, իւրաքանչիւր գրքի առթիւ երեւցած քննադատական յօդուածներուն շարքը, իւրաքանչիւր հեղինակի օտար լեզուով աշխատութեանց եւ հայերէն գրքերու օտար լեզուով թարգմանութեանց ցուցակը, եւն. եւն։ Գրականութեամբ ու բանաստեղծութեամբ զբաղող ո եւ է Հայու գրասեղանին վրայ անհրաժեշտ զարդ մը եւ զէնք մը պիտի ըլլայ այս գործը։ Ցանկալի է որ մեր գրասէր հասարակութիւնը անտարբեր չմնայ այսպիսի հրատարակութեան մը հանդէպ. ցանկալի է նաեւ որ ամէն անոնք որ գիրք, գրքոյկ կամ պարբերական կը հրատարակեն, օրինակ մը ուղարկեն Հ. Ղազիկեանին, որպէս զի գործին յաջորդ հատորներուն՝ կամ յաւելուածին մէջ անոնք ալ յիշատակուին։

Շահնազարեան, Ֆիրդուսիի, դրուագ Արտաշիր Բաբականի, թարգմանեց Տր. Ց. Թիրեաքեան։ (Նիւ-Եորք) — գին 2 ֆր.

Տոքթ. Թիրեաքեան գեղեցիկ հատորով մը ի լոյս ընծայած է Արտաշիր Բաբականի գրուագին ամբողջական հայերէն թարգմանութիւնը, որուն մէկ ստուար մասը առաջին անգամ երեւցաւ Անահիտի մէջ։ Հատորին սկիզբը՝ թարգմանիչն ունի յառաջաբան մը իր թարգմանութեան լեզուին ու տաղաչափութեան մասին ու կենսագրական մը Ֆիրդուսիի։ Պէտք չունիմ գովելու մեծ արժէքը այդ նուրբ ու ճոխ թարգմանութեան, որ Անահիտի ընթերցողներուն ծանօթ է արդէն։ Զուտ ու ինքնավար աշխարհաբարի անհաշտ կողմնակից, ես անշուշտ չեմ կրնար չցաւիլ որ Տոքթ. Թիրեաքեան գրաբարախառն աշխարհաբարին յարած մնացած ըլլայ այս թարգմանութեան մէջ։ Կ'ըմբռնեմ որ ցանկացած ըլլալով տաղաչափեալ ու յանգաւոր ընել իր թարգմանութիւնը, այդ մեծ դժուարութեան յաղթելու համար՝ գրաբարախառն աշխարհաբարը աւելի նպաստամատոյց էր քան զուտ աշխարհաբարը. բայց լեզուի միութիւնն ու մաքրութիւնը ինծի համար վեր է այս նկատումներէն, եւ պիտի նախընտրէի որ անյանգ ըլլար թարգմանութիւնը, բայց անխառն աշխարհաբար (աւելորդ է ըսել՝ ԷրԿանօրէն անխառն)։ Այս դիտողութիւնը ընելէ յետոյ, հիանալ միայն կը մնայ հաւեղութեանը, պերճութեանը, փափկութեանը վրայ թարգմանչին լեզուին, ու իր քաղցրաղաղնակ, հոսուն, ճարտար տաղաչափութեանը վրայ։ Այս թանկագին աշխատանքը մեր թարգմանական գրականութեան մէջ պիտի մնայ իբրեւ մին ամենէն հզօրներէն ու փայլուններէն։ Ամէն անոնք որ պարսիկ մեծ դիւցազներգակին հոյակապ քերթուածին անծանօթ են, պէտք է փութան Տոքթ. Թիրեաքեանի հայերէն թարգմանութեան մէջ վայելել անոր ներշնչման պարզ ու վեհ ոգին եւ տողերուն ոսկի ներդաշնակութիւնը։

Փարիզ, 3 Յուլիս Ս. Զ.

Le Gérant : Frédéric Macler.
Imprimerie Ch. Nercès, 7, Rue du Pot de Fer—Paris

ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Catalogue des manuscrits arméniens et géorgiens

de la Bibliothèque Nationale

PAR FRÉDÉRIC MACLER

Ernest Leroux, éditeur, 28, rue Bonaparte

ՀԱՅԿԱԿԱՆ ՆՈՐ ՄԱՏԵՆԱԳԻՏՈՒԹԻՒՆ

ԵՒ

ՀԱՆՐԱԳԻՏԱՐԱՆ ՀԱՅ ԿԵԱՆՔԻ

Կազմեց

Հ. ԱՐՍԷՆ ԳԱԶԻԿԵԱՆ

Առաջին պրակ (Ա—Թ)

Վենետիկ. Ս. Ղազար — (գին 7 ֆ. 50)

ԴԱՆԻԷԼ ՎԱՐՈՒԺԱՆ

ՁԱՐԴԸ

(1895—1896)

Գինն է՝ 50 սանթիմ

Դիմել՝ Կուտէմբէրկ գրավաճառանոցին

Թիֆլիս

Ա. ՁՕՊԱՆԵԱՆԻ ԵՐԿԱՍԻՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ

	Գին՝ Ֆրանկ
Les massacres d'Arménie, Préface de G. Clémenceau,	3,50
L'Arménie, son histoire, sa littérature, son rôle en Orient ; introduction d'Anatole France.	1
Zeïtoun, depuis les origines jusqu'à l'insurrection de 1895, par Aghassi ; traduction française : préface de Victor Bérard.	—
Նահապետ Քուչակի դիւանը (*քննական ուսումնասիրութեամբ հրատարակուած*)	3
Poèmes arméniens anciens et modernes, traduction française, précédée d'une étude sur la poésie et l'art arméniens par Gabriel Mourey.	2
Chants populaires arméniens, traduction française avec une introduction et des notes: préface de Paul Adam. (*պսակուած՝ Ֆրանսական Ակադիմիայեն*) :	3,50
Մկրտիչ Պէշիկթաշլեանի բերդուածները ու ճառերը, *ծանօթագրութիւն ներով հրատարակուած,*	4
Les Trouvères arméniens, traduction française, avec une introduction et des notes.	3,50
Մկրտիչ Պէշիկթաշլեանի կեանքը ու գործը, *քննական ուսումնասիրութիւն* .	5
Բերդուածներ	5

ԱՆԱՀԻՏը պիտի հրատարակուի այսուհետեւ կանոնաւորապէս՝ երկու ամիսն անգամ մը։ Ներկայ տարեշրջանը կը սկսի Ապրիլ–Մայիսին եւ պիտի լրանայ 1910ի Մարտ–Ապրիլին։

ԱՆԱՀԻՏը պիտի ունենայ բովանդակութիւն մը այլազան ու բազմակողմանի (գրականութիւն, գեղարուեստ, գիտութիւն, իմաստասիրութիւն, քաղաքական եւ ընկերական հարցեր, եւն.), տիրող բաժինը պիտի կազմեն հայոց հին ու նոր կեանքին, գրականութեան եւ արուեստին վերաբերող գրուածքներ։

ԱՆԱՀԻՏը ունի իր որոշ ուղղութիւնը, որ կը յայտնուի իր տնօրէնին ստորագրութիւնը կրող գրութեանց մէջ, բայց եւ կը հիւրընկալէ գրուածքներ տարբեր ուղղութեամբ, երբ անոնց հեղինակը ունի անկեղծութիւն եւ տաղանդ։

ԱՆԱՀԻՏին աշխատակցիլ խոստացած են ռուսահայ եւ թրքահայ ամենեն հեղինակաւոր գրագէտներէն, ինչպէս եւ մեր նորածիլ տաղանդաւոր գրողներէն, շատերը։

ԱՆԱՀԻՏի ԳՈՐԾԱԿԱԼՆԵՐԸ

Ամերիկայի Միացեալ-Նահանգաց ընդհ. գործակալ
Տր. Արշակ Տէր-Մարկոսեան

Սենթրըլ Ֆոլս	Պարոն	Սահակ Դաւուկեան
Բագու	»	Ստեփան Ալչըճեան
Գանիրէ	»	Արմենակ Ատիլեան
Թաւրիզ	»	Վ. Բժշկեան
Թիֆլիս	»	Ս. Մելքումեան
Տանկասան		Պալենց գրատուն
Կ. Պոլիս		Դաւթեան գործակալութիւն Պալենց գրատուն Արծիւ գրատուն Պ. Տիգրան Տօղրամաճեան
Իզմիր	Պ.	Գրիգոր Յ. Տէր-Մինասեան
Սամսոն	»	Յարութիւն Յ. Տիվանեան, « Արարատեան » գրատուն
Խարբերդ	»	Միհրան Թերխանեան
Ռուսճուգ	»	Գառնիկ Մազմանեան
Ֆիլիպէ	»	Թագւոր Հինդլեան

„ԱՆԱՀԻՏ"Ի ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

ԱՆԱՀԻՏը կը հրատարակուի երկու ամիսն անգամ մը։

Բաժանորդագինն է տարեկան՝ 10 Ֆրանք (Ֆրանսա), 12 Ֆրանք (օտար երկիրներ), 2 տոլար (Ամերիկա), 5 ռուպլի (Ռուսիա)։

Վեցամսեայ՝ 5 Ֆրանք (Ֆրանսա), 6 Ֆրանք (օտար երկիրներ), 1 տոլար (Ամերիկա), 3 ռուպլի (Ռուսիա)։

Ցոդուած եւ բաժանորդագին ղրկել հետեւեալ հասցէին.

A. TCHOBANIAN
17. Rue La Bruyère, **Paris**

Imprimerie Ch. NERCÈS — 7, Rue du Pot de Fer — PARIS.